



# ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- **ՀՀ ՆԱԽԱԳԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎԵԼ Է ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵԹՈՒՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅԵՅԱԿԱՐԳԻ ՆԱԽԱԳԻԾԸ**
- **ԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ**  
Իրավական գլոբալացման պայմաններում
- **ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ**
- **ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԹԱԿՄԱՆ ՀԱՄԱՉԱԹՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ**  
Ազատագրկման դատապարտված անձանց ընտրական իրավունքի լույսով
- **«ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՅ»-Ը ՄԻԶՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐ**



## Ազատ գործելու երաշխիք՝ ամենաբարձր մակարդակով

*«Նախագահին ներկայացվել է «Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագիծը»*



Հայաստանի Հանրապետության Նախագահ **Սերժ Սարգսյանը** 2014թ. ապրիլի 10-ին հանդիպել է ՀՀ Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի անդամների հետ: Հանդիպման ընթացքում հանձնաժողովի նախագահ, ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ **Գագիկ Հարությունյանը** տեղեկացրել է հանրապետության նախագահին, որ ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագծի նախնական տարբերակն արդեն պատրաստ է և տեղադրված է ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայքէջում: Հանձնաժողովի նախագահը ներկայացրել է հայեցակարգի հիմնական դրույթները և դրանցում արժարժված առանցքային խնդիրների լուծման ուղիները:

# №82

Հիմնադիր և հրատարակիչ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՂՈՒԹՅՈՒՆ

# ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՂՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՀՐԱՏԱՐԱՎՎՈՒՄ Է 1997 ԹՎԱԿԱՆԻՑ

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԷՄԻԼ ԲԱԲԱՅԱՆ - նախագահ  
ԳՈՒՐԳԵՆ ԱՄԲԱՐՅԱՆ  
ԳԵՎՈՐԳ ԴԱՆԻԵԼՅԱՆ  
ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ  
ՎԱՅՐԱՄ ՇԱՀԻՆՅԱՆ  
ԳԱՌՆԻԿ ՍԱՖԱՐՅԱՆ  
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍՏԵՓԱՆՅԱՆ

## Գլխավոր խմբագիր՝ Գ. ԱՄԲԱՐՅԱՆ

Խմբագրության հասցեն.  
375010, ք. Երևան, Հանրապետության փ., 85  
Հեռախոս՝ 52-33-76, Ֆաքս՝ 56-76-72  
[www.genproc.am](http://www.genproc.am)  
ISSN 1829-4219

© Համակարգչային շարվածքը,  
ոճը, տառաձևերը և էջադրումը՝  
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ»

Հանձնված է արտադրության՝  
22.04.2014 թ.  
Ֆորմատ՝ 70 X 100 1/16  
Տպաքանակը՝ 500  
Ծավալը՝ 8 պայմ. մամուլ  
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է  
«Պոլիգրաֆ բիզնես» ՍՊԸ տպարանում  
Երևան, Գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2014 թ.

# 2014

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.) ատենախոսությունների հիմնադրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

## **ԱՉԱՏ ԳՈՐԾԵԼՈՒ ԵՐԱՇԽԻՔ՝ ԱՄԵՆԱԲԱՐՉՐ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ**

*«Նախագահին ներկայացվել է*

*«սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագիծը*

(շարունակություն)

Նկատի ունենալով, որ հայեցակարգի նախագիծը նախնական է և պետք է անցնի պարտադիր հանրային քննարկումների փուլ, **Գագիկ Չարությունյանը** նշել է, որ այս փուլում ի սկզբանե նպատակ չի դրվել բոլոր հարցերի վերաբերյալ ձևավորել միասնական և վերջնական դիրքորոշումներ: Դրանցից, մասնավորապես, ընդգծվել են մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների երաշխավորմանը, դատական իշխա-

նության գործառությանը և ինստիտուցիոնալ արդյունավետությանը, ինչպես նաև պետության կառավարման ձևին և ընտրությունների անցկացմանը վերաբերող հարցերը:

Չանրապետության նախագահը շնորհակալություն է հայտնել հանձնաժողովի նախագահին և անդամներին՝ կատարված ծավալուն աշխատանքի համար և իր դիրքորոշումն է հայտնել որոշ առանցքային հարցերի վերաբերյալ:

## **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐ**

# **ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՄՊԱՆԻ ՀԵՏ**

*2014թ. մարտի 10-ին «Ղխավոր դատախազ Գևորգ ԿՈՍՏԱՆՅԱՆՆ ընդունել է Հայաստանում Ռումինիայի արտակարգ և լիազոր դեսպան Սորին ՎԱՍԻԼԵՆԻ (Sorin Vasile) և հյուպատոսական ծառայության ղեկավար Դրագոշ ՉԱՄՍԻՐԵՄԿՈՒԻՆ (Dragosh Zamfirescu): Հանդիպմանը մասնակցել են «Ղխավոր դատախազի տեղակալ Էմիլ ԲԱԲԱՅԱՆը և «Ղխավոր դատախազության միջազգային-իրավական կապերի բաժնի պետ Նելլի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ:*



ՀՀ Ղխավոր դատախազը բարձր գնահատելով տարբեր ոլորտներում հայ-ռումինական հարաբերությունները, դրանց զարգացման, սերտացման գործում կարևորել է նաև երկու պետությունների իրավապահ կառույցների համագործակցությունը: Այդ համատեքստում Գևորգ Կոստանյանը Ռումինիայի նորանշանակ Ղխավոր դատախազին իրավի-րել է Հայաստան:

Դեսպան Սորին Վասիլեի խոսքով, Հայաստանը նկատելի առաջընթաց է արձանագրել խոսքի ազատության, իրավապահ համակարգի աշխատանքի թափանցիկության և արդյունավետության գործում:

ՀՀ Ղխավոր դատախազը վստահեցրել է, որ իրավապահ համակարգի գործունեությունն ուղղված է ապահովելու ՀՀ քաղաքացիների և ՀՀ-ում գտնվող անձանց իրավունքները, ազատությունները, ամրապնդելու օրենքի ուժով պաշտպանված լինելու վստահությունը:

## ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է մահացած զինծառայողների ծնողներին

*«ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանը 2014 թվականի մարտի 6-ին ընդունել է զինվորական ծառայության ընթացքում մահացած զինծառայողներ Ա. Ղազարյանի, Ա. Ավետիսյանի, Տ. Օհանջանյանի և Վ. Մուրադյանի ծնողներին, ինչպես խոստացել էր ընթացիկ տարվա փետրվարի 27-ին կառավարության նիստից հետո նրանց հետ հանդիպման ժամանակ:*

Մոտ հինգ ժամ տևած հանդիպման ընթացքում, մանրամասն քննարկվել են զինծառայողների մահվան փաստի առթիվ հարուցված քրեական գործերով իրականացված քննչական և դատավարական գործողությունները, կատարված աշխատանքը, ձեռք բերված արդյունքները:

ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարությամբ, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, ՀՀ զինվորական դատախազ **Արտավազ Զարուքյանյանը**, ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայության պետ **Արմեն Զարուքյանյանը**, ՀՀ զինվորական դատախազության, ՀՀ ՊՆ քննչական ծառայության ՀԿԳ բաժնում քննվող գործերով բաժնի պետ **Կ. Զարուքյանյանը**, մահացած զինծառայողների ծնողներին հանգամանակից ներկայացրել են քրեական գործերի ընթացքը: ՀՀ գլխավոր դատախազի կողմից, տեղում, տրվել են համապատասխան ցու-

ցումներ, սահմանվել է դրանց կատարման և զեկուցման հստակ ժամանակացույց:

Մահացած զինծառայողների ծնորդներից յուրաքանչյուրին հնարավորություն է ընձեռնվել անհատապես ներկայացնել իրենց որդիների գործերի վերաբերյալ մտահոգությունները, կարծիքները և եզրահանգումները, որոնք, նույնպես ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանի ցուցումով պարտադիր քննարկման առարկա են դարձել նախաքննական մարմնի համար:

ՀՀ գլխավոր դատախազը նշել է, որ ՀՀ դատախազության լիազորությունների շրջանակներում, արվելու է հնարավորը, բացահայտելու կատարված հանցագործությունները, դրանք կատարողներին, մասնակից անձնաց շրջանակը, և ըստ մեղքի ու պատժի անհատականացման սկզբունքի, ենթարկելու քրեական պատասխանատվության:

## ՀՀ գլխավոր դատախազի հանդիպումը Պռոշյան գյուղում

*2014թ. ապրիլի 3-ին ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանը, Կոտայքի մարզի Պռոշյան գյուղում հանդիպել է Պռոշյանի նախկին գյուղապետ, 2013թ. ապրիլի 2-ին սպանված Հրաչ Մուրադյանի ընտանիքի անդամներին և հարազատներին: «ՀՀ գլխավոր դատախազը Հ. Մուրադյանի հարազատներին ներկայացրել է սույն գործով ընթացող նախաքննության, կատարված օպերատիվ-հետախուզական և քննչական աշխատանքների ընթացքը: «ՀՀ գլխավոր դատախազը ներկայացրել է նախաքննական մարմնի կողմից ձեռնարկված միջոցառումները, պարզաբանել է նախաքննության ընթացքի վերաբերյալ հարազատներին հուզող խնդիրները, պատասխանել է նրանց հարցերին:*

Մինչ Հ. Մուրադյանի հարազատների հետ հանդիպումը, ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանը ևս մեկ անգամ եղել է դեպքի վայրում: ՀՀ գլխավոր դատախազը

հանդիպել է նաև Պռոշյան ավանի բնակիչների հետ, նրանց նույնպես բացատրել է նախաքննական մարմնի կատարած աշխատանքները, նաև հորդորել է խնդրո առարկա

դեպքի վեաբերյալ ցանկացած տեղեկատվություն, որը կարող է օգնել նախաքննական մարմնին, ցանկացած փաստ, հանգամանք, ներկայացնել անձամբ իրեն՝ երաշխավորելով պահպանել տեղեկատվություն տրամադրողի թե՛ գաղտնիությունը, թե՛ անվտանգությունը, ՀՀ քրեական օրենսդրությամբ սահմանված բոլոր միջոցներով:

Գևորգ Կոստանյանը բնակչությանը նաև բացատրել է, որ միջպետական ճանապարհը փակելով, երթևեկությունը խոչընդոտելով, վերջիններս ոչ միայն չեն օգնում նախաքննու-

թյանը, այլ ճիշտ հակառակը, առիթ են հանդիսանում, որպեսզի նախաքննական մարմնի աշխատանքը դառնա քաղաքական շահարկումների առարկա, դրանից բխող հետևանքներով: ՀՀ գլխավոր դատախազը բնակիչներին տեղեկացրել է, որ նման գործողությունները առաջ են բերում քրեական և վարչական պատասխանատվություն, և կրկնվելու դեպքում կազմակերպիչների և մասնակիցների նկատմամբ կիրառվելու են օրենքով սահմանված պատասխանատվության միջոցներ:

## **ՀԱՐՈՒՅՎԵԼ Է ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ**

**2014թ. հունվարի 28-ին, ՀՀ քաղաքացի Մամիկոն Խոջոյանը, Տավուշի մարզի Վերին Կարմիր Աղբյուր գյուղի մոտակայքի տեղանքում չկողմնորոշվելու և Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու ու Ադրբեջանի Հանրապետության տարածք անցնելով, գերևարվել էր Ադրբեջանի զինված ուժերի զինծառայողների կողմից, և գերության մեջ մնացել մինչև սույն թվականի մարտի 4-ը:**

Մամիկոն Խոջոյանին, գերի լինելու ընթացքում, ազգային, կրոնական ատելության և կրոնական մոլեռանդության շարժառիթներով դրդված մի խումբ անհայտ անձանց կողմից, առանձին դաժանությամբ, դիտավորությամբ նրա առողջությանը պատճառվել է կյանքին վտանգ սպառնացող ծանր մարմնական վնասվածքներ: Դեպքի առթիվ, 06.03.2014թ., ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ, 6-րդ և 12-րդ կետերով, ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության ՀԿԳ քննության վարչությունում հարուցվել է քրեական գործ, և կատարվում է նախաքննություն:

Քրեական գործով, նախաքննության ընթացքում, գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, Ադրբեջանի Հանրապետությունում դատավարական գործողությունների կատարման և իրավական օգնության անհրաժեշտության դեպքում, նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության և Ադրբեջա-

նի Հանրապետության միջև բացակայում են դիվանագիտական հարաբերությունները, ՀՀ գլխավոր դատախազությունը, «Քրեական գործերով վարույթների փոխանցման մասին» 15.05.1972թ., «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» 20.04.1959թ. եվրոպական կոնվենցիաների, «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավահարաբերությունների մասին» 1993 թ. հունվարի 22-ի Մինսկի Կոնվենցիայի և միջազգային այլ պայմանագրերի շրջանակներում, հանդես կգա համապատասխան միջնորդություններով:

Նկատի ունենալով Մամիկոն Խոջոյանի դեպքի հասարակական նշանակությունը, հիշյալ քրեական գործով տեղեկատվության ստուգված և համակողմանի տրամադրման կարևորությունը, ՀՀ գլխավոր դատախազությունը, անհրաժեշտության դեպքում կիրառելի հանրությանը և միջազգային կազմակերպություններին:



# ՀԱՄԱՏԵՂ ՍԵՄԻՆԱՐ

«ՀՀ գլխավոր դատախազության և ՌԴ գլխավոր դատախազության միջև 2012-2013թթ. համագործակցության ծրագրի» 4-րդ կետի շրջանակներում, 2014թ. ապրիլի 14-ից 16-ը Երևանում կայացել է «Քրեական գործերով իրավական օգնություն տրամադրելիս միջազգային համագործակցության ժամանակակից ձևերը և մեթոդները, հանձնման և քրեական գործերով իրավական օգնության բնագավառում Հայաստանի և Ռուսաստանի դատախազությունների միջև համագործակցությունը» թեմայով սեմինար: ՀՀ գլխավոր դատախազության ներկայացուցիչները ՌԴ գլխավոր դատախազության գործընկերների հետ քննարկել են փոխադարձ հետաքրքրություններ կայացնող մի շարք հարցեր, նախանշել դրանց լուծման ուղիները:

## ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒ ԸՐԱՄԱՆՈՎ

# ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԳԻԱՅԻ ՆՈՐ ԿԱԶՄԸ

*Հայաստանի Հանրապետության  
գլխավոր դատախազի հրամանով հաստատվել է  
ՀՀ դատախազության կոլեգիայի կազմը.*

### Կոլեգիայի նախագահ՝

Գևորգ Սուրիկի ԿՈՍՏԱՆՅԱՆ      ՀՀ գլխավոր դատախազ

### Կոլեգիայի անդամներ՝

- Արամ Արծվիի ԹԱՄԱԶՅԱՆ      ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ
- Հրաչյա Վարդադատի ԲԱԴԱԼՅԱՆ      ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ
- Էմիլ Մարտիրոսի ԲԱԲԱՅԱՆ      ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ
- Արտավազդ Յենրիկի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ      ՀՀ զինվորական դատախազ,  
ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ
- Միհրան Վարդգեսի ՄԻՆԱՍՅԱՆ      ՀՀ գլխավոր դատախազության  
վերահսկողական-տեսչական վարչության պետ
- Արթուր Ստեփանի ԳՈՅՈՒՆՅԱՆ      ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային  
անվտանգության մարմիններում քննվող  
և կիրքերհանցագործությունների գործերով  
վարչության պետ
- Վահե Վարուժանի ՌԱՖԱՅԵԼՅԱՆ      ՀՀ գլխավոր դատախազության պետական  
շահերի պաշտպանության վարչության պետ
- Վահագն Ժուլվերի ՄՈՒՐԱԴՅԱՆ      ՀՀ գլխավոր դատախազության հատկապես  
կարևոր գործերով քննության վարչության պետ
- Արտակ Գագիկի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ      ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության  
և նախաքննության օրինականության նկատմամբ  
հսկողության վարչության պետ
- Արթուր Սարգսի ԴԱՎԹՅԱՆ      Երևան քաղաքի դատախազ
- Րաֆֆի Վարանցովի ԱՍԼԱՆՅԱՆ      Շիրակի մարզի դատախազ
- Վազգեն Ռուբենի ՌՇՏՈՒՆԻ      Կոտայքի մարզի դատախազ



ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ  
ՀՀ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Արդարադատության առաջին դասի խորհրդական **Միհրան Վարդգեսի ՄԻՆԱՍՅԱՆԸ** նշանակվել է ՀՀ գլխավոր դատախազության վերահսկողական-տեսչական վարչության պետ:

Արդարադատության երկրորդ դասի պետական խորհրդական **Տիգրան Վլադիմիրի ՍԱՐԳՍՅԱՆԸ** նշանակվել է Տավուշի մարզի դատախազ՝ ազատվելով Գորիսի կայազորի զինվորական դատախազի պաշտոնից:

Արդարադատության երկրորդ դասի խորհրդական **Նաիրի Զենրիկի ԱՎԱԳՅԱՆԸ** նշանակվել է Վայոց ձորի մարզի դատախազ՝ ազատվելով Երևան քաղաքի դատախազության ավագ դատախազի պաշտոնից:

Արդարադատության առաջին դասի խորհրդական **Հայկ Զիվանի ԱՍԼԱՆՅԱՆԸ** նշանակվել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազ, ազատվելով Երևանի կայազորի զինվորական դատախազի պաշտոնից:

Արդարադատության առաջին դասի խորհրդական **Սասուն Մեերի ԽԱՉԱՏՐՅԱՆԸ** նշանակվել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների դատախազ, ազատվելով Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազի պաշտոնից:

Երևան քաղաքի Աջափնյակ և Դավիթաշեն վարչական շրջանների դատախազ է նշանակվել արդարադատության երկրորդ դասի խորհրդական **Սիսակ Ժորժիկի ԽԱՉԱՏՐՅԱՆԸ**, ազատվելով Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազի պաշտոնից:

Արդարադատության առաջին դասի խորհրդական **Հարություն Շնավոնի ՍԱՐԳՍՅԱՆԸ** նշանակվել է Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազ, ազատվելով Երևան քաղաքի Աջափնյակ և Դավիթաշեն վարչական շրջանների դատախազի պաշտոնից:

Արդարադատության երկրորդ դասի խորհրդական **Հովսեփ Անդրանիկի ՍԱՐԳՍՅԱՆԸ** նշանակվել է Երևանի կայազորի զինվորական դատախազ, ազատվելով Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների դատախազի պաշտոնից:

Արդարադատության երկրորդ դասի խորհրդական **Արթուր Աշոտի ԶԱՔԱՐՅԱՆԸ** նշանակվել է Լոռու կայազորի զինվորական դատախազ՝ ազատվելով Մույն կայազորի դատախազի տեղակալի պաշտոնից:

Արդարադատության երկրորդ դասի խորհրդական **Մարգար Սարիբեկի ԲԱԴԿԱՍՏՅԱՆԸ** նշանակվել է Գորիսի կայազորի զինվորական դատախազ:



# ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԱՆՁԸ՝ ՈՐՊԵՍ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՈՒՔՅԵԿՏ



*Երևանի պետական համալսարանի  
հրատարակչությունը լույս է ընծայել  
«Ղախավոր դատաստագրության  
իրավական ապահովման և  
եվրասիատեգրման բաժնի պետ,  
իրավաբանական գիտությունների  
թեկնածու Թամարա Շաքարյանի  
«Իրավաբանական անձը որպես  
վարչական պատասխանատվության  
սուբյեկտ» մենագրությունը:*

Մենագրությունը հայրենական իրավագիտության մեջ առաջին անգամ անդրադառնում է իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի, դրա առավել խնդրահարույց հիմնախնդիրների վերհանման և դրանք լուծելու ուղիների մշակման առնչությամբ համալիր ու ամբողջական հետազոտմանը: Նրանում լուսաբանվում են իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի պատմաիրավական նախադրյալները և զարգացման փուլերը, իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության հիմնախնդրի ներպետական օրենսդրական բարեփոխումների վրա միջազգային իրավական չափանիշների ազդեցությունը՝ միջազգային փորձի խորը և համակողմանի ուսումնասիրության ու վերլուծության հիման վրա, իրավաբանական անձի՝ որպես վարչական պատասխանատվության սուբյեկտի,

առանձնահատկությունները, իրավաբանական անձանց նկատմամբ նշանակվող վարչական տույժերի տեսակների առանձնահատկությունները, արդի ժամանակաշրջանում իրականացվող դատաիրավական բարեփոխումների խորապատկերում իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ինստիտուտի հայեցակարգային հիմնադրույթները ու բարելավման ուղիները:

Գիրքը նախատեսված է բուհերի իրավաբանական ֆակուլտետների ուսանողների, դասախոսների, գիտական գործունեությամբ զբաղվող անձանց համար: Կարող է օգտակար լինել նաև վարչական իրավունքի հարցերով հետաքրքրվող ընթերցողների լայն շրջանակի, ինչպես նաև իրավաստեղծ գործունեությանը մասնակցող մասնագետներին, իրավակիրառ տարբեր մարմիններին, մասնավորապես՝ վարչական մարմինների աշխատողներին:

# «ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ» ԴԱՍԸՆԹԱՅԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴԸ

## Վահագն ԱՎԱԳՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչության ավագ դատախազ, իրավաբանական գիտությունների թեկնածու

*Իրավագիտական ուղղվածության բոլոր բարձրագույն ուսումնական հաստատություններում և ֆակուլտետներում (բաժիններում) ուսումնասիրվում է «ՀՀ քրեական դատավարություն» դասընթացը. այն դասվում է հիմնական դասընթացների շարքը: ՀՀ քրեական դատավարության դասավանդումը նպատակ ունի ուսանողներին (ունկնդիրներին) ուսուցանել քրեական գործերով վարույթի բոլոր փուլերը, այսինքն՝ գիտելիք հաղորդել քրեական գործերի քննության կարգի մասին: Ըստ այդմ՝ «ՀՀ քրեական դատավարություն» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում է քրեական գործերի քննությանը և լուծմանն ուղղված դատարանների, հետաքննության, նախաքննության և դատախազության մարմինների գործունեությունը<sup>1</sup>: «ՀՀ քրեական դատավարություն» դասընթացի նպատակն է՝ ուսանողների (ունկնդիրների) մոտ ձևավորել ոչ միայն հիմնարար տեսական գիտելիքներ, այլև գործնական հմտություններ, քանզի իմացությունը ձանաչողական և կիրառական գործընթացների զուգորդման, տեսության ու պրակտիկայի համադրման արդյունք է:*

Գործնական պարապմունքներն ուսումնական միասնական գործընթացի բաղկացուցիչ մասն են կազմում: Լինելով ուսումնական աշխատանքի կարևոր բաղադրիչը՝ գործնական պարապմունքների իրականացումն ուղղված է ուսանողների (ունկնդիրների) կողմից ՀՀ քրեական դատավարության տեսության և իրավակիրառ պրակտիկայի տիրապետմանը: Գործնական պարապմունքների անմիջական նպատակը՝ ՀՀ քրեական դատավարության իրավունքի (տեսության) խորացված ուսումնասիրումն ու դրա հիման վրա դատաքննչա-

կան աշխատանքի (պրակտիկայի) սկզբնական հմտություններ ձեռք բերելն է<sup>2</sup>: Տեսության ու պրակտիկայի սերտ կապը մեծապես նպաստում է իրավակիրառ գործունեությանն ունկնդիրների (ուսանողների) պատրաստմանը: Գործնական պարապմունքներն ունկնդիրներին օգնում են կիրառելու ՀՀ քրեական դատավարության օրենսդրությունը: Գործնական պարապմունքների միջոցով պրակտիկ, իրավակիրառ գործունեությանը ունկնդիրների պատրաստումը պետք է իրականացվի ըստ որոշակի պլանի: Նախևառաջ

<sup>1</sup> «ՀՀ քրեական դատավարություն» առարկայի դասավանդման, ուսուցման դասանյութի, թեմաների և գրականության ընտրության, դասախոսությունների պլանավորման ու իրականացման, ինչպես նաև դասընթացի ուսումնասիրմանն ուղղված ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ տես **Վ. Ավագյան**, «ՀՀ քրեական դատավարություն» առարկայի դասավանդման մեթոդը և ծրագիրը: Ուսումնամեթոդական ուղեցույց: Եր., Իրավունք, 2011, էջ 5-70:

<sup>2</sup> Ընդամին, գործնական աշխատանքի հեռահար նպատակն է՝ իրավական համակարգի համալրումը մասնագիտորեն պատրաստված կադրերով, ապագա պետական ծառայողների մասնագիտական գիտելիքների և իրավակիրառական հմտությունների հետևողական ձևավորումն ու կատարելագործումը, ժամանակակից գիտատեխնիկական և դասավանդման մեթոդների կիրառմամբ կրթական ծրագրերի արդյունավետ իրականացումը, դրանով իսկ իրավական համակարգի կատարելագործմանը նպաստելը:

հարկավոր է նախապատրաստել ունկնդիրներին բուն գործնական պարապմունքներին՝ ապահովելու համար նրանց արդյունավետ մասնակցությունն ուսումնական աշխատանքի այս ձևին: Դրա համար կարևոր է ունկնդիրների մոտ ձևավորել՝ ա) վերլուծաբար մտածելու, բ) իրենց մտքերը, եզրահանգումներն ու հետևությունները գրավոր գրագետ շարադրելու, գ) իրավաբանական հատուկ տերմինաբանություն կիրառելու, դ) դատավարական փաստաթղթեր կազմելու հմտություններ և կարողություններ:

Բացի այդ, գործնական պարապմունքներին ունկնդիրների պատշաճ նախապատրաստման և ակտիվ մասնակցության ապահովման համար պահանջվում է նրանց կողմից համապատասխան մասնագիտական գրականության, օրենսդրության ու դատական պրակտիկայի (այդ թվում՝ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների, սահմանադրական դատարանի վերաբերելի որոշումների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտերի հիմնավորումների) շարունակական ուսումնասիրում: Ընդ որում, դասավանդման գործընթացում անհրաժեշտ է պարբերաբար ունկնդիրների ուշադրությունը հրավիրել նորմատիվ և գիտական աղբյուրների վրա՝ հորդորելով մշտապես հետամուտ լինել օրենսդրական փոփոխություններին, նախադեպային իրավունքի զարգացումներին:

Ընդ որում, դատական և դատախազական

պրակտիկային կարելի է ծանոթանալ՝

- դատարանների և դատախազության համապատասխան համացանցային կայքերից,
- ՀՀ դատախազության կոլեգիայի որոշումներից, ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների հրամաններից, հանձնարարականներից և ցուցումներից<sup>3</sup>,
- ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներից<sup>4</sup>,
- Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներից<sup>5</sup>,
- Դատարանների նախագահների խորհրդի որոշումներից<sup>6</sup>:

Քրեական դատավարության տեսության ու իրավակիրառ պրակտիկայի ճիշտ և միակերպ կիրառման համար կարևոր նշանակություն ունեն նաև սահմանադրական դատարանի համապատասխան որոշումները<sup>7</sup>:

Վերոնշյալ փաստաթղթերը սահմանված կարգով հրապարակվում են «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» և համապատասխան ժողովածուներում:

Գործնական պարապմունքներն իրականացվում են հետևյալ հիմնական եղանակներով՝ խնդիրներ լուծելու, դատավարական փաստաթղթեր կազմելու ձևերով, ինչպես նաև սեմինարների միջոցով: Անդրադառնանք գործնական աշխատանքի իրականացման նշված եղանակներին ավելի հանգամանորեն:

**1. Հարկ է նշել, որ առավելապես տեսա-**

<sup>3</sup> Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի և նրա տեղակալների հրամանների, հանձնարարականների և ցուցումների ժողովածու: Եր., Տիգրան Մեծ, 2008:

<sup>4</sup> ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու, 2006-2008թթ.: Հ.1: Եր., Ասողիկ, 2009: ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու, 2009թ., 2010թ. 1-ին կիսամյակ: Հ. 2: Եր., ՀՀ դատական դեպարտամենտ, 2010: ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու, 2010թ. 2-րդ կիսամյակ, 2011թ.: Հ. 3: Եր., Ամարաս, 2012: ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու, 2012թ.: Հ. 4: Եր., ՀՀ վճռաբեկ դատարան, 2013:

<sup>5</sup> Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Վճիռների ժողովածու: Գիրք 1: Եր., Նոյյան տապան, 2002: Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Վճիռների ժողովածու: Գիրք 2: Եր., Նոյյան տապան, 2003: Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Վճիռների ժողովածու: Գիրք 3: Եր., Անտարես, 2004: Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Վճիռների ժողովածու: Գիրք 4: Եր., Անտարես, 2006: Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Վճիռների ժողովածու: Գիրք 5: Եր., Անտարես, 2008: Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Վճիռների ժողովածու: Գիրք 6: Եր., Անտարես, 2008: Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Վճիռների ժողովածու: Գիրք 7: Եր., Անտարես, 2010:

<sup>6</sup> Տես Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի որոշումների ժողովածու 1-46: Եր. 2001:

<sup>7</sup> Տես, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի 24.07.2007թ. ՍԴՈ-710, 08.10.2008թ. ՍԴՈ-765, 21.10.2008թ. ՍԴՈ-767, 28.07.2009թ. ՍԴՈ-818, 12.09.2009թ. ՍԴՈ-827, 13.10.2009թ. ՍԴՈ-833, 14.01.2010թ. ՍԴՈ-851, 19.01.2010թ. ՍԴՈ-852, 30.03.2010թ. ՍԴՈ-871, 02.04.2010թ. ՍԴՈ-872, 16.10.2012թ. ՍԴՈ-1052 որոշումները, որոնք հրապարակված են «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» և «Սահմանադրական դատարանի տեղեկագրում»:

կան բնույթ ունեցող թեմաներով, որոնցով խնդիրներ լուծելու կամ դատավարական փաստաթղթեր կազմելու ձևի կիրառումն անհնար է (օրինակ՝ քրեական դատավարությանն էլ տեղի ունեցող և հիմնական հասկացությունները, քրեական դատավարության իրավունքի աղբյուրները), գործնական պարապմունքները կարող են անցկացվել սեմինարների (ռեֆերատների պատրաստման, թեմատիկ զեկուցումների) միջոցով: Այս դեպքում ունկնդիրները դասախոսից (սեմինարավարից, ամբիոնից) ստանում են հանձնարարություն՝ թեմայի որևէ հարցի վերաբերյալ նախապատրաստել զեկուցում (ելույթ, հաղորդում): Ելույթները նախապես տանը պատրաստվում, պլանավորվում են: Ունկնդիրները կարող են ելույթ ունենալ ինչպես սեփական նախաձեռնությամբ, այնպես էլ դասախոսի հարցմամբ: Առանձին տեսական հարցերի շուրջ ծրագրված զեկուցման (զեկուցումների) ունկնդրումից հետո դասախոսը, մյուս ունկնդիրները կարող են զեկուցողին հարցեր տալ կամ հանդես գալ հակիրճ դիտարկմամբ: Սեմինարի վերջում դասախոսը (սեմինարավարը) հանդես է գալիս ամփոփիչ ելույթով, որում ունկնդիրների զեկուցումներին տալիս է պատճառաբանված գնահատական՝ նշելով առավելությունները, ինչպես նաև սխալները:

Սեմինար աշխատանքների վերաբերյալ դասախոսի (սեմինարավարի) կողմից նախապես տրվում է հանգուցային հարցերի ցանկը, ինչպես նաև մեթոդական ուղղորդում, ինչն ունկնդիրներին կօգնի ճիշտ կողմնորոշվել զեկուցումները պատրաստելիս: Ընդ որում, նախընտրելի է տալ 5-6 հանգուցային հարց՝ առավելագույնս ընդգրկելով թեմայի բովանդակությունը:

Ցանկալի է, որ ունկնդիրները ելույթ ունենան բանավոր, այլ ոչ թե կարդան իրենց պատրաստած զեկուցման գրավոր տեքստը: Դրանով ապահովվում է երկակի նպատակ. նախ՝ ունկնդիրը սովորում է բանավոր ելույթ ունենալ լսարանի առջև, տիրապետում է խոսքի մշակույթին<sup>8</sup>, երկրորդ՝ բանավոր ելույթները փաստում են ունկնդրի կողմից նյութին պատշաճ տիրապետելու հանգամանքը, նրա ինքնուրույն աշխատանքը, կանխում են ար-

տագրությամբ զուգորդված մեխանիկական վերաշարադրանքը:

Վերոնշյալ գործընթացը կծառայի նպատակին և կլինի արդյունավետ, եթե իրականացվի դասախոսի պահանջկոտության, վերահսկողության և մեթոդական օգնության պայմաններում:

**2. Գործնական պարապմունքները կարող են անցկացվել պրակտիկ խնդիրներ լուծելու միջոցով:** Քրեադատավարական խնդիրներ լուծելու միջոցով գործնական պարապմունքներ անցկացնելիս հարկավոր է ունկնդիրներին նախապես հայտնել խնդիրների շրջանակը (ցանկը), որոնք ենթակա են լուծման կոնկրետ դասաժամին: Գործնական պարապմունքի դասաժամին խնդիրների ցանկից դասախոսը լուծման համար ունկնդիրներին ընտրողաբար առաջադրում է 4-6 խնդիր: Առաջարկվող խնդիրները պետք է ամբողջությամբ ընդգրկեն թեմայի հիմնական հարցերը: Խնդիրները կարող են ներկայացվել էլեկտրոնային կամ թղթային կրիչի վրա (համակարգչային ծրագրով կամ շարվածքով), կամ տեսապատկերային եղանակով (ֆլիմ-խնդիր):

Խնդիրների լուծումը կարելի է իրականացնել ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր ընթացակարգով: Թե՛ մեկը, թե՛ մյուսն ունեն իրենց առավելությունները: Այսպես, գրավոր ձևաչափի դեպքում դասախոսը կարող է տվյալ դասաժամի ընթացքում միաժամանակ հարցման ենթարկել ընդհուպ բոլոր ունկնդիրներին, իսկ վերջիններս էլ գտնվում են քննական հավասար պայմաններում: Բանավոր ձևաչափի դեպքում խնդիրների լուծումը հանձնարարվում է կոնկրետ ունկնդիրների և ընթանում է ակտիվ, փոխլրացնող քննարկումների մթնոլորտում: Բարդ կամ ծավալուն խնդիրը, համատեղ քննարկման և լուծման համար, կարող է միաժամանակ հանձնարարվել երկու ունկնդրի:

Բոլոր դեպքերում, խնդիրը լուծելիս ունկնդիրը պետք է կարողանա պատճառաբանել իր հետևությունը՝ մատնանշելով քրեական դատավարության օրենսդրության այն իրավադրույթը կամ դատարանի դատական ակտի հիմնավորումները, որոնց վրա հիմնված է խնդրի՝ իր կողմից առաջարկվող լուծումը: Ելնելով հանգամանքներից՝ դասախոսը կարող

<sup>8</sup> Բանավոր ելույթի հմտության մասին տես **Ножин Е.А.** Мастерство устного выступления. М., 1989, էջ 25-168: «Բանավոր խոսքը մասնագետի բանիմացության, խելամտության չափանիշն է: Պատահական չէ, որ **Պետրոս Մեծը** 1722 թվականին հատուկ հրահանգով սենատորներին պարտավորեցրել էր ճառն արտասանել ոչ թե գրված տեքստն ընթերցելով, այլ բանավոր: Դա արվում էր, որպեսզի յուրաքանչյուրի խելամտության չափն իմացվեր» (**Յ. Բաղդասարյան**, Հոետորական խոսքի ուժը: Եր., 1987, էջ 97):

է բարդացնել խնդիրը, փոխել հարցադրումը, ընտրել խնդրի ուրիշ տարբերակ: Ամփոփելով գործնական աշխատանքի արդյունքները՝ դասախոսը մատնանշում է ճիշտ պատասխանները, ուղղում թույլ տրված սխալները, տալիս անհրաժեշտ պարզաբանումներ:

Գործնական աշխատանքի ընթացքում ունկնդիրները (ուսանողները) կարող են օգտվել խնդրագրքից, քրեական դատավարության օրենսդրությունից, վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների ժողովածուներից, պաշտոնական այլ նյութերից, ինչպես նաև դասաժամին արված նշումներից: Ընդ որում, չպետք է օգտվել դասագրքից, դասախոսություններից, օրենսգրքի մեկնաբանություններից, այլ պատրաստի նյութերից: Խնդիրների լուծման ընթացքում ունկնդիրները կարող են դասախոսին ընթացակարգային կամ ճշտող հարցեր տալ: դրանց դասախոսը պատասխանում է կամ անմիջապես, կամ էլ գործնական աշխատանքի արդյունքներն ամփոփելիս:

**3. Գործնական աշխատանքի կարևոր տեսակներից է դրա անցկացումը մինչդատական կամ դատական ավարտված գործերի, նյութերի օգտագործմամբ:** Այս դեպքում ունկնդիրներին (ուսանողներին) կարող են տրվել, օրինակ, հետևյալ հարցերը՝ պատճառաբանված է արդյոք անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը, պատճառաբանված է արդյոք պաշտպանի միջնորդությունն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու մասին որոշումը, հիմնավորված են արդյոք քրեական գործով վարույթը կարճելու և (կամ) քրեական հետապնդումը դադարեցնելու, քրեական գործով վարույթը կասեցնելու կամ վերսկսելու, նախաքննության ժամկետը երկարացնելու, խափանման միջոց ընտրելու մասին որոշումները և համապատասխանում են արդյոք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջներին (հոդվ. 31, 35-37, 102, 197, 199, 202, 203, գլուխ 18, 37, 39):

Կարող են վերլուծվել քրեական գործում առկա ապացույցները (օր.՝ մեղադրական եզրակացությունը համապատասխանում է արդ-

յոք քր. դատ. օր-ի պահանջներին կամ արարքի իրավաբանական որակումը համապատասխանում է արարքի նկարագրությանը կամ բխում է արդյոք գործում առկա ապացույցներից): Կարող են վերլուծվել նաև դատավարական փաստաթղթերը (օր.՝ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին որոշումը, մեղադրական եզրակացությունը, դատախազի ցուցումը, լրացուցիչ քննություն կատարելու կամ մեղադրական եզրակացությունը վերակազմելու համար քրեական գործը քննիչին վերադարձնելու մասին դատախազի որոշումը, դատարանների՝ գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող (վերջնական և միջանկյալ) դատական ակտերը, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքը և այլն):

**Բացի այդ, ուսումնական պլանի շրջանակներում ունկնդիրներին (ուսանողներին) կարող է առաջարկվել քրեական գործի նյութով լսարանում կազմել համապատասխան դատավարական փաստաթղթերի (որոշումների, արձանագրությունների) նախագծեր:** Դրանք դասախոսը հավաքում է, ստուգում, գնահատում և հաջորդ դասաժամին ունկնդիրներին հայտնում արդյունքները՝ մատնանշելով ճիշտ լուծումները, ինչպես նաև թերությունները, տալով անհրաժեշտ պարզաբանումներ: Դատավարական փաստաթղթեր կազմելիս ունկնդիրների կողմից կարող են օգտագործվել օրենսգրքեր և այլ պաշտոնական փաստաթղթեր, սակայն չի կարելի օգտվել դատավարական փաստաթղթերի մուշններից<sup>9</sup>:

**Գործնական պարապմունքների շրջանակներում անհրաժեշտ է լսարանում անցկացնել ամփոփիչ ստուգողական աշխատանք:** Ըստ այդմ՝ անցած թեմաներից դասախոսի առաջադրած խնդրի կամ գործի նյութերի հիման վրա ունկնդիրները կազմում են համապատասխան դատավարական փաստաթուղթ (նախընտրելի է խնդրի հիման վրա կազմել գործն ըստ էության լուծող դատական ակտ), որը դասի ավարտին հանձնում են դասախոսին: Հաջորդ դասաժամին դասախոսը ստուգված և գնահատված աշխատանքները

<sup>9</sup> Ընդամին, նպատակահարմար է ունկնդիրներին հանձնարարել՝ դատավարական փաստաթղթերի օրինակելի մուշները նույնպես նախապես ուսումնասիրել, քանզի դրանք կազմված են իրավակիրառ պրակտիկայի և քր. դատ. օր-ի պահանջների հաշվառմամբ: Դատավարական փաստաթղթեր կազմելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել թե՛ բովանդակությանը՝ իրավական ու լեզվաոճական կողմին և թե՛ ձևին՝ փաստաթղթի կառուցվածքին (տես, օրինակ, Նախնական քննության ընթացքում կազմվող դատավարական փաստաթղթեր (օրինակելի մուշներ): Երև., Երևանի համալս. հրատ., 1984, **Кунцын А.Р.** Образцы судебных документов. М., Юрид. лит., 1987, **Вильчур Н.Р.** и др. Судебные документы (более 450 документов). М., Проспект, 2001):

վերադարձնում է ունկնդիրներին՝ անդրադառնալով ճիշտ լուծումներին, ինչպես նաև բնորոշ սխալներին:

**Ուսումնական պլանի շրջանակներում, տեսությունը պրակտիկային կապակցելու նպատակով (մասնավորապես՝ քրեական դատավարության սկզբունքների, դատական վարույթների թեմաների ուսումնասիրման կապակցությամբ) ունկնդիրներին անհրաժեշտ է ներկա գտնվել ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի և քրեական վերաքննիչ դատարանի դատական նիստերին** (դատական քննության փուլին կամ դրա տարբեր մասերին), իսկ հաջորդ դասաժամին լսարանում վերլուծել դատարանում գործի քննության ընթացակարգն ու դատական գործողությունների առանձնահատկությունները:

**Գործնական աշխատանքը բովանդակում է ոչ միայն լսարանային, այլև տնային առաջադրանքների, հանձնարարությունների կատարում:** Այսպես, կոնկրետ խնդրի բովանդակությանը համապատասխան կամ լսարանում ուսումնասիրված քրեական ավարտված գործի կամ նյութի հիման վրա ունկնդիրներին կարող է հանձնարարվել տանը կազմել համապատասխան դատավարական փաստաթուղթ:

Գործնական պարամունքների ժամանակ, ըստ անհրաժեշտության, նպատակահարմար է ուսումնական խումբը (կուրսը) տրոհել փոքր խմբերի և առաջադրանքները (գործերը, նյութերը, խնդիրները) տալ ըստ խմբերի՝ տարբերակներով:

Դատավարական փաստաթղթերի ինքնուրույն և իրավաբանորեն ճիշտ ու գրագետ կազմմանը պետք է լուրջ ուշադրություն դարձնել, քանզի փորձը ցույց է տալիս, որ շրջանավարտները, անցնելով պրակտիկ, իրավակիրառ աշխատանքի, առնվազն սկզբնական շրջանում դատավարական փաստաթղթեր կազմելիս որոշակի դժվարություններ են ունենում, թույլ են տալիս սխալներ: Պրակտիկայում դեռևս հանդիպում են դեպքեր, երբ դատավարական գործողությունների արձանագրությունների կամ որոշումների ոչ պատշաճ սխալ կամ թերի կազմման պատճառով առաջանում են անցանկալի իրավական հետևանքներ:

**Չեղարկվող ունկնդիրները (ուսանողները) գործնական պարամունքների ընթացքում պետք է ձեռք բերեն անհրաժեշտ իրավակիրառական հմտություններ՝ դատավարական փաստաթղթերի կազմման գործում և ըստ այդմ, դրանց ձևին ու բովանդակությանը ներկայացվող պահանջներին համապատասխան, կարողանան կազմել առնվազն հետևյալ քրեադատավարական փաստաթղթերը՝**

- որոշում քրեական գործ հարուցելու և այն վարույթ ընդունելու մասին,
- որոշում քրեական գործ հարուցելը մերժելու մասին,
- որոշում քրեական գործն ըստ քննչական ենթակայության ուղարկելու մասին,
- որոշում փորձաքննություն նշանակելու մասին,
- արձանագրություն կասկածյալին ձերբակալելու մասին [թր. դատ. օր. 129 հոդվածի կարգով],
- որոշում անձին ձերբակալելու մասին [թր. դատ. օր. 130 հոդվածի կարգով],
- որոշում բերման ենթարկելու մասին,
- որոշում անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին,
- որոշում մեղադրյալի նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին,
- որոշում խափանման միջոց ընտրելու մասին,
- որոշում կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդություն հարուցելու մասին,
- որոշում կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը քննության առնելու մասին,
- որոշում բնակարանի խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդություն հարուցելու մասին,
- որոշում բնակարանի խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդությունը քննության առնելու մասին,
- որոշում տուժող (տուժողի իրավահաջորդ, քաղաքացիական հայցվոր, քաղաքացիական պատասխանող) ճանաչելու մասին,
- որոշում քրեական գործով թարգմանիչ ներգրավելու մասին,
- որոշում այլ փաստաթղթերն ապացույց ճանաչելու մասին,
- որոշում առարկան (փաստաթուղթը) իրեղեն ապացույց ճանաչելու մասին,
- որոշում քրեական գործով վարույթը կասեցնելու մասին,
- որոշում քրեական գործով վարույթը կարճելու մասին,
- որոշում քրեական գործով վարույթը վերսկսելու մասին,
- արձանագրություն մեղադրյալի (կասկածյալի, վկայի, տուժողի) հարցաքննության,
- արձանագրություն խուզարկություն (առգրավում, զննում, քննում, ճանաչում, քննչական փորձարարություն) կատարելու մասին,
- արձանագրություն մեղադրյալի պաշտպանության և պաշտպան ունենալու իրավունքը բացատրելու մասին,
- արձանագրություն մեղադրյալի իրավունքների և պարտականությունների ծանուցման մասին,

- արձանագրություն նախաքննությունն ավարտելու և գործի նյութերը մեղադրյալին ներկայացնելու մասին,
- միջնորդագիր հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու մասին,
- մեղադրական եզրակացություն,
- որոշում լրացուցիչ քննություն կատարելու (մեղադրական եզրակացությունը վերակազմելու) համար քրեական գործն քննիչին վերադարձնելու մասին,
- որոշում դատական քննություն նշանակելու մասին,
- դատավճիռ (մեղադրական, արդարացման),
- դատարանի լրացուցիչ որոշում,
- վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող (գործն ըստ էության չլուծող) դատական ակտ,
- վերաքննիչ բողոք,
- վճռաբեկ բողոք:

Անդրադառնանք նաև գործնական աշխատանքի իրականացման այլ միջոցներին:

Դատավարական փաստաթղթեր կազմելուց զատ, ունկնդիրները (ուսանողները) պետք է կարողանան կազմել առանձին քննչական գործողությունների իրականացման պլանը: Ունկնդիրները պետք է պատկերացուն ունենան հանցագործությունների քննության պլանավորման, տակտիկայի, քննչական վարկածների կազմման, ինչպես նաև հանցագործությունների դեմ պայքարի գործում իրավապահ մարմինների գործակցության մասին:

**Գործնական պարապմունքների անցկացման արդյունավետ միջոց են քննչական և դատական գործողությունների նմանակումները:** Այսպես, մի պարապմունքի ժամանակ ունկնդիրների (ուսանողների) մասնակցությամբ նմանակվում են, օրինակ, մինչդատական վարույթում կասկածյալի, մեղադրյալի, վկայի, տուժողի հարցաքննությունը, առերեսումը, ճանաչման ներկայացնելը, քննչական փորձարարությունը, իսկ մեկ այլ պարապմունքի ժամանակ նմանակվում են դատական քննության նախապատրաստական մասը, դատաքննությունը, դատական վիճաբանությունները և այլն: Դրանից հետո լսարանում իրականացվում է տվյալ գործնական պարապմունքի դատավարական վերլուծություն:

Ուսումնական դատական նիստերի՝ նմանակումների ժամանակ ունկնդիրներն առավել ուշադիր պետք է լինեն՝ ընկալելու և մտապահելու քննարկվող գործի փաստական հանգամանքները, մեղադրանքի էությունը, մեղադրանքի ու պաշտպանության կողմերի փաստարկները, և ըստ դրանց բովանդակության կազմեն դատավճռի նախագիծ: Ըստ այդմ՝ «Դատավճռի հասկացությունը, նշանակությունը, տեսակները և բաղկացուցիչ մասերը» թեմայով ունկնդիրները կազմում են դատավճռի նախագիծ՝ դատական նմանակումներում քննության առնված գործին համապատասխան<sup>10</sup>:

Գործնական պարապմունքների շրջանակներում կարևորվում է նաև ունկնդիրների կողմից իրավաբանական հատուկ տերմինաբանություն կիրառելու հմտությունն ու կարողությունը: Եզրույթները (տերմին) սեղմ ձևով պարունակում են իրավական անհրաժեշտ տեղեկություն՝ արտահայտելով երևույթի, հասկացության առավել բնորոշ և էական հատկությունները<sup>11</sup>: Իրավաբանական հատուկ տերմինաբանությունն «անհրաժեշտ է ոչ միայն այն պատճառով, որ կրճատում է շարադրանքը, այլև առավելապես նրա համար, որ առանց տերմինաբանության հաճախ անհնար է անհրաժեշտ ճշգրտությամբ արտահայտել օրենսդրական ձևակերպումը, միտքը: Իրավաբանական հատուկ տերմինաբանության կիրառումը հանդիսանում է իրավաստեղծ և այլ իրավաբանական աշխատանքում բարձր իրավական մշակույթի դրսևորման ցուցանիշ»<sup>12</sup>:

Գործնական պարապմունքները վարող դասախոսը պետք է ուշադրության կենտրոնում պահի նաև իր ղեկավարած կուրսային աշխատանքների ընթացքը: Ընդ որում, եթե դասախոսն օգնի կուրսային աշխատանքի թեմայի, գրականության ընտրության, պլանի կազմման հարցում, ապա դա էական աջակցություն կլինի ունկնդրին՝ բովանդակալից կուրսային աշխատանք պատրաստելու համար:

Վերջապես, արձանագրենք, որ դասախոսը պետք է իրականացնի ունկնդիրների (ուսանողների) հաճախումների և ընթացիկ առաջադիմության ամրագրում, ինչը, հարկավ, հաշվի է առնվում եզրափակիչ քննական արդյունքներն ամփոփելիս:

<sup>10</sup> Դատավճռի տեսակների, կառուցվածքի ու բովանդակության, ինչպես նաև դատական ակտի օրինականության, հիմնավորվածության և պատճառաբանվածության մասին՝ լուսաբանված կոնկրետ օրինակներով, տես **Мирецкий С.Г.** Приговор суда. М., Юрид. лит., 1989, էջ 5-92:

<sup>11</sup> Այս կապակցությամբ առավել հանգամանորեն տես **Савицкий В.М.** Язык процессуального закона. Вопросы терминологии. М., Наука, 1987, էջ 16-109:

<sup>12</sup> Տե՛ս, **Алексеев С.С.** Проблемы теории права. Т. 2. Свердловск, 1973, էջ 157:



# ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՀԱՄԱՉԱՓՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ԴԱՏԱԴԱՐՏՎԱԾ ԵՎ ԴԱՏԻԺԸ ԿՐՈՂ ԱՆՁԱՆՑ ԸՆՏՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՐԱՔՎԵՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

## Մանուկ ՄՈՒՐԱԴՅԱԼ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի պետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

*Մարդու իրավունքների իրացման և այդ հարցում պետության գործունեության հարաբերակցության հիմանախնդիրը հանդիսանում է սահմանադրական հարթության ամենաարդիականներից: Մի կողմից՝ մարդը և հասարակությունն իրենց սուբյեկտիվ և կոլեկտիվ իրավունքներն իրացնելիս, պարտականությունները կատարելիս, մյուս կողմից՝ պետությունն իր գործունեության ընթացքում գտնվում են սերտ համագործակցության մեջ: Անհատ-պետություն հարաբերություններում պետությունը հանդիսանում է այն մարմինը, որը երաշխավորում է անձի կողմից վերջինիս սուբյեկտիվ իրավունքների իրացումը և ստեղծում է համապատասխան իրավական մեխանիզմներ՝ պարտականությունների կատարման համար: Դրա մասին է վկայում նաև սահմանադրական այն լուծումը, համաձայն որի՝ «պետությունն ապահովում է հիմանական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը»,»:* Այսինքն՝ պետության խնդիրը ոչ միայն իրավունքներ և ազատություններ սահմանելու, այլև դրանց իրացումն ապահովելու համար անհրաժեշտ իրավական և ինստիտուցիոնալ մեխանիզմներ ստեղծելու մեջ է, որի հիման վրա պետությունը կատարում է ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով իր վրա դրված իրավունքների և ազատությունների պաշտպանությունն ապահովելու պարտականությունը: Սակայն հնարավոր են իրավիճակներ, երբ պետությունն իրավունքի շրջանակներում նահանջում է մարդու իրավունքների պաշտպանության իր պարտականությունից՝ Սահմանադրությամբ հռչակված բարձրագույն արժեքների պաշտպանության նկատառումներից ելնելով:

Ժամանակակից պետությունների Սահմանադրությունները կառուցված են մարդու իրավունքների առաջնայնության հայեցակարգի հիման վրա: Այս տեսանկյունից բացառություն չէ ՀՀ Սահմանադրությունը, որի 3-րդ հոդվածում ոչ միայն հռչակվեց մարդու, նրա արժանատվության, հիմնական իրավունքների և ազատությունների բարձրագույն արժեքներ լինելու գաղափարը, այլև ճանաչվեց այդ իրավունքների անմիջական գործողության սահմանադրական

հայեցակարգը, որի տակ պետք է հասկանալ անձի, հասարակության և պետության միջև որոշակի կապերի առկայություն, որը երաշխավորում է անհատի ինքնաիրացման իրավաբանական անհրաժեշտ և բավարար նախադրյալները: Սահմանադրության սահմաններում մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները որպես իրավակարգավորիչ իրավաբանական պահանջներ, ուղղորդում են պետաիշխանական գործառույթների իրակականացմանը<sup>1</sup>:

<sup>1</sup> Տե՛ս, ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի. - Եր.: «Իրավունք», 2010, էջեր 69-70:

Պարզ է դառնում, որ մարդու իրավունքների իրացման ապահովումը պետության պարտականությունն է, և իրեն իրավական հռչակող ցանկացած ինքնիշխան միավոր իրավազոր է նահանջել վերը նշված բարձրագույն արժեքների պաշտպանության իր պարտականությունից բացառապես հենց այդ արժեքների պաշտպանության համար: Պետության՝ մարդու իրավունքների պաշտպանության իր պարտականությունից նահանջելը դրսևորվում է իրավունքների սահմանափակումով:

Մարդու իրավունքների սահմանափակման մեխանիզմներ սահմանող արտերկրների օրենսդրության վերլուծությունից պարզ է դառնում, որ պետությունների հայեցողությունը քննարկվող հարցում կոչված է ծառայելու ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգությանը, հասարակական կարգի պահպանմանը, հանցագործությունների կանխմանը, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանությանը:

Բացառապես իրավունքին է վերապահված սուբյեկտիվ իրավունքներ և ազատություններ սահմանելու, դրանց իրացման հնարավոր սահմաններն ուրվագծելու և իրացման ապահովման համար համապատասխան պարտականություններ դնելու միջոցով ապահովել հավասարակշռվածություն մարդ-հասարակություն-պետություն հարաբերություններում:

Դիպուկ պետք է համարել **Ի. Ա. Իլյինի** այն դիտարկումը, որ՝ **«հայտնի իրավաչափ սահմաններով սահմանափակելով մարդու ազատությունը՝ իրավունքն ապահովում է մարդու համար իր իրավունքներից անխափան օգտվելու հնարավորություն, այսինքն՝ երաշխավորում է նրա ազատությունն այդ սահմաններում»**<sup>2</sup>: Մարդու իրավունքները և ազատությունները կյանքի նորմալ կենսագործունե-

ության անհրաժեշտ նախադրյալներ են, անհրաժեշտ հնարավորությունների ամբողջություն, որոնցից նա կարող է ազատորեն օգտվել<sup>3</sup>:

Այս իմաստով իրավունքի առջև դրված նշված խնդրի իրականացման գործում էապես կարևորվում է իրավունքների համաչափ սահմանափակման հիմնախնդիրը, որը և կհանդիսանա իրավական պետության կարևորագույն լուծումներից մեկը:

Իրավունքների համաչափ սահմանափակում ասելով անհրաժեշտ է հասկանալ՝ արդյոք դրանք կոչված են ծառայելու գոյություն ունեցող սահմանադրական նպատակներին: Ցավոք, նշված հիմնախնդրի վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ չկա միասնական մոտեցում: Նույնիսկ մինչ այսօր վիճելի է հանդիսանում իրավունքների սահմանափակման հնարավոր սահմանները ընդգծող պարզ և հասկանալի չափանիշների վերաբերյալ հարցադրումը<sup>4</sup>, այսինքն որոնք են այդ չափանիշները և մինչև ինչ մակարդակում կարելի է սահմանափակել իրավունքները: Չիմնադրված ունի բացառիկ նշանակություն, քանզի հնարավոր կամայականությունները և սխալ իրավական լուծումները կարող են խաթրվել սահմանադրական բարձրագույն արժեքների հիմքերը, հետևաբար և խեղել իրավունքի գերակայության, մարդու իրավունքների պրիմատի ժամանակակից սահմանադրական լուծումները:

Նման սահմանափակումները, չնայած իրենց օբյեկտիվ անհրաժեշտության պետք է լինեն խելամիտ և համաչափ, և այդ սահմանափակումների հետ կապված բեռը չպետք է լինի «չափազանց»<sup>5</sup>:

Մարդու իրավունքների սահմանափակման հնարավոր սահմանները գծելիս պետք է կարևորել սահմանադրական այն չափորոշիչները, որոնք առանցքային են սահմանափակումներ կիրառելու համար, այլ կերպ ասած՝ տվյալ պարագայում գործ ունենք այսպես կոչված սահմանափակումների հիմք հանդիսացող սկզբունքների հետ:

<sup>2</sup> St'u, **Ильин И.А.** Общее учение о праве и государстве (фрагменты) // Правоведение. 1992. N 3. С. 96.

<sup>3</sup> St'u, Права человека : учебник для вузов / под ред. **Е. А. Лукашевой.** — М. : НОРМА-ИНФРА-М, 1998. С. 94.

<sup>4</sup> St'u, **Волкова Н.С.** Общественная безопасность и законодательство о правах человека // Журнал российского права. — 2005. — N 2. — С. 93—100.

<sup>5</sup> St'u, **Шайо А.** Самоограничение власти (краткий курс конституционализма). — М., 2001. — С. 282, 283.

Դրանք են՝

1. մարդուն, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ ճանաչելը,

2. սահմանափակումների համապատասխանությունը և համաչափությունը սահմանադրությամբ ամրագրված նպատակներին,

3. օրենքի առջև մարդկանց հավասարության սկզբունքի տեսանկյունից սահմանափակումների կիրառման պարագայում խտրականության բացառումը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից,

4. ձևական իմաստով, իրավունքների սահմանափակումը միայն օրենքով և օրենքով սահմանված կարգով,

5. ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ՝ արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում ժամանակավորապես սահմանափակման հնարավորությունը,

6. սահմանափակումներ սահմանելիս ԶՅ միջազգային պարտավորությունները չգերազանցելու արգելքը:

Այս իմաստով պարզ է դառնում. եթե նախատեսվում են իրավունքների սահմանափակումներ, որոնք բավարարում են վերը

նշված պահանջներին, ապա ակնհայտ է, որ հաղթանակում է իրավունքի շահը:

Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման ազգային սահմանադրական համակարգի վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ վերը նշված չափորոշիչներն ամրագրված են նաև ԶՅ Սահմանադրության առանձին հոդվածներում<sup>6</sup>:

Սույն հոդվածի շրջանակներում, կարևորելով վերը շարադրված գիտատեսական վերլուծությունները, անդրադարձ կատարվի սուբյեկտիվ ընտրական իրավունքի սահմանափակման առանձին հարցերին, իսկ ավելի կոնկրետ՝ ԶՅ Սահմանադրության 30-րդ հոդվածով նախատեսված համընդհանուր ընտրական իրավունքի սահմանափակման իրավաչափության սահմաններին:

Վերջին ժամանակներս ընտրությունների կատարելագործման գործընթացում բավականին մեծ կարևորություն է տրվել համընդհանուր ընտրական իրավունքի կայացման և պետությունում ընտրազանգվածի ծավալային աճի խնդիրներին<sup>7</sup>: Այս ամենին հետ մեկտեղ անհրաժեշտ է փաստել, որ այսօր քիչ չեն այն պետությունները, որոնցում կամ սահմանադրական, կամ օրենքի մակարդակով նախատեսված են առանձին կարգավիճակի անձանց /ազատագրված ռատապարտված և պատիժը կրող/ սուբյեկտիվ ընտրական իրավունքի սահմանափակմանը վերաբերող դրույթներ<sup>8</sup>:

ԶՅ Սահմանադրության 30-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով սահմանափակված է նաև դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատագրված ռատապարտված և պատիժը կրող 18 տարին լրացած քաղաքացիների ընտրելու<sup>9</sup> սահմանադրական իրավունքը:

<sup>6</sup> Տե՛ս ԶՅ Սահմանադրության 3, 14, 14.1, 43, 44-րդ հոդվածները:

<sup>7</sup> Վերջին հարյուրամյակում հիմնականում այն դրսևորվել է կանանց և սևամորթներին ընտրական իրավունքի տրամադրմամբ, տարիքային ցենզի /ակտիվ ընտրական իրավունքի/ նվազեցմամբ և այդ հարցում սեռային խտրականության վերացմամբ, կրթական և գույքային ցենզի վերացմամբ:

<sup>8</sup> BBC News. Q&A: UK prisoners' right to vote. 20 January 2011. <http://www.bbc.co.uk/news/uk-11674014> /09.01.2014/.

<sup>9</sup> Եի՛շտ է հիմնական օրենքը խոսում է միայն ընտրելու իրավունքի սահմանափակման մասին, սակայն սահմանադրական նորմի ավտոմոմ մեկնաբանման պարագայում պարզ է դառնում, որ 30-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանադիրն նկատի է ունեցել նաև հանրաքվեներին մասնակցելու սահմանափակման խնդիրը ևս: Այս իմաստով հարցը հստակեցված է «Հանրաքվեի մասի» ԶՅ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում: Համաձայն որի. «Հանրաքվեի չեն կարող մասնակցել դատա-

Երկու պարագայում էլ խոսքը գնում է իրավունքների ժամանակավոր սահմանափակման մասին: Մի դեպքում կարող են վերանալ այն հիմքերը, որոնց առկայությամբ դատարանը սահմանափակել է քաղաքացու գործունակությունը և սահմանել է հոգաբարձություն: Նշված հիմքերի վերանալու պարագայում դատական կարգով վերացվում է գործունակության սահմանափակումն ու հոգաբարձությունը, և օրենքի ուժով վերականգվում է քաղաքացու ընտրական իրավունքը<sup>10</sup>:

Կարևորելով այն հանգամանքը, որ գործունակության սահմանափակումը հոգեկան խանգարում ունեցող մարդու վերաբերյալ օրենքով սահմանված կարգով պետության իրավական արձագանքն է առ այն, որ տվյալ անձը չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ դեկավարել դրանք, իրավաբանական գրականության մեջ չկան վեճեր այն հարցի կապակցությամբ՝ իրավաչափ է արդյոք նման կարգավիճակի անձանց վերաբերությամբ ընտրելու և ընտրվելու, նաև հանրաքվեներին մասնակցելու իրավունքների սահմանափակման օրենսդրական լուծումները:

Այլ է իրավիճակը դատարանի դատավճռով ազատագրված դատապարտված և պատիժը կրող քաղաքացիների պարագայում: Չնայած այն հանգամանքի, որ այս պարագայում ևս ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու իրավունքների սահմանափակումը ժամանակավոր բնույթ է կրում, և դրանք վերականգնվում են ազատագրված ժամկետը լրանալու կամ պատիժն ազատագրվածն հետ չկապված այլ ձևով այն կրելու պահից, այնուամենայնիվ կարծում ենք՝

● նախ գործող սահմանադրական կարգավորումների շրջանակում ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդվածի 3-րդ մասում առկա սահմանափակումները չեն համապատասխանում ՀՀ հիմնական օրենքում սահմանված իրավունքների սահմանափակման նպատակներին /ՀՀ Սահմանադրության հոդված 43/,

● Երկրորդ՝ քննարկվող իրավունքի իմաստով նման սահմանափակումները չեն կարող համաչափ և անհրաժեշտ լինել իրավական պետության որդեգրած սկզբունքներին: Այս տեսանկյունից արժեքավոր պետք է համարել ՌԴ Սահմանադրական դատարանի դիրքորոշումը, համաձայն որի՝ «իրավունքների և ազատությունների համար սահմանված սահմանափակումները պետք է համապատասխանեն իրավական պետության արժեքներին: Իրավունքների և ազատությունների հնարավոր սահմանափակումներ նախատեսելիս պետք է հաշվի առնել մարդկանց, հասարակության և պետության շահերի հավասարակշռվածությունը»<sup>11</sup>:

2005 թվականի մայիս ամսին կայացած եվրոպական պետությունների սահմանադրական դատարանների 13-րդ Կոնգրեսում, որի քննարկման թեման էր «Մարդու իրավունքների սահմանափակման չափանիշները սահմանադրական դատարանների պրակտիկայում», նշվեց, որ առանձին պետությունների սահմանադրական դատարանների կողմից իրավունքների սահմանափակման համաչափության սկզբունքի կիրառությունը վկայում է, որ այն ճիշտ հասկանալու համար պետք է ելնել այն հիմնական չափանիշներից, որ սահմանափակումները պետք է համապատասխանեն այն օրի-

---

րանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատագրված դատապարտված և պատիժը կրող քաղաքացիները»: Չնայած հիմնախնդրի նման մեկնաբանմանը, կարծում ենք, որ սահմանադրական բարեփոխումների ներկա փուլում Սահմանադրության կատարելագործման համատեքստում, վերջինիս մատչելիության ապահովման նպատակից ելնելով առաջարկում ենք ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդվածի 3-րդ մասում «ընտրել և ընտրվել» բառերից հետո ավելացնել «ինչպես նաև հանրաքվեներին մասնակցել» բառերը: Մանրամասն տե՛ս **Մ. Օ. Мурадян**. Конституционно-правовые основы избирательной системы Республики Армения. Монография / под ред. док. юр. Наук, профессора, заслуженного деятеля науки РФ **Р.С. Мулукаева**. - Ер.: Лимуш, 2008. С. 38-39.

<sup>10</sup> Մանրամասն տե՛ս ՀՀ Քաղ. օր-ի հոդված 32:

<sup>11</sup> Определение Конституционного Суда РФ от 14 июля 1998 г. N 86-О «По делу о проверке конституционности отдельных положений Федерального закона «Об оперативно-розыскной деятельности» по жалобе гражданки **И.Г. Черновой**» // СЗ РФ. — 1998. — N 34. — Ст. 4368.

նական նպատակներին, որոնց պաշտպանությանը նրանք ուղղված են, չպետք է լինեն առավել ծանր, քան նրանք անհրաժեշտ են, անհրաժեշտ է ապահովել հավասարակշռվածություն սահմանադրությամբ երաշխավորված անհատի իրավունքների և հասարակական հետաքրքրությունների կամ այլ անձանց իրավունքների միջև, պետք է լինի սահմանափակման իրական անհրաժեշտություն<sup>12</sup>:

Այս տեսանկյունից, ի թիվս այլ չափանիշների, արժեքավոր պետք է համարել ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ **Գ. Հարությունյանի** տեսակետը, համաձայն որի սահմանափակումները պետք է պահանջված լինեն միայն այլ միջոցների բացակայության դեպքում<sup>13</sup>:

Հիմնահարցի ամբողջական վերլուծության համար հստակեցման կարիք ունի նաև այն հարցը, թե որոնք են սահմանադրական այն նպատակները, որոնց պաշտպանության համար նախատեսված է ազատագրման դատապարտված և պատիժը կրող քաղաքացիների<sup>14</sup> ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու իրավունքը:

ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդվածի 3-րդ մասն ընդամենը խոսում է սահմանափակման ենթակա իրավունքների /ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու/, իրավական կարգի /դատական կարգով/ և սուբյեկտների շրջանակի մասին /ազատագրված դատապարտված և պատիժը կրող/ և, առհասարակ, ոչինչ չի ասվում այն նպատակների մասին, որոնց պաշտպանությանն ուղղված են նման սահմանափակումները: Սահմանադրական նորմերի վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ այդ նպատակները պետք է ամրագրված լինեն ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածում: Մասնավորապես, սահմանափակումները կարող են օրենքով սահման-

վել, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետականան վտանգությանը, հասարակական կարգի պահպանմանը, հանցագործությունների կանխմանը, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանությանը: Սակայն ամենավառ երևակայության պայմաններում նույնիսկ հերավոր չէ պատկերացնել՝ վերը նշված սահմանադրական նպատակներից, որոնց պաշտպանությանն է ուղղված ազատագրված դատապարտված և պատիժը կրող քաղաքացիների ազատորեն ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու սահմանադրական իրավունքի սահմանափակումը:

Եթե նման սահմանափակումները փաստացի չեն հետապնդում նշված նպատակներից և ոչ մեկը, ապա հարց է առաջանում ինչու է արտահայտվել սահմանադրի կամքը նման սահմանափակում նախատեսելու համար կամ արդյոք իրավաչափ է սահմանել սահմանափակումները՝ առանց որոշակիացնելու թե ինչ արժեքների պաշտպանությանն են դրանք ուղղված:

Առանձին գիտնականներ շեշտադրում են կատարում քվերակության գործընթացի կազմակերպման և իրականացման հետ կապված բարդությունների վրա, որոնք կարող են առաջանալ ազատագրված վայրերում:

**Ս. Ա. Ավագյանի** դիտարկմամբ չեն կարող հիմնավոր լինել այն փաստարկները, որ սահմանափակումները կապված են վերը նշված բարդությունների հետ: Ըստ հեղինակի, առավել հիմնավոր են այն դիտարկումները, որ պատիժը կրող անձանց ազատ կամքի արտահայտման վրա կարող են իրենց ազդեցությունն ունենալ քրեական «հեղինակությունները», և կստեղծվի այսպես կոչված «քրեական էլեկտորատ» եզ-

<sup>12</sup> Stéu, **Селивон Н.** Критерии ограничения прав человека в практике конституционного правосудия // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии. — Вып. — 3(29). — С. 22, 23.

<sup>13</sup> Stéu նույն տեղում, էջ 43:

<sup>14</sup> Սահմանադրական բարեփոխումների համատեքստում անհրաժեշտ է նաև ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդվածի 3-րդ մասի «**քաղաքացիներ**» բառի փոխարեն օգտագործել «**անձինք**» բառը: Քանզի հենց 30-րդ հոդվածի 2-րդ մասի տառացի մեկնաբանությունից պարզ է դառնում, որ պետք է սահմանափակվի նաև ՀՀ քաղաքացիություն չունեցող անձանց տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունքը:

րույթը<sup>15</sup>: Հիմնահարցի հետ կապված այլ մոտեցում ունի **Ա. Ղամբարյանը**, որի կարծիքով **Ս. Ա. Ավագյանի** փաստարկները չեն կարող իրավաչափ համարվել, քանզի ազատազրկման վայրերից դուրս եկած անձիք միշտ չէ որ դադարում են հանդիսանալ քրեական հեղինակություններ կամ վերջիններիս ազդեցության տակ գտնվող անձիք<sup>16</sup>: Կարծում ենք, որ **Ա. Ղամբարյանի** կողմից բերված փաստարկները առավել քան համոզիչ են, ավելին, ժամանակակից պայմաններում հանցավոր աշխարհում տեղի ունեցող զարգացումները բավականին լուրջ հարցականի տակ են դնում այն հանգամանքը՝ ընտրական գործընթացների վրա ավելի հեշտ է ազդել ազատազրկման վայրերում, թե դրա սահմաններից դուրս: Կարծում ենք, որ չի կարող ազատազրկման վայրում գտնվելու գործոնը հանդիսանալ այն հանգամանքը, որով կհիմնավորվի նման սահմանափակման իրավաչափությունը, այնինչ ՀՀ օրենսդրության վելուծության արդյունքում պարզ է դառնում, որ հանցանքի կատարման մեջ մեղավոր ճանաչված, սակայն ազատազրկման հետ չկապված քրեական պատասխանատվության ենթարկված կամ նման եղանակով պատասխանատվության ենթարկված, սակայն տվյալ պահին պատիժը չկրող անձինք ունեն ձայնի իրավունք /ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու իրավունք/: Կարծում ենք, որ նման տարանջատումը զուրկ է օբյեկտիվ հիմքերից:

Հետաքրքրական է Անգլիայի կալանավայրերի նախկին տեսուչ **Դեվիդ Ռեմսբոտամի** այն դիտարկումը, որ Բրիտանիայի բոլոր քաղաքացիներն ունեն սեփական կամքն

արտահայտելու իրավունք, և որ ազատազրկման նպատակներից մեկն էլ կայանում է նրանում, որ պետք է օգնել նրանց՝ վարելու հետագա օգտակար և օրինաչափ կյանք: Վերջինիս դիտարկմամբ նման սահմանափակումն էապես նվազեցնում է վերը նշված նպատակներին հասնելու հավանականությունը: Նմանատիպ պահանջով հանդես է եկել նաև ազատազրկման վայրի կառավարման բրիտանական վարչությունը՝ շեշտադրում կատարելով հատկապես այն հանգամանքի վրա, որ նշված իրավունքի սահմանափակումը էապես ազդում է կալանավորների վերականգնողական գործընթացի վրա<sup>17</sup>:

Ազատազրկման վայրերի վերափոխումների ֆոնդի տնօրեն **Ջուլիետա Լայոնի** գնահատմամբ ընտրելու իրավունքի սահմանափակման վերաբերյալ օրենսդրական ամրագրումները կարելի է համարել 19-րդ դարի մնացուկ, և որ ազատազրկման դատապարտված և պատիժը կրող անձանց ընտրելու իրավունքի սահմանափակումը ոչ մի վտանգ չի ներկայացնում հասարակական անվտանգության տեսանկյունից<sup>18</sup>:

Քննարկվող խնդրի հետազոտման տեսանկյունից կարևորում ենք նաև ազատազրկման դատապարտված և պատիժը կրող անձանց ձայնի իրավունքի բացարձակ սահմանափակման վերաբերյալ նորմերի՝ միջազգային չափորոշիչներին համապատասխանության հարցը: Առանձին հեղինակներ հիմնադրադրված են հատկապես այդ տեսանկյունից<sup>19</sup>: Մասնավորապես, կարևորվում է նշված սահմանափակման համապատասխանությունը Մարդու իրավունքների և

<sup>15</sup> Տե՛ս, **Авакян С.А.** Конституционное право России: Учебный курс.- В 2 т. Т. 2.- М.: Юристъ, 2005. ст. 176.

<sup>16</sup> Տե՛ս, **Гамбарян А. С.** Правомерность ограничения право граждан, содержащихся в местах лишения свободы, избирать в прецедентном праве Европейского суда. Российско-армянский (славянский) государственный университет. Годичная научная конференция. 28 ноября — 2 декабря 2007г. Изд. РАУ. 2008. С. 25.

<sup>17</sup> BBC News, «Call for prisoners' right to vote», Tuesday, 2 March, 2004 [http://news.Bbc.co.uk/2/hi/uk\\_news/3523231.stm/15.01.2014/](http://news.Bbc.co.uk/2/hi/uk_news/3523231.stm/15.01.2014/)

<sup>18</sup> The Guardian «Give prisoners right to vote, says UN, Friday, 19 September 2008, <http://www.theguardian.com/society/2008/sep/19/prisonsandprobation.civilliberties/15.01.2014/>

<sup>19</sup> Տե՛ս, **Гамбарян А. С.** Правомерность ограничения правограждан, содержащихся в местах лишения, избирать в прецедентном праве Европейского суда. Российско-армянский (славянский) государственный университет. Годичная научная конференция. 28 ноября — 2 декабря 2007г. Изд. РАУ. 2008. С. 26.

հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի /այսուհետ՝ Կոնվենցիայի/ N 1 արձանագրության 3-րդ հոդվածի պահանջներին, համաձայն որի՝ «բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են անցկացնել ազատ ընտրություններ՝ ողջամիտ պարբերականությամբ, գաղտնի քվեարկությամբ, այնպիսի պայմաններում, որոնք կապահովեն ժողովրդի կամքի ազատ արտահայտումն օրենսդիր իշխանություն ընտրելիս»:

Հիմնահարցի վերաբերյալ իր իրավական դիրքորոշումն է արտահայտել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, որի առաջին և ամենաքննարկվող որոշումը, որն ընդունվել է «**Չերստն ընդդեմ Միացյալ Թագավորության**» գործի շրջանակներում, վերաբերում էր ազատագրկման դատապարտվածների ընտրական իրավունքի բացարձակ սահմանափակմանը<sup>20</sup>:

Նախ պետք է նշել, որ «**Չերստն ընդդեմ Միացյալ Թագավորության**» գործի համար բազային էր Եվրոպայի խորհրդի անդամ չհանդիսացող Կանադայի Գերագույն դատարանի դատական մատչելի: Միե՛ն իր որոշման մեջ նշում է, որ Կանադայի Գերագույն դատարանի որոշումը («**Սովեն ընդդեմ Գլխավոր դատախազի**»), իրենում պարունակում է հիմնախնդրի վերաբերյալ մանրամասն /և օգտակար/ վերլուծություններ<sup>21</sup>: Չնայած այն հանգամանքին, որ նշված երկու գործերի միջև գոյություն ունեին որոշակի տարբերություններ, սակայն Միե՛ն-ը համարեց, որ «**Սովեն ընդդեմ Գլխավոր դատախազի**» գործի շրջանակներում բերված փաստարկները վերաբերելի են նաև իր կողմից քննվող գործին: «Սովեն ընդդեմ Գլխավոր դատախազի գործով կայացված որոշման մեջ ևս դատարանը նշել է,

որ առկա է Մարդու իրավունքների կանադական խարտիայի 1-ին և 3-րդ հոդվածների խախտում, և որ 1985 թվականի Կանադայի ընտրությունների մասին օրենքի 51-րդ հոդվածի «e» կետը, որով սահմանափակվում էր 2 և ավելի տարի ազատագրկման դատապարտված անձանց ձայնի իրավունքը, հակասահմանադրական է<sup>22</sup>:

Միե՛ն-ը «**Չերստն ընդդեմ Միացյալ Թագավորության**» գործի շրջանակներում ևս որոշեց՝ «դիմողն ազատագրկվածների ընտրական իրավունքների ավտոմատ և բացարձակ սահմանափակման վերաբերյալ գոյություն ունեցող կարգավորումների արդյունքում գրկված է եղել ձայնի իրավունքից»<sup>23</sup>:

«Չերստն ընդդեմ Միացյալ Թագավորության» գործով որոշմանը հաջորդեց Միե՛ն-ի «**Ֆրոդլն ընդդեմ Ավստրիայի**» որոշումը, որը, հիմք ընդունելով մախրող որոշումը, ևս ընդգծեց, որ առկա է Կոնվենցիայի N1 արձանագրության 3-րդ հոդվածի պահանջների խախտում<sup>24</sup>:

Թեև քննարկվող հիմնահարցի տեսանկյունից անկյունաքարային է Միե՛ն-ի «**Չերստն ընդդեմ Միացյալ Թագավորության**» գործի շրջանակներում ընդունված որոշումը, սակայն առանձնակի կարևորություն է ներկայացնում նաև Միե՛ն-ի 2010 թվականին «**Գրինսը և Մ. Տ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության**» գործի շրջանակներում ընդունված պիլոտային որոշումը<sup>25</sup>: Գործը վերաբերում է Միացյալ Թագավորությունում ազատագրկման դատապարտված և պատիժը կրող անձանց ազգային և եվրոպական ընտրություններին մասնակցելու իրավունքի բացարձակ սահմանափակմանը: Դատարանն այս անգամ ևս ընդգծեց, որ առկա է Կոնվենցիայի N1 արձանագրության 3-րդ հոդվածի խախտում: Ավելին, պիլոտային այս որոշումը կարևորվեց նաև նրանով, որ Դա-

<sup>20</sup> Международные избирательные стандарты. Сборник документов // Отв. ред.: кандидат юридических наук **А. А. Вешняков**; Науч. ред.: доктор юридических наук **В. И. Лысенко**. — М.: Издательство ВЕСЬ МИР, 2004. — С. 738-739.

<sup>21</sup> **Չերստն ընդդեմ Միացյալ Թագավորության** գործի կետ 43:

<sup>22</sup> Տե՛ս նույն տեղում կետ 25:

<sup>23</sup> Տե՛ս նույն տեղում կետ 51:

<sup>24</sup> «**Фродль против Австрии**» (Frodl v. Austria) (жалоба N 20201/04), от 8 апреля 2010 года, База данных прецедентного права ЕСПЧ HUDOC <http://cmiskp.echr.coe.int/ tkp 197 / search . asp ? skin =hudoc-en>

<sup>25</sup> «**Гринс и М.Т. против Соединенного Королевства**: (Greens and M.T. v. the United Kingdom), Жалобы NN 60041/08 и 60054/08), от 23 ноября 2010, База данных прецедентного права ЕСПЧ HUDOC, <http://cmiskp.ech.coe.int/ tkp 197 / search . asp?skin=hudoc-en>.



տարանն արձանագրեց՝ «Չերստն ընդդեմ Միացյալ Թագավորության» գործով կայացված որոշումից ի վեր Միացյալ Թագավորության կողմից չեն ձեռնարկվել համապատասխան ոլորտում օրենսդրական բարեփոխումներին ուղղված միջոցառումներ: **«Գրինսը և Մ. Տ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության»** գործի շրջանակներում ընդունված պիլոտային որոշումն ուժի մեջ մտավ 2011 թվականի ապրիլի 11-ին և Եվրոպայի Խորհրդի նախարարների Կոմիտեն բրիտանական իշխանությունների համար սահմանեց օրենսդրական բարեփոխումներին ուղղված գործողությունների պլանը մինչև 2011 թվականի հոկտեմբերի 11-ը ներկայացնելու պարտականություն: Սակայն ժամկետը հետագայում երկարացվեց և 6 ամիս՝ **«Սկոպայալան ընդդեմ Իտալիայի»** գործի շրջանակներում ընդունված որոշումից հետո, որը վերաբերում էր սպանության համար ցմահ ազատազրկման դատապարտված անձին ընտրական իրավունքից զրկելուն: Այդ որոշման ուժի մեջ մտնելուց հետո բրիտանական իշխանությունները կանգնեցին սկզբունքային որոշում կայացնելու ընտրության առջև: Այս կապակցությամբ Սահուտհենմայտոնի համալսարանի ավագ դասախոս **Էդ. Քեյստը** նշում է. **«Օրենսդրական նման բարեփոխումները կան ցույց կտան, թե որքանով է Միացյալ Թագավորությունը կարևորում կոնվենցիոն չափորոշիչները, հակառակ պարագայում՝ լուրջ հարված կհասցվի ՄԻԵԴ-ի հեղինակությանը»:**

Քննարկվող հիմնահարցի վերաբերյալ բոլոր գործերի վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ ՄԻԵԴ-ը թեկուզ և նշում է, որ մարդու իրավունքների սահմանափակման հարցում ազգային օրենսդիր մարմինն ունի

հայեցողություն, սակայն ազատազրկման դատապարտված անձանց ձայնի իրավունքի բացարձակ սահմանափակման խնդիրը չի կարելի դիտարկել պետության դիսկրեցիոն լիազորությունների տիրույթում և քանի որ դիմողները նման սահմանափակումների օրենսդրական նախատեսման արդյունքում զրկվել են իրենց այդ իրավունքից, ապա վերջիններս կարող էին պնդել, որ դարձել են նման չափորոշիչի գոհ:

**Ամփոփելով վերը ասվածը գտնում ենք՝**

- որ **ՀՀ Սահմանդրության 30-րդ հոդվածի 3-րդ մասը ազատազրկման դատապարտված և պատիժը կրող անձանց ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու իրավունքի համար նախատեսված սահմանափակումները չեն բխում ՀՀ Սահմանդրության 43-րդ հոդվածում նախատեսված նպատակներից, և նշված իրավունքների բացարձակ սահմանափակումները չեն համապատասխանում իրավական պետության որդեգրած սկզբունքներին,**

- նման սահմանափակումները հակասում են Կոնվենցիայի N 1 արձանագրության 3-րդ հոդվածի պահանջներին, և դա այն պայմաններում, որ իրավունքի գերակայության հայեցակարգից ելնելով ՀՀ Սահմանդրության 3-րդ հոդվածի 2-րդ մասը ուղղակի արձանագրում է, որ պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան, ինչը վերաբերելի է նաև ՄԻԵԴ-ի նախադեպային պրակտիկային:

**Манук МУРАДЯН**

Начальник кафедры теории государства и права и конституционного права Академии Учебного комплекса Полиции РА, кандидат юридических наук, доцент

Проблема соразмерного ограничения прав человека является одним из основополагающих вопросов Конституционного права. В статье обсуждается правомерность абсолютного ограничения права избирать и участвовать в референдуме граждан приговоренные к лишению свободы по вступившему в законную силу приговора суда и отбывающие наказание. В статье также обсуждается позиция Европейского Суда по правам человека относительно избирательного права заключенных.

**Manuk MURADYAN**

Head of the Department of Theory of State and Law and Constitutional Law of Academy of Police educational complex of RA, Phd in law, associate professor

The human rights adequate restriction is one of the contemporary issues of Constitutional Law. In this scientific article the lawfulness of absolute restriction of suffrage and right to participate in the referendum of citizens sentenced to prison by the court final judgment and serving sentence are discussed. The legal decisions of the European Court of Human Rights on suffrage of prisoners are also discussed.

# ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԴԵՐԸ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՄՅՈՒՄ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

## Նարինե ՏՈՆՈՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու

*Մարդու իրավունքների երաշխավորումը, ապահովումը և պաշտպանությունը ժողովրդավարական, իրավական պետության, քաղաքացիական հասարակության իրավաքաղաքական ու բարոյական առաջնահերթություններից է՝ սահմանադրական զարգացումների և պետական ու հանրային ինստիտուտների գործունեության առանցքը:*

*Մարդու իրավունքների պաշտպանությունն այն հիմնարար սկզբունքներից է, որոնց շնորհիվ ձևավորվում է պատշաճ վերաբերմունք ոչ միայն պետության, օրենքի, հասարակական կարգի, այլև քաղաքացիական հասարակության նկատմամբ, քանի որ քաղաքացիական հասարակության հաստունությունը և զարգացումն էսպես կախված են մարդու իրավունքների պաշտպանվածության մակարդակից, մարդու իրավունքների պաշտպանության ինստիտուտների զարգացածության աստիճանից և վերջիններիս փոխգործակցությունից:*

*Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում միասնական, նպատակաուղղված և համակարգված քաղաքականության իրականացումն այն կարևորագույն գործիքն է, որն օգտագործվում է արդի ժողովրդավարական պետության կողմից՝ ոլորտում իր ունեցած պարտավորությունները կատարելու նպատակով<sup>1</sup>:*

Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության պետաիրավական ընդհանուր մեխանիզմներում իր ուրույն տեղն է գրավում քրեաիրավական պաշտպանությունը, որը դրսևորվում է ներպետական և միջազգային-իրավական մեխանիզմներով, որոնցից յուրաքանչյուրն

ունի իր առանձնահատկությունները:

ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածը սահմանում է. «Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անբախտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից»:

<sup>1</sup> ՀՀ Նախագահի 2012թ. հոկտեմբերի 29-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը հաստատելու մասին» ՆԿ-159-Ն կարգադրության հավելված:

Մարդկային արժանապատվությունը գաղափարական և հոգևոր այն տիեզերական հիմքն է (universal), որով արդարացվում են մարդու իրավունքները և դրանց զարգացման անհրաժեշտությունը: Մարդը մյուս կենդանի էակներից տարբերվում է արժանապատվությամբ և այդ հատկանիշով նրանց շարքում գլխավոր տեղն է զբաղեցնում: «Մարդու իրավունքներ» արտահայտությունը հանրահայտ է: Այսօր դժվար է գտնել մեկին, ով չի լսել մարդու իրավունքների մասին: Ինչպես ցանկացած երևույթի, այնպես էլ մարդու իրավունքների վերաբերյալ կան ամենատարբեր, երբեմն՝ իրարամերձ ընկալումներ և բացատրություններ<sup>2</sup>:

Մարդու իրավունքներն ունեն գերակայություն մարդկային համակեցության բոլոր կանոնների նկատմամբ: Ուստի յուրաքանչյուր քաղաքակիրթ հասարակության մեջ պետության գործունեության հիմնական ուղղություններից մեկը պետք է լինի մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

«Մարդու իրավունքներ և ազատություններ» հասկացություններն ի հայտ են եկել դեռևս հնագույն դարաշրջաններում: Ազատության վերաբերյալ առաջին հիշատակումը հանդիպում է մ.թ.ա. 14-րդ դարում<sup>3</sup>: Մարդու իրավունքները գոյություն ունեին դեռևս Հին Հունաստանում և Հին Հռոմում, դրանք ամրագրում էին օրենքի ու օրինականության արժեքն ու կարևորությունը:

Մարդկության ամբողջ պատմությունն իրենից ներկայացնում է մարդու անընդմեջ պայքար պետության հետ՝ առավել շատ իրավունքներ ու ազատություններ ձեռք բերելու համար: Այդ պայքարը ներառում էր նաև արդեն իսկ նվաճած իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար առավել գործուն մեխանիզմներ

ձեռք բերելու միտում: Մարդկության զարգացման յուրաքանչյուր փուլի հետ զուգահեռ ավելի շատ սոցիալական շերտեր են սկսում ձեռք բերել իրավունքներ ու ազատություններ: Իսկ ժամանակակից հասարակությունում արդեն յուրաքանչյուր մարդ, անկախ իր դիրքից, ունի որոշակի անօտարելի իրավունքներ ու ազատություններ:

Մարդու իրավունքների պաշտպանության հիմնական կոնցեպցիաները զարգացել են 18-19-րդ դարերում<sup>4</sup>: Բացառապես դատավճռի հիման վրա անձին մեղավոր ճանաչելը, իրավախախտման և պատժի համաչափության սկզբունքը, պատշաճ իրավական ընթացակարգերի նախատեսումը, անմեղության կանխավարկածը, խոսքի, կրոնի ազատությունը, ազատ տեղաշարժման իրավունքը շարադրվել են դեռևս **Ազատությունների մեծ խարտիայում** (Magna Carta, 1215 թ.), իրենց հետագա զարգացումն են ստացել **Հաբեաս Կորպուս Ակտում** (Habeas Corpus Amendment Act 1679 թ.), **Իրավունքների մասին բիլլում** (The Bill of Rights, 1689 թ.), **ԱՄՆ Անկախության հռչակագրում** (The Declaration of Independence United States Code, 1776 թ.), **Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրում** (Ֆրանսիա, 1789 թ.) և այլն:

Մարդու իրավունքների վերաբերյալ նախնական իրավական ձևակերպումներն առաջին անգամ տեղ են գտել 1215թ. Անգլիական «Մագնա Կարտա» կոչվող փաստաթղթում, որը պայմանագիր էր անգլիական թագավորի և բարոնների միջև: Այդ պայմանագրով երաշխավորվում էր, որ ազատ մարդիկ չեն կարող ձերբակալվել, բանտարկվել կամ զրկվել իրենց ունեցվածքից այլ կերպ, քան դատարանի օրինական վճռով: Այլ կերպ ասած՝ դրանով կաշկանդվեց թագավորի կամ այլ արտոն-

<sup>2</sup> Ձինված ուժերում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ դասընթացի կազմակերպման և անցկացման ուսումնական ձեռնարկ, Երևան, 2013, էջ 9:

<sup>3</sup> International Human Rights Protection; Accessed February 21 2010; Available at: [http://www.cdphrc.uottawa.ca/eng/doc/inter-web/sitesint\\_e.php](http://www.cdphrc.uottawa.ca/eng/doc/inter-web/sitesint_e.php).

<sup>4</sup> Стѣи, Международные механизмы защиты прав человека/ Под ред. И. Ю. Лищина, Харьков, 2001, էջ 34:

յալ անձանց իրավունքը, որով մինչ այդ նրանք կարող էին ազատ մարդկանց կամ մայականորեն զրկել ազատությունից կամ ունեցվածքից:

Նշված իրավունքներն այսօրվա իմաստով մարդու իրավունքներ չեն կարող համարվել, քանի որ վերաբերում էին մարդկանց մի խմբի միայն՝ ազատ մարդկանց, ովքեր սեփականություն ունեին: Սակայն, եթե հաշվի առնենք, որ դա ժամանակակից ընկալմամբ մարդու իրավունքների ձևակերպման և կիրառման առաջին հաջող փորձն էր, ապա դրա արժեքն անգնահատելի է:

1689թ. անգլիական **իրավունքների բիլլը** պայմանագիր էր արդեն անգլիական պառլամենտի և թագավորի միջև: Այս պայմանագիրը նախորդի նման իրավունքներ էր վերապահում մարդկանց մեկ խմբի միայն, սակայն այն շարունակեց «**Մագնա Կարտա**»-ի տրամաբանությունը և թագավորի ու այլ արտոնյալների կամայականություններից պաշտպանվելու վահան ստեղծեց մարդկանց նաև այդ խմբի համար: Սա կարելի է հզոր առաջընթաց քայլ համարել, քանի որ դրանով ուղղակիորեն ճանաչվում էր մարդկանց տվյալ խմբի ինքնիշխանությունը, ինչը բացառիկ կարևոր էր:

Ինչպես իրենց ժամանակաշրջանում, այնպես էլ հետագայում այս պայմանագրերը հսկայական սնունդ տվեցին տարբեր երկրների հասարակություններում մարդու իրավունքների վերաբերյալ քննարկումների համար: Այդ հարցերին խորությամբ անդրադարձել են հայտնի մտածողներ **Ջոն Լոքը, Ժան-ժակ Ռուսոն** և ուրիշներ: Ըստ Ջոն Լոքի՝ բնական իրավունքը մարդու բնական վիճակն է, երբ մարդը ազատություն է վայելում և իրավունք ունի պաշտպանելու իրեն: Իսկ այնքանով, որքանով մարդը պաշտպանված է, նա պետք է պաշտպանի և պահպանի մնացած մարդկանց, և ոչ ոք չպետք է այլ անձի զրկի կյանքից, ազատությունից, առողջությունից

և կամ գույքից: Ըստ Լոքի՝ յուրաքանչյուր մարդ իրավունք ունի պատժել իրեն վնասողին և դրանով իսկ լինել բնական իրավունքի իրականացնողը, սակայն դա կարող է անել միայն այնքան ժամանակ, քանի դեռ այդ մարդու և մնացած մարդկանց միջև չի ձևավորվում այնպիսի պայմանավորվածություն, որն իր հերթին ձևավորում է որոշակի քաղաքական հասարակություն: Այդ համաձայնությամբ մարդկիկ իրենց ինքնիշխանությունը որոշակիորեն զիջում են կառավարությանը, որպեսզի վերջինս ապահովի օրենքների կիրառումը այնքան ժամանակ, քանի դեռ արդարացնում է իրեն տրված վստահությունը: Իսկ երբ կառավարությունը սկսում է կամայականություն գործել և ոտնձգել ընդդեմ մարդկանց կյանքի, ազատությունների և ունեցվածքի, ապա, ըստ Լոքի, կառավարությունը զրկվում է իշխանությունից, և վերջինս վերադառնում է մարդկանց:

Հարկ է նշել, որ միջազգային իրավական պաշտպանության ենթակա մարդու իրավունքներին բնորոշ են որոշակի սկզբունքներ, որոնք ամրագրված են **ՄԱԿ-ի կանոնադրության** մեջ, ինչպես նաև այլ ունիվերսալ և տարածաշրջանային ակտերում<sup>5</sup>: Մասնավորապես, մարդու իրավունքների ունիվերսալության սկզբունքը նշանակում է, որ մարդու իրավունքների ոլորտում գործող լայն ճանաչում ստացած միջազգային իրավական նորմերը ենթակա են պարտադիր կատարման բոլոր պետությունների կողմից ողջ միջազգային հանրության հանդեպ՝ անկախ որևէ պետության ազգային, կրոնական, քաղաքական առանձնահատկություններից<sup>6</sup>: Յուրաքանչյուր պետություն պարտավոր է պահպանել որոշակի հանընդհանուր ճանաչում ստացած միջազգային իրավական նորմեր ոչ միայն իր քաղաքացիների հանդեպ, այլ նաև օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց նկատմամբ:

<sup>5</sup> Մանրամասն տես՝ Human Rights in the Developed World; Accessed February 10 2010; American Journal of International Law.

<sup>6</sup> Տե՛ս, Международное публичное право/ Ответственный редактор К. А. Бекяшев, Москва, 2007, էջ 234:

Խտրականության արգելքի և հավասարության սկզբունքն արտահայտվում է նրանում, որ պետությունները պարտավոր են հետևել և ապահովել մարդու իրավունքների պաշտպանությունը յուրաքանչյուր անձի հանդեպ՝ անկախ վերջինիս ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, կրոնից կամ ցանկացած այլ նմանատիպ հիմքից:

Մարդու իրավունքների փոխկապվածության և անբաժանելիության սկզբունքին համապատասխան՝ միջազգային հանրությունը պետք է մարդու իրավունքները դիտարկի որպես գլոբալ երևույթ՝ հավասար և արդարացի հիմունքներով, միատեսակ մոտեցմամբ և ուշադրությամբ<sup>7</sup>: Պետությունները պարտավոր են պաշտպանել մարդու և քաղաքացու բոլոր իրավունքներն ու հիմնական ազատությունները՝ լինեն դրանք քաղաքական, քաղաքացիական, տնտեսական, մշակութային թե սոցիալական:

Մարդու իրավունքների և ազատությունների քրեաիրավական պաշտպանությունն իրականացվում է առավել վտանգավոր ոտնձգություններից մարդուն պաշտպանելիս, մասնավորաբար կյանքի դեմ իրականացվող բոլոր ոտնձգությունների համար նախատեսված է քրեական պատասխանատվություն: Չի բացառվում, որ պետությունն ստանձնի նաև նվազ վտանգավոր ոտնձգություններից պաշտպանությունը, եթե դրա համար լինեն անհրաժեշտ պայմաններ:

Ընդհանուր առմամբ, յուրաքանչյուր հասարակություն ինքն է որոշում, թե որ իրավունքը կամ ազատությունը պետք է պաշտպանվի քրեաիրավական մեխանիզ-

մով, իսկ որը՝ ոչ:

Եթե Հայաստանի 1961թ.-ի քրեական օրենսգիրքը հանցագործություն էր համարում սպեկուլյանտությունը, ապա գործող քրեական օրենսգիրքը այդպիսի նորմ չի նախատեսում՝ թողնելով յուրաքանչյուր մարդուն ինքնուրույն որոշել ապրանքի շուկայական արժեքը՝ չխախտելով մենաշնորհային օրենսդրությունը:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ պետությունն ինքն է քրեականացման և ապաքրեականացման մեխանիզմներով որոշում այս կամ այն իրավունքի կամ ազատության պաշտպանության աստիճանը: **Մ. Մարկոսյանի** կարծիքով քրեականացումը հանցագործություն չհամարվող արարքներից որոշակի հասարակական հարաբերությունների քրեաիրավական պաշտպանության անհրաժեշտության մասին որոշման ընդունումն ու այդ որոշումը քրեական օրենսգրքում ամրագրելն է, իսկ ապաքրեականացումը հանցագործություն համարվող արարքներից որոշակի հասարակական հարաբերությունների քրեաիրավական պաշտպանության անհրաժեշտության վերացման մասին որոշման ընդունումն ու այդ որոշումը քրեական օրենսգրքում ամրագրելն է<sup>8</sup>: Համաձայնվելով հեղինակի հետ նշենք, որ այն դեպքերում, երբ խոսքը վերաբերվում է մարդուն, ապա որոշակի հասարակական հարաբերությունների քրեաիրավական պաշտպանության հարցը քննարկելիս պետք է պարզել այդ հարաբերության հիմքում ընկած մարդու իրավունքի կամ ազատության բովանդակությունն ու առանձնահատկությունները:

<sup>7</sup> Մանրամասն տես՝ Human Rights in the Developed World; Accessed February 10 2010; American Journal of International Law.

<sup>8</sup> Տե՛ս, **Մ. Մարկոսյան**. Քրեականացման և ապաքրեականացման հիմնախնդիրները ՀՀ-ում: Սեղմագիր, Երևան, 2011, էջ 10:

# ԱՆՁԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## Լիլիթ ՂԱԶԱՆՉՅԱՆ

ՀՀ ԳԱԱ-ի Փիլիսոփայության, սոցիոլոգիայի  
և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

*«Քաղաքացիություն» հասկացությունը հայտնի է դեռևս հիմ ժամանականերից, երբ ամենասկզբնական իմաստով քաղաքացի էր համարվում այն անձը, որը սերտ կապ ուներ որոշակի պետության հետ և համարվում էր այդ պետության մի մասնիկը: «Քաղաքացի» հասկացությունը համարժեք իմաստով հանդիպում է նույնիսկ Աստվածաշնչում, որտեղ Պետրոս Առաքյալը, հանդիսանալով Հռոմի քաղաքացի, հերքում էր իր նկատմամբ մարմնական պատիժ կիրառելու օրենքի հնարավորությունը:*

Ընդհանրապես, յուրաքանչյուր պետությունում ապրող մարդկանց ամբողջությունը համարվում է նրա բնակչությունը, որի հիմնական մասը կազմում են առանձին կատեգորիայի ֆիզիկական անձինք՝ տվյալ պետության քաղաքացիները: Նրանք, որպես կանոն, տվյալ երկրի արմատական ազգի (ազգության) ներկայացուցիչներն են, որոնց անունով (կամ նրանց ապրած պատմական տարածքի անունով, օրինակ, ԱՄՆ, Անգլիա, Իտալիա, և այլն) կոչվում են նրանց ստեղծած պետությունները (օրինակ, Չայաստան, Վրաստան, Ռուսաստան և այլն)<sup>1</sup>: Այնուամենայնիվ, ժամանակակից ժողովրդավարական պետության բնակչությունը միատար չէ, քանզի նրա կազմում հանդես են գալիս մարդկանց ամենատարբեր խմբեր՝ կախված սեռից, տարիքից, ռասայից, ազգությունից, դավանանքից, բնակության վայրից, մասագիտությունից և այլ: Այդ հանգամանքներով էլ պայմանավորված է մարդու իրավունքների, ազատությունների և պարտականությունների ծավալը, և

այդ տեսանկյունից քաղաքացիությունը էական նշանակություն ունի անձի իրավական կարգավիճակի ձևավորման համար:

Ընդհանրապես, անձի իրավական կարգավիճակը, նրա փաստացի վիճակն է տվյալ հասարակության և պետության մեջ, որն ավելի կամ պակաս լրիվությամբ (նայած պետության կառավարման ձևից և քաղաքական ռեժիմից) իր արտացոլումն է գտնում իրավունքի մեջ<sup>2</sup>:

Քաղաքացու իրավական վիճակն էապես տարբերվում է երկրում ապրող մյուս անձանց իրավական վիճակից: Հետևաբար, քաղաքացիություն ունենալու հանգամանքն այն հիմնական նախապայմանն է, որի շնորհիվ անձին վերապահվում են համապատասխան պետության օրենսդրությամբ նախատեսված բոլոր իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև իրականացվում է նրա շահերի պաշտպանությունը ինչպես երկրի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Դա նշանակում է, որ Չայաստանի

<sup>1</sup> Տե՛ս, Չայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք (պատ. խմբագիր՝ Այվազյան Ն.Ա.), Երևան, 2008, էջ 353:

<sup>2</sup> Տե՛ս, Այվազյան Վ.Ն., Մարդու իրավունքներ, Տիգրան Մեծ, Երևան, 2002, էջ 43:

Հանրապետությունը (այսուհետ՝ ՀՀ), նրա դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունները և դրանց պաշտոնատար անձինք, պարտավոր են պաշտպանել Հանրապետության սահմաններից դուրս գտնվող ՀՀ քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները, համապատասխան քայլեր ձեռնարկել վերջիններիս խախտված իրավունքների և ազատությունների վերականգնման ուղղությամբ՝ նրանց բնակության վայրի օրենսդրությամբ և միջազգային իրավունքի նորմերին համապատասխան:

Ինչպես միջազգային պրակտիկան, այնպես էլ պետությունների փորձը ցույց են տալիս, որ քաղաքացու իրավունքներն ավելի լայն են մարդու իրավունքներից և ազատություններից, ուստի նրանց իրավական կարգավիճակը շատ ավելի նախընտրելի է անձի ցանկացած այլ կացության վիճակից: Այստեղ խոսքը գնում է քաղաքական և մի շարք սոցիալ-տնտեսական իրավունքների մասին, որոնցից բացառապես օգտվում են տվյալ պետության քաղաքացիները: Ներկայումս քաղաքացիության հետ կապված բոլոր հարաբերությունները կարգավորվում են ՀՀ Սահմանադրությամբ (11.3 հոդվ.) և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքով<sup>3</sup>:

Պետության և իրավունքի տեսության՝ որպես գիտության, համար անկյունաքարային նշանակություն ունեն քաղաքացիության, որպես անձի իրավական կարգավիճակի տարրի ինչպես սոցիալական հիմքերի, անպես էլ իրավաբանական բովանդակության հիմնախնդիրների պարզաբանումը:

«Քաղաքացիություն» հասկացությունը բարդ հասարական, իրավաքաղաքական

երևույթ է, որը իր գոյության սկզբից ունեցել է բազմաթիվ մեկնաբանություններ և սահմանումներ:

Իրավաբանական գրականությունում, իրավագետներից ոմանք (**Ա.Ի.Լեայոշկին, Ն.Պ. Ֆարբեր**) «քաղաքացիություն» հասկացության ներքո շեշտադրում են անձի (**իրավական**) **պատկանելությունը կոնկրետ** պետությանը<sup>4</sup>: Երբեմն, հստակեցվում է այդպիսի պատկանելիության էությունը, և քաղաքացիությունը բնութագրվում է, կա՛մ որպես «իրավական պատկանելիություն պետությանը», «օրենքով ամրագրված պատկանելիություն» կա՛մ էլ որպես անձի սոցիալ-քաղաքական պատկանելիություն համապատասխան պետությանը, միաժամանակ ընդգծելով դրա իրավական բնույթը (**Ա. Ի. Դենիսով, Մ.Գ. Կիրիչենկո, Ա. Խ. Մախնենկո** և այլոք)<sup>5</sup>: Այդպիսի դիրքորոշումը սատարում են նաև այն իրավագետները, որոնց իրավաընկալմամբ **քաղաքացիությունը՝ անձի պատկանելիությունն է պետությանը, արտահայտված անձի և պետության միջև կայուն իրավական կապով, որի ուժով անձը ձեռք է բերում պետության կողմից պաշտպանության իրավունք ինչպես երկրի ներսում, այնպես էլ դրա սահմաններից դուրս (Վ. Մ. Սաֆրոնով, Բ. Վ. Շետինին** և այլոք)<sup>6</sup>:

«Պետությանն անձի պատկանելիությունը» կարելի է մեկնաբանել որպես անձի «պետությանն անդամակցություն», կամ նույնիսկ «հպատակություն» որը բնորոշ է իրավաբանական պոզիտիվիզմի ժամանակաշրջանում ծաղկում ապրած պետության հիմնական հատկանիշների (ժողովուրդ, տարածք, իշխանություն) հայեցակարգին:

«Քաղաքացիություն» հասկացությունը սերտորեն առնչվում է նաև «հպատակու-

<sup>3</sup> Տե՛ս, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենք /ընդունվել է 16.11.1995թ., փոփոխություններ և լրացումներ՝ 26.02.2007թ./

<sup>4</sup> Տե՛ս, **Лепешкин А.И.**, Курс советского государственного права. М., 1961. Т.1. С.457; **Фарбер Н.П.** Гражданство //БСЭ, М., 1972. Т.7. С.239-240

<sup>5</sup> Տե՛ս, **Денисов А.И., Кириченко М.Г.** Советское государственное право.М., 1957.С. 137; **Махненко А.Х.** Основные институты государственного права европейских стран народной демократии.М., 1964, С.171

<sup>6</sup> Տե՛ս, Курс советского государственного права/Под ред. **Б.В. Щетинина, А.Н. Горшенева**, М., 1971. С.197; **Сафронов В.М.**, Советское государство и основы правового положения его граждан, М., 1973. С.9-10, **Щетинин Б.В.** Проблемы теории советского государственного права. М., 1974. С.177-179



թյուն» հասկացության հետ, որը հիմնականում կապված է միապետության հետ և արտահայտում է միապետի և անձի միջև կապը: Հայտնի է, որ ֆեոդալական միապետության պայմաններում միապետական պետական կառավարման ձև ունեցող բոլոր պետությունների քաղաքացիները համարվում էին միապետի հպատակները: Այնուամենայնիվ, ժամանակակից ըմբռմամբ, «քաղաքացիություն» և «հպատակություն» հասկացությունները ամբողջությամբ նույնացվում են, պարզապես՝ «քաղաքացիություն» օգտագործվում է հանրապետական կառավարման ձև ունեցող երկրներում, իսկ «հպատակությունը»՝ միապետական կառավարման ձևի պետություններում (Օրինակ՝ ԱՄՆ-ում՝ ԱՄՆ-ի քաղաքացի, սակայն Մեծ Բրիտանիայում՝ Նորին Մեծության հպատակ):

Ահիայտ է, որ իրականում, անձը չի կարող ո՛չ պետության անդամ լինել, ո՛չ էլ պատկանել պետությանը, դրա ուղիղ իմաստով, քանի որ պետությունը պետականորեն կազմակերպված հասարակության հանրային կառույց է: Այդ պատճառով, անձի պատկանելիությունը պետությանը հարկավոր է հանկանալ, որպես անձի իրավաբանորեն ձևակերպված (ամրագրված), պատկանելիությունը (նրա քաղաքացիությունը) պետական-կազմակերպված հասարակությանը:

Պետության և իրավունքի տեսություն գիտության վառ ներկայացուցիչ **Օ.Կուտաֆինը** քաղաքացիությունը բնորոշում է որպես **անձի պատկանելիություն պետության (երկրի) արմատական ազգին (ազգությանը)**, որը ծնուն է պետության հետ անձի կայուն իրավական կապ՝ արտացոլվելով փոխադարձ իրավունքների և պարտականությունների համակցության մեջ (ընդձ. մերն է՝ Լ.Ղ.)<sup>7</sup>:

**Բ. Էրզենն**, իր հերթին, սատարում է այդ

դիրքորոշումը՝ ավելացնելով, որ քաղաքացիությունը անձի և պետության փոխհարաբերությունն է, որտեղ անհատը քաղաքացիության ձեռքբերման իրավունք ունի, **իսկ պետությանը պարտավոր է նախատեսել քաղաքացիության տրամադրման հիմքերը, կարգն ու պայմանները** (ընդձ. մերն է՝ Լ.Ղ.)<sup>8</sup>: Վերջիններս չեն կարող կիրառվել առանց հստակ հիմքերի, կամ էլ խտրական բնույթ ունենալ:

Մեր կարծիքով՝ քաղաքացիության վերը նշված սահմանումները ճիշտ լինելով իրենց ձևական (տեխնիկական-իրավաբանական) հատկանիշներով՝ նեղ են բովանդակային առումով և լիովին չեն բացահայտում քաղաքացիության բովանդակությունը, էությունն ու նշանակությունը: Այսպես, **Օ.Կուտաֆինի** սահմանած քաղաքացիության էությունը բխում է ոչ թե քաղաքացիության իրավական, այլ սոցիալական բովանդակությունից, որի հիմնական տեսակներից մեկն էլ անձի պատկանելիությունն է այն երկրի արմատական ազգին (ազգությանը), որի քաղաքացիությունը օժտված է (կամ ցանկանում է այն ձեռք բերել) տվյալ անձը: **Բ. Էրզենի** դիրքորոշման մեջ նույնպես չի բացահայտվում քաղաքացիության բովանդակությունը, քանի որ քաղաքացիության տրամադրման հիմքերն ու կարգը, հանդիսանում են անձի քաղաքացիության ձեռքբերումից բխող իրավաբանական հետևանքներ:

Հատկանշական է, որ խորհրդային իրավաբանական գրականությունում քաղաքացիությունը հաճախ սահմանվում է որպես պետության հետ **անձի հատուկ իրավաբանական կապ (Վ.Յա. Բոյցով, Դ.Լ. Չլոտոպոլսկի, Լ.Դ.Վոևկովի, Օ.Օ.Միրոնով, Յա. Ն. Ումանսկի, Ս.Ո. Չերնիչենկո, Ո.Ս. Շևցով և այլոք)**<sup>9</sup>:

Կարծում ենք, քաղաքացիության այդ

<sup>7</sup> Տե՛ս, **Кутафин О.Е.** Российское гражданство, М., 2003.С. 81

<sup>8</sup> Տե՛ս, **Эбзев Б.С.** Человек, народ, государство в конституционном строе Российской Федерации, М., 2005. С. 276-280

<sup>9</sup> Մանրամասն տե՛ս **Златопольский Д.Л.** Государственное устройство СССР. М., 1960.С. 244 - 246; **Черниченко С.В.** К вопросу о значении гражданства в современном международном праве // Вестник МГУ. Сер. X. Право. 1963, N 3, С. 57 — 58; **Шевцов В.С.** Советское гражданство. М., 1965. С. 5, 41; Он же. Гражданство в Советском союзе. М., 1969. С.14, 20-22, 31; **Уманский Я.Н.** Советское государственное право. М., 1970.С. 134; Международное право / Под ред. **И.И. Лукашука, В.А. Василенко.** Киев, 1971. С. 96; **Мионов О.О.** Субъекты советского государственного права. Саратов, 1975.С.69 — 71.

բնորոշումը լիարժեք չէ և անհրաժեշտ է բացահայտել գլխավորը՝ քաղաքացու և պետության կապի բովանդակությունը:

Արդի պետության և իրավունքի տեսությունում դիտարկվում է այդ հարցի լուծման երկու տարբերակ:

**1) Առաջին մոտեցման համաձայն**, քաղաքացիության (որպես պետության հետ անձի իրավական կապի) բովանդակությունը դիտարկվում է **պետությամբ սահմանված անձի իրավունքների և պարտականությունների համակցության (միասնության) համատեքստում**: Այստեղ իրավաբանական իրավունքներն ու պարտականությունները դիտարկվում են որպես բուն քաղաքացիություն, այլ ոչ թե որոշակի քաղաքացիության ձեռքը բերումից բխող իրավական հետևանքներ: Հետևաբար, անձի իրավական կարգավիճակը բնութագրվում է, ոչ թե որպես անձի և պետության որոշակի իրավական կապի դրսևորում, այլ որպես կապն ինքնին, այսինքն՝ քաղաքացիությունը, (որպես անձի և պետության հատուկ իրավական կապ) նույնացվում է քաղաքացու իրավական կարգավիճակի հետ, որը անթույլատրելի է:

Կարծում ենք, քաղաքացիության և իրավական կարգավիճակի անխզելի կապը չի կարող հիմք հանդիսանալ իրավական կարգավիճակի որպես քաղաքացիության բովանդակություն հռչակելու համար, այլ ընդհակառակը՝ «քաղաքացիությունը» իրավական վիճակի ձեռք բեման, տնօրինման նախադրյալ է: Հետևաբար, անթույլատրելի է իրավական կարգավիճակի բովանդակությունը կախման մեջ դնել միայն «քաղաքացիություն» հայեցակարգից, քանի որ եթե իրավական կարգավիճակը սահմանվի միայն քաղաքացիությամբ, ապա անհայտ կմնա թե ինչից է կախված պետությունում օտարերկրացիների, փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց իրավական կարգավիճակը: Անձի իրավական կար-

գավիճակի փոփոխությունը դեռևս չի վկայում նրա քաղաքացիության փոփոխության մասին: Քաղաքացու իրավական վիճակը քաղաքացիության ցուցանիշն է, այլ ոչ թե բովանդակությունը:

**2) Երկրորդ մոտեցման դեպքում** քաղաքացիության բովանդակությունը (որպես պետության հետ անձի հատուկ իրավական կապ) որոշվում է **պետության և անձի միջև փոխադարձ իրավաբանական իրավունքների և պարտականությունների առկայությամբ**<sup>10</sup>: Այլ կերպ ասած՝ քաղաքացիությունը ներկայացվում է որպես հատուկ իրավահարաբերություն, որի սուբյեկտներ են հանդիսանում մի կողմից պետությունը, իսկ մյուս կողմից՝ անձը: Այսպես, **Վ. Բոյցովը** քաղաքացիությունը սահմանում է որպես քաղաքացու և պետության միջև ճիշտ փոխհարաբերություններ և որոնց բովանդակությունն են կազմում **քաղաքացու և պետության փոխադարձ սուբյեկտիվ իրավունքներն ու պարտականությունները** (ընդօ. մերն է՝ Լ.Ղ.)<sup>11</sup>: Այսպես, պետությունը պահանջում է քաղաքացուց ենթարկվել օրինականությանը և համապատասխանաբար՝ քաղաքացին պարտավոր է կատարել իրեն վերապահված բոլոր պարտականությունները: Միաժամանակ, քաղաքացին իրավասու է պահանջել պետությունից պաշտպանել իր իրավունքները, ազատությունները և օրինական շահերը (այդ թվում նաև երկրի սահմաններից դուրս), իսկ պետությունը պարտավոր է իրականացնել այդ պաշտպանությունը:

Քաղաքացիության, **որպես իրավահարաբերության** հասկացությանն իմաստով մոտ են այն հեղինակները, որոնք սահմանում են քաղաքացիությունը, որպես անձի հատուկ իրավական կապ կոնկրետ որոշակի պետության հետ, որն արտահայտվում է պետության նկատմամբ անձի իրավունքների և պարտականությունների համակցությամբ:

<sup>10</sup> Մանրամասն տե՛ս **Кудрявцев В.Н.** Юридическая природа и сущность основных прав гражданина СССР// Сборник научных работ слушателей Академии. М., 1948, Вып. 1. С. 4; **Беер Я., Ковач И., Самел Л.** Государственное право Венгерской Народной Республики. М., 1963. С. 252 - 253; **Фарбер И.Е., Ржевский В.А.** Вопросы теории советского конституционного права. Саратов, 1967, Вып. 1, стр. 57-59, 63; **Попович С.** Административное право: Общая часть. М., 1968, С. 391; **Миронов О.О.** Субъекты советского государственного права. С. 71

<sup>11</sup> Տե՛ս, **Бойцов В. Я.** К вопросу о понятии гражданства как государственно-правового отношения. М., 1963. С. 22 - 23.

Ըստ **Լ.Գ.Վոևոդինի**՝ քաղաքացիության բովանդակությունը կազմում են անձի և պետության **յուրահատուկ** փոխադարձ իրավունքների և պարտականությունների համակցությունը<sup>12</sup>: **Ս.Վ. Չերնիչենկոն** բնութագրում է քննարկման առարկան, որպես **«պետության հետ անձի կայուն իրավական կապ՝ արտահայտված իրենց փոխադարձ իրավունքներում և պարտականություններում»**<sup>13</sup>: Այնուամենայնիվ, մեր կարծիքով, այս դիրքորոշումը չի համապատասխանում ներկայիս համաշխարհային իրավական, քաղաքական զարգացումներին, քանի որ քաղաքացիությունը, որպես անձի իրավական կարգավիճակի տարր, դարձել է բարդ և բազմաբովանդակ հասկացություն: Այսինքն՝ համապատասխան իրավունքների և պարտականությունների պարզ զումարը չի կազմում քաղաքացիության բովանդակությունը: Միայն միասնական իրավական կապ կազմող դրանց հատուկ որակով բնութագրվող որոշակի համակցությունն է, հնարավորություն տալիս խոսել քաղաքացիության մասին:

Հատկանշական է, որ քաղաքացիության բոլոր վերը շարադրված օրինակներում խոսվում է ոչ թե հենց քաղաքացիության բովանդակության, այլ **իրավական հետևանքների մասին**, որոնք ծագում են քաղաքացիության փաստով, այսինքն՝ կոնկրետ պետության կողմից անձին որպես իր քաղաքացի ճանաչման հետևանքով: **Պետության և քաղաքացու իրավունքների, պարտականությունների տեսքով այդ հետևանքների ցանկը կարելի է լրացնել ընդգրկելով անձի և պետության բոլոր իրավաբանական իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև այդ իրավունքներ իրացման երաշխիքներով:**

Ի վերջո, քաղաքացիությունը, որպես «իրավական կապ», որպես «իրավահարաբերություն», կամ որպես «իրավական վիճակ», բնութագրվում է պետության և անձի փոխադարձ իրավաբանական իրավունքների և պարտականությունների համակցությամբ, այսինքն՝ **հանգում է պետության**

**մեջ քաղաքացու իրավական կարգավիճակին:**

Այսպիսով, քաղաքացիության բովանդակության, որպես անձի և պետության միջև հատուկ իրավան կապի հասկացության, բացահայտման առաջին և երկրորդ մոտեցումները միաձուլվում են: Հետևաբար, համաձայն ենք **Ս.Ս. Կաշկինի և Վ.Ս. Շևցովի** այն դիրքորոշման հետ, որ քաղաքացիության բնորոշումը որպես անձի և պետության իրավահարաբերություն, կրում է արհեստական բնույթ<sup>14</sup>:

«Քաղաքացիություն» հասկացության, որպես իրավահարաբերության բնորոշումը, հանգում է քաղաքացիության որպես քաղաքացու սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների համակցության սահմանման: Այն շղարշում է քաղաքացիության հասկացության իրական էությունն ու բովանդակությունը, և հանգեցնում «քաղաքացիության» և «իրավական կարգավիճակ» հասկացությունների նույնացմանը: Եվ ընդհակառակը՝ քաղաքացիության ուղղակի կամ անուղղակի նույնականացումը իրավական կարգավիճակի հետ, կամա թե ակամա, ստիպում է իրավագետներին ընկալել «քաղաքացիությունը» որպես «իրավահարաբերություն»: Այդպիսի մոտեցումը, **Ուիլյամ և Ուոլջ**՝ անտեսում է պետության ծագումնաբանությունն ու դրա հետ անխախտելիորեն կապված քաղաքացիության հասկացությունը՝ էությունն ու նպատակը: **Երկրորդ**՝ հնարավորություն չի ընձեռնում բացահայտել քաղաքացիության, որպես սոցիալ-իրավական երևույթի բովանդակությունը: **Երրորդ**՝ հանգեցնում է պայմանների, պատճառների (քաղաքացիության) և հետևանքների (քաղաքացու իրավական կարգավիճակ, դրա պաշտպանությունն ու երաշխավորվածությունը և այլն) նույնականացմանը:

Հայտնի է, որ իրավաբանական գրականությունում, ընդհանրապես, իրավական կապերը դիտարկվում են որպես իրավահարաբերություններ և դասակարգվում՝ ընդհանուրի և հատուկի, բացարձակի և հարաբերականի, (կապված սուբյեկտների շրջա-

<sup>12</sup> Տե՛ս, **Воеводин Л.Д.** Юридический статус личности в России.1997.С.56.

<sup>13</sup> Տե՛ս, **Черниченко С.В.** Международно-правовые вопросы гражданства, М., 1968.С. 22-23.

<sup>14</sup> Տե՛ս, **Кашкин С.С.** Советское гражданство.М., 125.С. 4; **Шевцов В.С.** Гражданство в Советском союзном государстве. М., 1969.С. 19-20.

նակների և իրավաբանական իրավունքներ և պարտականություններ կրող սուբյեկտների միջև կապերի բնույթից), ինչպես նաև ճյուղային՝ (սահմանադրաիրավական, քաղաքացիաիրավական, վարչաիրավական և այլ), կախված այն իրավունքի ճյուղից որոնցում դրանք ձևավորվում են:

**Ն.Վիտրուկի** կարծիքով՝ իրավական կապերի տեսակների ցանկը պետք է լրացվի մեկ այլ, **հատուկ իրավական կապով՝ ըստ պատկանելիության իրավական կապով** (ընդգծումը մերն է՝ Լ.Ղ.)<sup>15</sup>: Հենց քաղաքացիությունն է համդիսանում հատուկ իրավական վիճակ, անձի կոնկրետ պետությանը պատկանելիության իրավական կապն է: Պատությունը, ճանաչելով անձի պատկանելիությունը (ավելի ճիշտ՝ հպատակությունը-Լ.Ղ.), միաժամանակ ստանձնում է այդ «իրավական կապի պատկանելության» պաշտպանությունը (պահպանությունը): Այստեղ ակնհայտ է դառնում երկու կողմերի ներքին ուղղի կապը պետության, որպես իրավահարաբերության սուբյեկտի, պաշտպանիչ գործունեության մեջ և որի միջոցով տվյալ դեպքում արտահայտվում է (երևան է գալիս) այդ կապի էությունն ու սոցիալական նշանակությունը: Այդ հարաբերությունը չի կարող նենգափոխվել տարբեր սուբյեկտների կապերով: Հենց այդպիսի նենգափոխություն են իրականացնում այն հեղինակները, որոնք քաղաքացիությունը դիտարկում են որպես իրավահարաբերության տարբեր սուբյեկտների միջև կապ:

Հետևաբար, «պետության կողմից քաղաքացիության ճանաչումը» չի կարող մի հարթության վրա գտնվել պետության քաղաքացի հանդիսացող անձի իրավաբանական իրավունքների և պարտականությունների սահմանման հետ, քանի որ դրանք տարբեր հասկացություններ են և չեն կարող նույնականացվել: Ցավոք, դա չեն նկատում այն հեղինակները, որոնք դիտարկում են քաղաքացիությունը որպես անձի և պետության միջև իրավական կապ և իրավահարաբերություն, արտահայտված՝ փոխադարձ իրավունքներով և պարտականություններով: Այլ կերպ ասած՝ անհրաժեշտ է հստակորեն տարբերակել կապերի տեսակները:

Գոյություն ունեցող համընդհանուր ճանաչում ստացած իրավական (լեզալ՝ օրենքում ամրագրված) քաղաքացիության սահմանումները տարբերակվում են յուրահատկությամբ: **Նախ՝** քաղաքացիությունը դիտարկվում է որպես պետության անձի իրավական պատկանելություն: **Երկրորդ՝** քաղաքացիությունը ընկալվում է որպես անձի և պետության միություն, կամ որպես անձի անդամակցություն տվյալ պետությանը: **Երրորդ՝** քաղաքացիությունը սահմանվում է որպես պետության հետ անձի կայուն իրավական կամ (քաղաքական-իրավական կապ), որն արտահայտված է նրանց փոխադարձ իրավունքներում, պարտականություններում և պատասխանատվության մեջ: Օրինակ՝ «ԽՍՀՄ Քաղաքացիության մասին» օրենքի նախաբանում նշված էր սովետական քաղաքացիության այլ բանաձև. **«ԽՍՀՄ քաղաքացիությունը որոշում է (ընդգծումը մերն է՝ Լ.Ղ.) անձի կայուն քաղաքական-իրավական կապը Սովետական պետության հետ, արտացոլվում իրենց փոխադարձ իրավունքներում և պարտականություններում»**<sup>16</sup>: Նշված բանաձև ունի երկակի իմաստ, կամ քաղաքացիությունը որոշում է պետության պատկանելիության կայուն իրավական կապը միջնորդավորված՝ քաղաքացիության ճանաչման, ձեռքբերման, դադարեցման ուղղված փոխադարձ իրավունքներով և պարտականություններով, կամ էլ քաղաքացիությունը սահմանում է, որոշում է կայուն իրավական կապը, որպես քաղաքացիության ձեռքբերման իրավաբանական հետևանքներ, միջնորդավորված՝ փոխադարձ իրավունքներով և պարտականություններով, մասնավորապես ընգրկված քաղաքացու իրավական կարգավիճակում:

Կարծում ենք՝ քաղաքացիությունը, որպես իրավական երևույթ, անձի պետությանը պատկանելիության անընդհատ, կայուն իրավական կապն է, որը միջնորդավորվում է քաղաքացիության ուղրտում անձի իրավունքների համակցությամբ (քաղաքացիության ճանաչում, ձեռքբերում, դադարեցում):

Պետության և իրավունքի տեսության՝

<sup>15</sup> Տե՛ս, **Витрук Н.В.** Общая теория правового положения личности. Норма. М. С.96; **Նույնի** Основы теории правового положения личности в социалистическом обществе. М., 1968.С.29.

<sup>16</sup> Закон РСФСР “О гражданстве РСФСР”, (23.05.1990г.-06.1993г.), преамбула.

որպես գիտության, համար անկյունաքարային նշանակություն ունեն քաղաքացիության, որպես անձի իրավական կարգավիճակի տարրի ինչպես սոցիալական հիմքերի, անպես էլ իրավաբանական բովանդակության հիմնախնդիրների պարզաբանումը:

Հարկ է նշել, որ քաղաքացիության **սոցիալական հիմքը (բովանդակությունը)** անձի փաստացի պատկանելիությունն է պետական-կազմավորված հասարակությանը, որի շրջանակներում իրականացվում է պետական իշխանությունը: Անհատի այդպիսի պատկանելիությունն արտացոլվում է քաղաքացիության ինստիտուտում, որի նորմերը սահմանում են քաղաքացիության ձեռքբերման և դադարեցման հիմքերն ու կարգը:

Հարկ է նշել, որ քաղաքացիության իրավաբանական բովանդակությունը միշտ չէ, որ կարող է հանդնկնել դրա սոցիալական հիմքի՝ տվյալ պետության տարածքում անձի փաստացի բնակության հետ: Ընդդրում, արդի ժողովրդավարական պետություններում, գոյություն ունի քաղաքացիների և բնակչության թվաքանակի հավասարացման մշտական միտում: Կատարյալ տարբերակ է, երբ պետության տարածքում բնակչության փաստացի թվաքանակը համապատասխանում է տվյալ պետության քաղաքացիների ընդհանուր թվին: Կարծում ենք, ժամանակակից համաշխարհային պայմաններում դա անհնարին է. քանի որ միջպետական փոխհարաբերությունները ծնում են մարդկանց միջպետական տեղաշարժեր:

Ժամանակակից պայմաններում, պետությունների գործող օրենսդրությունների համաձայն, քաղաքացիության ձեռքբերման համար անհրաժեշտ չէ անձի տվյալ երկրի տարածքում մշտական, կամ պարտադիր բնակությունը, այսինքն՝ քաղաքացիություն ունենալու համար ոչ միշտ չէ, որ իրականացվում է անձի և պետության միջև տա-

րածքային փաստացի կապի սկզբունքը: Հետևաբար, անձի կայուն կապը պետության հետ (նրա պատկանելիությունը պետությանը), այսինքն՝ քաղաքացիությանը, պահպանվում է նաև քաղաքացու հայրենի պետության սահմաններից դուրս գտնվելու դեպքում:

Պետության և իրավունքի տեսությունում վերջին ժամանակաշրջանում, կարելի է հանդիպել «քաղաքացիությունը» բնութագրող այնպիսի տարրերի, ինչպիսիք են՝ նրա հոգևոր-բարոյական բաղադրիչը, անձի հոգևոր կապը պետության արժեքների հետ, ազգակցությունը, մարդկանց ակտիվ-պատասխանատու պահվածքը, և այլն<sup>17</sup>:

Արդի պետության և իրավունքի տեսությունում երևան է գալիս քաղաքացիության սոցիալական բովանդակության կարևորության հարցը, որը կանխորոշում է քաղաքացիության ձեռքբերումը, դրա դադարեցման գործընթացը:

Համընդհանուր ճանաչում ստացած սահմանման համաձայն՝ **քաղաքացիությունը պետության հետ անձի կայուն իրավական կապն է՝ հիմնված պետության կողմից տվյալ անձին որպես իր քաղաքացի իրավաբանական ճանաչման վրա, որն օրենքով նախատեսված դեպքում պետության և քաղաքացու համար առաջ է բերում փոխադարձ իրավունքներ, պարտականություններ և պատասխանատվություն**<sup>18</sup>

Այս սահմանումից ակնհայտ է, որ քաղաքացիությունը (դրա իրավաբանական բովանդակությունը) բնութագրվում է մի շարք բնորոշ գծերով.

- 1) պետության և անձի միջև կապի իրավական բնույթը,
- 2) պետության կողմից անձին, որպես իր քաղաքացի ճանաչելը,
- 3) պետության և անձի միջև կապի կայունությունը,
- 4) փոխադարձ իրավունքների, պարտա-

<sup>17</sup> Տե՛ս, **Витрук Н.В.** Роль института советского гражданства в формировании и развитии новой исторической общности советского народа // Актуальные проблемы истории государства и права. М., 1976. С.138-139; **Беликин А.А.** Ибранные работы 90-х годов по конституционному праву. СПб. 2003. С.142-148; **Миронов О.О.** Гражданин Отечества. М., 2006. С.14-17;

<sup>18</sup> Տե՛ս, **Վ.Այվազյան**, Մարդու իրավունքներ, 2-րդ լրանված հրատարակ., Եր. Տիգրան Մեծ, 2007, էջ 65-66, Հայաստանի հանրապետության սահմանադրական իրավունք / պատ. խմբագ. **Ն.Ա.Այվազյան**, Եր.,2008, էջ 353; Теория государства и права /Под общ. ред. **О.Мартышина**. Норма, М., 2007. С.466-467.

կանությունների և պատասխանատվության առաջացումը:

**1) Պետության և քաղաքացու միջև կապի իրավաբանական բնույթն արտահայտվում է նրանում, որ պետությունը ճանաչում է անձին որպես իր քաղաքացի, և Սահմանադրությամբ ու համապատասխան իրավական ակտերով ամրագրում է այդ կապը:** Դրա հետևանքով, հիմնականում պետությունները հստակ տարնաջատում են քաղաքացու իրավունքները մարդու իրավունքներից, վերջինիս ընձեռնելով իրավունքների ավելի լայն շրջանակ: Այսպես, բոլոր այն դեպքերում, երբ խոսքը վերաբերվում է ընդհանրապես մարդու իրավունքներին, միջազգային իրավական փաստաթղթերում, ինչպես նաև Սահմանադրությունում, օգտագործվում է «յուրաքանչյուր ոք», «մարդ», «մարդուն» ձևակերպումները, իսկ երբ խոսքը վերաբերվում է քաղաքացիների իրավունքներին և ազատություններին, ապա Սահմանադրությունը օգտագործում է «յուրաքանչյուր քաղաքացի» արտահայտությունը<sup>19</sup>:

Ավելին, պետության և քաղաքացու միջև զոյություն ունեցող կապը ամրագրվում է պետության կողմից տրված հատուկ փաստաթղթով՝ անձնագրով, որում, ինչպես հայտնի է, գրանցվում են անձի անունը, ազգանունը, սեռը, քաղաքացիությունը, ծննդյան տարեթիվն ու անսաթիվը, դրա տրման և ուժի մեջ գտնվելու ժամկետը և այլ նշումներ:

**2) Պետության և անձի միջև կայունությունը, որպես քաղաքացիությանը բնորոշ գիծ արտահայտվում է դրանց մշտական բնույթի մեջ, որից բխում է, որ այդ կապերը ծագում են ծնունդով և դադարում անձի մահվամբ:** Ընդ որում, «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը սահմանում է քաղաքացիության դադարման հատուկ կարգ, համաձայն որի՝ քաղաքացին միակողմանի չի կարող իր հայեցողությամբ դադարեցնել քաղաքացիությունը, այսինքն՝ Հայաստանի քաղաքացիությունից հրա-

ժարվելը կամ այլ պետության քաղաքացիություն ընդունելը ինքնին չի հանգեցնում հանրապետության քաղաքացիության կորստին, կամ ՀՀ քաղաքացու ամուսնությունն օտարերկրյա քաղաքացու հետ ինքնին քաղաքացիության փոփոխման չի հանգեցնում: Ավելին, արգելվում է նաև պետությանը անձին անհիմն, միակողմանի, իր հայեցողությամբ, ապօրինաբար զրկել քաղաքացիությունից, կամ արգելել արտասահմանում գտնվող իր քաղաքացուն վերադառնալ հայրենիք<sup>20</sup>:

**3) Քաղաքացիության ուժով պետության և անձի միջև փոխադարձ իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության առաջացումը պայմանավորված է տվյալ երկրի պետական և քաղաքական ռեժիմով:** Ժողովրդավարական, իրավական պետությունում պետության և քաղաքացու միջև գործում է իրավահավասարության սկզբունքը: Այսինքն՝ իր կողմից ստանձնած պարտականությունների համար պատասխանատվություն է կրում ոչ միայն քաղաքացին, այլև պետությունը՝ քաղաքացու առաջ՝ համապատասխան պաշտոնատար անձնանց միջոցով: Ավելին, պետությունը պարտավորվում է ճանաչել, հարգել և պաշտպանել անձի հիմնական իրավունքները, ազատությունները, օրինական շահերն ու արժանապատվությունը:

Մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ իրացումը պայմանավորված է նաև քաղաքացիության հանգամանքով: Այդ պատճառով, քաղաքացիության հարցերի կարգավորման հիմնախնդիրը ներպետական շրջանակից տեղափոխվեց միջազգային հարթություն, ամրագրվելով «Քաղաքացիության մասին Եվրոպական կոնվենցիայում» (17.05.1997թ.), որը սահմանում է ֆիզիկական անձնաց քաղաքացիության հետ կապված մի շարք կարևորագույն սկզբունքներ: Դրանցից է, օրինակ, բազմաքաղաքացիության դեպքում զինվորական պարտականության կա-

<sup>19</sup> Տե՛ս, Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք (պատ. խմբագիր՝ Այվազյան Ն.Ա.), Երևան, 2008, էջ 225; **Общая теория прав человека**/ общ. ред. Лукашева Е.А., Норма, м., 1996,С. 32-33,

<sup>20</sup> Տե՛ս, «ՀՀ քաղաքացիության մասին» օրենք, /ընդ. 16.11.1995թ. փոփոխություններ և լրացումներ՝ 26.02.2007/հոդվ. 23

տարման կանոնները, որոնք պետք է համապատասխանեն Հռչակագրի անդամ պետությունների ներքին օրենսդրությանը: Այսպես, Հռչակագիրը անդամ պետություններին պարտավորեցնում է քաղաքացիության իրավահարաբերություններում հիմնվել հետևյալ սկզբունքների վրա (հոդվ.4).

1. յուրաքանչյուր ոք ունի քաղաքացիության իրավունք,
2. խուսափել ապաքաղաքացիությունից,
3. ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել քաղաքացիությունից,
4. օտարերկրացու հետ անդամ պետու-

թյան քաղաքացու ո՛չ ամուսնությունն ու ամուսնալուծությունը, ո՛չ էլ ամուսնության ընթացքում ամուսիններից մեկի քաղաքացիության փոփոխությունը չեն հանգեցնում քաղաքացիության փոփոխման:

Հետևաբար, կարող ենք եզրակացնել, որ անձի քաղաքացիությունը, հանդիսանալով անձի իրավական վիճակի տարր, իր տարատեսակ սահմանումներով և բովանդակային առանձնահատկություններով շարունակում են մնալ պետության և իրավունքի տեսության ուսումնասիրության կիզակետում:

### **Լիլիթ Ղազանչյան-Անձի քաղաքացիության հասկացության, սոցիալական հիմքերի և իրավաբանական բովանդակության առանձնահատկությունները:**

Տվյալ գիտական հոդվածում դիտարկվում է քաղաքացիության հասկացության հիմնարար բնույթը, դրա իրավաբանական բովանդակությունը ժամանակակից ժողովրդավարական պետությունում անձի իրավական կարգավիճակի ձևավորման գործընթացում: Սասնավորպես, ընդգծվում է «քաղաքացիություն», «հպատակություն», «մարդու իրավունքներ» հասկացությունների փոխհարաբերությունը, ինչպես նաև բացահայտվում է քաղաքացիության, որպես պետության և անձի միջև հատուկ իրավաբանական կապի, սոցիալ-իրավական նշանակությունը:

Հեղինակը Հայաստանի և ԱՊՀ երկրների իրավական մտքի պատմության ուսումնասիրության հիման վրա բացահայտում է քաղաքացիություն հասկացության մեկնության բնորոշ հատկանիշները ժամանակակից իրավաբանական գրականությունում:

**Բանալի բառեր** - իրավական կարգավիճակ, մարդու իրավունքներ, ազատություններ, պարտականություններ, քաղաքացիություն, հպատակություն, իրավական կապ, իրավասուրբյակություն:

### **Лилит Казанчян- Отличительные черты и особенности социальных основ и юридического содержания понятия гражданства.**

В данной научной статье рассматривается фундаментальное значение понятия гражданства, его юридического содержания, в формировании правового статуса личности в современном демократическом государстве. В частности, подчеркивается взаимоотношение понятий "гражданство", "подданство" и "права человека", а так же раскрывается социально-юридическое значение гражданства- как особой формы юридической связи между государством и личностью.

Автор на основе изучения материалов из истории правовой мысли Армении и стран СНГ раскрывает характерные черты трактовки понятия гражданства в современной юридической литературе.

**Ключевые слова**- правовой статус, права человека, свободы, обязанности, гражданство, подданство, правовая связь, правосубъектность.

### **Lilit Kazanchian-Distinctive features and characteristics of social bases and legal content of the citizenship**

This scientific article is dedicated to the fundamental concepts of citizenship, its legal content, and the formation of the legal status of an individual in a modern democratic state. Moreover, the author emphasizes the relationship between the concepts of "citizenship", "allegiance" and "human rights", as well as reveals the socio-legal meaning of citizenship as a special form of a legal link between the government and an individual.

The author based on the study of materials from the history of legal thought of Armenia and CIS countries, reveals characteristic features, interpretations of the notion of citizenship in modern legal literature.

**Key words**- legal status, human rights, liberties, obligations, citizenship, allegiance, legal connection, juridical personality.



# ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ ԵՎ ՊԱՌԼԱՄԵՆՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Եղիշե ԲԱԶՈՅԱՆ

Հայաստանի ֆրանսիական համալսարանի դասախոս

*Ժողովրդաիշխանության գերակայության համատեքստում սկզբնավորված օրենսդիր իշխանության օրգանական կատեգորիան համարվող «Պաշտամենտական վերահսկողություն» հասկացության սահմանումների ու որոշումների ժամանակակից բազմազանության հետ մեկտեղ միաժամանակ պետք է անայայնանորեն ի նկատի ունենալ, որ վերահսկողությունն ընդհանրապես և պաշտամենտական վերահսկողությունը մասնավորապես, որպես պետության մեջ, գործող բոլոր տեսակի այլ իշխանությունների գործունեության նկատմամբ օրենսդիր մարմնի կողմից դիտարկում իրականացնելու իրավունք, բոլորովին էլ նորագույն ժամանակների տերմիններ չեն և դեռ վաղնջական ժամանակներից սկսած պետության առաջացման հետ մեկտեղ դարձել են հասարակության ու պետության կառավարման հարցերում ժողովրդի և նրան ներկայացնող մարմնի ունեցած դերի գնահատման հարթությունում արդար ու արդյունավետ կառավարման անանց խնդիրների ուսումնասիրմամբ զբաղվող հին աշխարհի փիլիսոփաների, պատմաբանների ու պարզապես պետական ու քաղաքական գործիչների ուշադրության առարկան: Բայց նախքան բուն ասելիքին անցնելը մի ուշագրավ դիտարկում. հասարակության քաղաքական կառուցվածքի ու պետական կազմակերպման հարցերի քննարկման ասպարեզում ժողովրդավարական /դեմոկրատական/ կառավարման ձևերի ու տեսակների ժամանակակից ընկալման տեսանկյունից և հատկապես դրանցում պարունակվող որակական բարձրարժեքության առումով հին աշխարհի ստեղծած գաղափարներն ու տեսությունները սկսած մ.թ.ա. 5-րդ հարյուրամյակից մինչև մ.թ. 4-րդ դարը պարզապես առատության եղջյուրի հոսքով հեղեղել են մարդկային քաղաքական մտքի գանձարանը, մինչդեռ ժամանակով մեզ ավելի մոտիկ համարվող ողջ միջնադարն ընդհուպ մինչև 17-րդ դարն այդ առումով չափազանց «ժլատ» ու «ստերջ» է եղել և վերը նշված որակների առումով իր նախորդի համեմատությամբ մարդկության համար նեղիկ ու դանդաղահոս գետակ է հիշեցնում:*

Ամենից առաջ պետք է ասել, որ հասարակության քաղաքական ու պետական կազմակերպման հարցերի առաջադրման, քննարկման ու գիտականության հիմքերը դրվել են Փոքր Ասիայի ու Բալկանների միջակայքում գտնվող աշխարհագրական տարածքում ձևավորված ու զարգացում ապրած հունական մշակույթի տիրույթում,

որն իր ամբողջության մեջ անվանվում էր Հին Հունաստան:

Հույներից **Պլատոն** առաջինն էր, որ պետական կառավարման ցանկալի ձևի քննարկումներն առանձնացրեց կոսմոգոնիայից /տիեզերածնություն/ և դրանով իսկ անտիկ քաղաքական փիլիսոփայության հիմնաքարը դրեց: Եվ թեպետ իր «Պետու-

թյուն» աշխատության մեջ Պլատոնը իդեալական կառավարումը համարում էր լավագույնների կառավարումը արդարացի օրենքների գործադրմամբ<sup>1</sup> և առանձին չէր շոշափում ժողովրդի՝ իշխանության աղբյուր լինելու հանգամանքը, սակայն լավագույններին /զիտակներին/ ընտրելու և արդարացի օրենքներ հաստատելու իրավունքն ու առաքելությունը վերապահում էր արքեանական պետության ժողովրդին: **Արիստոտելն** արդեն ավելի հեռուն գնաց և Պլատոնի 5040 բնակիչ ունեցող մտացածին պետության փոխարեն իր «Քաղաքականություն» աշխատության մեջ՝ հետապնդելով բոլոր պետություններին համապատասխանող կառավարման ձև ունեցող պետական կառուցվածքի մասին պատկերացում ունենալու անհրաժեշտության վերաբերյալ միտքը և ինքն իրեն հարցնելով, թե ում պետք է պատկանի իշխանությունը երկրում, տրամաբանում է, որ յուրաքանչյուր պետության մեջ կա երեք բաղկացուցիչ՝ պետության գործերի մասին մտածող օրինախորհրդակցական մարմին, մագիստրատներ /դրանցից որոնք պետք է լինեն ընդհանրապես, ինչպիսին պետք է լինի դրանց փոխարինման ձևը/ և երրորդը՝ դատական մարմիններ: Այնուհետ գալիս է եզրահանգման, որ **եթե պետության մեջ շատերն են զրկված քաղաքական իրավունքներից, ապա դա անխուսափելիորեն այդ պետությունը լցնելու է թշնամաբար տրամադրված մարդկանցով**, իսկ դրանից խուսափելու լավագույն միջոցն այդ մարդկանց օրինախորհրդակցական ու դատական իշխանություններին մասնակից լինելու իրավունքի տրամադրումն է<sup>2</sup>: Իր այդ եզրահանգումներն իրականացնելու նպատակով անձամբ շուրջ 80 քաղաք-պետություն այցելած և դրանց պետական կառուցվածքն ուսումնասիրած Արիստոտելն անշուշտ լավ էր հասկանում,

որ իր բնույթով ավելի արդարացի ու հետևաբար ավելի երկարաժամկետ կառավարման ձևը կարող է լինել միայն ընդհանուր կառավարումը, այն ձևը, որտեղ իրենց ծագումով հավասարները հերթով կարող են միաժամանակ և կառավարել և ենթարկվել<sup>3</sup>:

Պետության կառուցվածքի, կառավարման ձևերի, ժողովրդի՝ որպես հասարակության քաղաքական կազմակերպման մեխանիզմի հիմնադրի և բոլոր իշխանությունների աղբյուրի վերաբերյալ Հին Հունաստանում սկզբնավորված գաղափարները իրական կատարելության հասցրին ու բանաձևերով հիմնավորեցին արդեն հռոմեացի իրավաբանները: Այսպես մ.թ. 3-րդ դարի կեսերին Հռոմում պետական բարձր պաշտոններ զբաղեցրած **Սողեստինուսը**՝ իրավունքի ծագման ու բնույթի մասին իր խորհրդածություններում, հիմնավորելով կայսրի որոշումներն օրենքի ուժին համահավասար լինելու հանգամանքը, բանաձևում է. **«Այն ինչ որոշել է կայսրը օրենքի ուժ ունի, քանի որ կայսրի՝ բարձրագույն իշխանություն ունենալու մասին ժողովրդի կողմից ընդունված օրենքով իսկ ժողովուրդն իրեն պատկանող բարձրագույն իշխանությունն /ընդգծումը մերն է /ու հզորությունը զիջել է կայսրին»**<sup>4</sup>: Այս մտքի համատեքստում պետք է նկատի ունենալ, որ մ.թ.ա. 509 թ.ին միապետության տապալումից մինչև առաջին կայսրերի կառավարումն ընկած շուրջ հինգհարյուրամյա ժամանակահատվածը Հռոմի պետության մեջ օրենքներն ընդունվում էին ժողովրդի կամքի բարձրագույն արտահայտությամբ՝ տրիբուսային և ցենսուրիալ կոմիցիաների /ժողովների/ բարձրագույն օրենսդիր մարմնի գործունեության միջոցով<sup>5</sup>: Պետության մեջ ժողովրդաիշխանության սկզբունքի, որպես պետությունը սկզբնավոր

<sup>1</sup> Стів, История политических и правовых учений; под ред. Графского В. Г. М 2005 с. 144.

<sup>2</sup> Նշվ. աշխ. էջ 149:

<sup>3</sup> Նշվ. աշխ. էջ 151:

<sup>4</sup> Մեջբերումն ըստ История политических и правовых учений; под ред. Графского В. Г. М 2005 с. 167:

<sup>5</sup> Стів, История государства и права зарубежных стран /под ред. П. Н. Галанца / Т. 1 М. 1963 с. 211:

րող ակունքի և արդարության ու ազատության հատկանիշների գերակայությամբ կառավարման մոդելի գերադասելիության անհրաժեշտությունն է կարևորում **Ցիցերոն** իր աշխատություններում արձանագորելով, որ յուրաքանչյուր պետությունն ժողովրդի ձեռքբերումն է և նրա սեփականությունը: Ավելին, պետության կառավարման լավագույն ձևերի որոնմամբ երկրորդելով հույներին և կառավարման տարբեր ձևերի մեկից մյուսին փոխակերպվելու շրջափուլային զարգացման տեսության կողմնակիցը լինելով պետության բոլոր հնարավոր բարձրագույն գործադիր պաշտոնները /չորս անգամ միայն ընտրվել է կոնսուլի պաշտոնում/ զբաղեցրած Ցիցերոնը քննարկելով կառավարման տարբեր ձևերի առավելությունները փաստում է, որ կառավարման տարբեր ձևերի մեջ լավագույն վիճակը ծագում է այնտեղ, որտեղ ժողովուրդը պահպանում է իր իրավունքները և ազատություն կարող է լինել միայն այնտեղ, որտեղ ժողովրդի իշխանությունն ավելի շատ է, քանի որ ժողովուրդն այստեղ **«տեր է օրենքների, արդարադատության, պատերազմի և խաղաղության հարցերի, յուրաքանչյուր քաղաքացու իրավունքների և ունեցվածքի վրա... հետևապես չկա ավելի հաստատ և անփոփոխելի բան քան ժողովուրդն է և նա է պետական իշխանության սկիզբը»<sup>6</sup>:**

Պետական վերահսկողության քննարկվող թեմայի առումով շատ ավելի հետաքրքիր մտքեր է արտահայտել **Պոլիբիոսը**, որը հին աշխարհից մինչև **Լոկ** և **Սոնտեսքյո** ընկած ժամանակահատվածում թերևս առաջինն է բացահայտել կառավարման խառը ձևերի կիրառման պայմաններում պետության մեջ միմյանց վերահսկող իշխանության տարբեր տիպերի գոյության մասին: Իր «Համաշխարհային պատմություն» աշխատության մեջ քննարկելով

պետական կառուցվածքի իրար հաջորդող հինգ ձևերի /դարձյալ հաջորդման շրջափուլի ձևով/ հատկանիշները **Պոլիբիոսը** որպես լավագույններ դրանցից առանձնացնում է միապետությունը, արիստոկրատիան, դեմոկրատիան և մատնանշում, որ այդ երեք ձևերի համադրմամբ կառավարումն առաջին անգամ իր պետության մեջ ներդրել է Սպարտայի օրենսդիր թագավոր **Լիկուրգոսը**, որից հետո կառավարման խառը ձևը կիրառվել է նաև Կար-

**«...Հասարակության քաղաքական ու պետական կազմակերպման գիտականության հիմքերը դրվել են հին հունական մշակույթի տիրույթում...»**

թագենում և Հռոմում: Ընդ որում կառավարման այդպիսի ձևը, ըստ **Պոլիբիոսի**, առավելություն ունի մյուսների համեմատությամբ, քանի որ դրա պայմաններում երեքից յուրաքանչյուրի՝ միմյանց նկատմամբ ունեցած փոխադարձ վերահսկողության շնորհիվ որևէ մեկը չի զարգանում չափից ավելի և դա թույլ է տալիս պետությունը պահել հավասարակշռության մեջ ինչպես ծովում լողացող նավը<sup>7</sup>: Սրան թերևս պետք է ավելացնել, որ Ցիցերոնը նույնպես իր ժամանակին նկատել է կառավարման տարբեր ձևերի համադրմամբ պետության կառուցվածքի ընդհանուր մի տեսակի գործադրման հնարավորությունը ու դրանցից միապետության, արիստոկրատիայի և դեմոկրատիայի միախառնումը համարել լավագույնն ու արդյունավետը բոլորից:

Միջնադարի քարացած մտածողությունը Վերածննդի բարերար ազդեցության ներքո արդեն 14-րդ դարում սկսեց կենդանության մշաններ ցույց տալ և պետք է ասել, որ կաթոլիկ եկեղեցու դեռևս համատարած իշխանության պայմաններում պետության կառուցվածքում ժողովրդի զբաղեցրած տեղի ու դերի, իշխանության աղբ-

<sup>6</sup> Стів, История политических и правовых учений; под ред. **Графского В. Г.** М 2005 с. 169.  
<sup>7</sup> Стів, Проблемы общей теории права и государства; Учебник для вузов под Ред. **Нерсесянца В. С.** М. 2006 с. 658.

յուր լինելու վերաբերյալ Եվրոպայում պարզապես հեղափոխական մտքեր ի հայտ եկան: Մասնագիտությամբ աստվածաբան, Փարիզի համալսարանի ռեկտոր **Մարսիլիոս Պաղուացին** Արիստոտելի աշխատությունների ներգործությամբ քննարկելով ամուր և էությանը արդարացի պետության կառուցվածքը նշում է, որ կառավարման լավագույն ձևն ընտրովի միապետությունն է, որտեղ միապետն ընտրվում է ժողովրդի կողմից, կառավարում է ժողովրդի սահմանած օրենքներով և պատասխանատու է ժողովրդի առջև: Պետության օրենքները ստեղծում է ժողովուրդը և նա էլ հենց մարդկային գերագույն օրենսդիրն է<sup>8</sup>: Ժողովուրդը, ըստ Մարսիլիոսի, նշանակում է կառավարությանը /միապե-

որպես սուվերենի: Լոքի համոզմամբ ժողովրդի սուվերենությունը բարձր է նրա իսկ ստեղծած պետության սուվերենությունից և հենց այդ պատճառով էլ օրենսդիր իշխանության դեմ ոտնձգությունը համարվում է ոտնձգություն ամձամբ ժողովրդի դեմ, որից էլ բխում է այդպիսի գործադիր իշխանության դեմ ապստամբելու<sup>10</sup> և այն գործունեության նորմալ հուն վերադարձնելու իրավական բանաձևով հիմնավորված ժողովրդի իրավունքը: Ահա այդ բանաձևից էլ առաջանում է գործադիր իշխանության գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու օրենսդիր իշխանության բնական իրավունքը: Հատկանշական է, որ Լոքը պետության ձևի որոշարկումը կապում էր այն հարցի հետ,

**«...Պատունն առաջինն էր, որ պետական կառավարման ցանկալի ձևի քննարկումներն առանձնացրեց կոսմոգոնիայից և դրանով իսկ դրեց անտիկ քաղաքական փիլիսոփայության հիմնաքարը...»**

թե ում ձեռքին է գտնվում բարձրագույն իշխանությունը պետության մեջ, որպիսին, ըստ նրա, համարվում էր օրենսդիր իշխանությունը:

Իշխանությունների տարանջատ-

տին/ և վերահսկողություն իրականացնում վերջինիս գործունեության նկատմամբ:

Իշխանությունների տարաբաժանման տեսության հիմնադիրներից **Ջ. Լոքն** արդեն իրավականորեն հիմնավորելով իշխանության օրենսդիր և գործադիր թևերի ինքնուրույն գործունեության միջոցով պետական կառավարման արդյունավետությունն ապահովելու, այժմ արդեն ապացուցված, թեզը շեշտում էր, որ պետական իշխանության կազմի մեջ մտնող երեք իշխանությունները /երրորդ իշխանության տակ Լոքն ի նկատի ուներ դաշնայինը, ոչ թե դատականը/ միավորված են մեկ հիմքում և դրա ընդհանուր աղբյուրը ժողովուրդն է: Նրա համոզմամբ, օրենսդիր, գործադիր և դաշնային թևերից **առաջնայինը և գերագույնը օրենսդիրն է<sup>9</sup>**, քանի որ նա է ներկայացնում պետության մեջ ժողովրդին,

ման տեսությունը զարգացնողն ու գիտական հիմնավորմամբ վերջնական տեսքի բերողը՝ **Շառլ Լուի Մոնտեսքյոն**, արդեն ի տարբերություն Լոքի պետական իշխանությունը տարաբաժանում էր օրենսդիր, գործադիր, դատական թևերի և «Օրենքների ոգու մասին» իր աշխատության մեջ քննարկելով կառավարման հանրապետական, միապետական և բռնապետական ձևերին բնորոշ առանձնահատկություններն ու դրանցից յուրաքանչյուրի համար սահմանելով առանձին սկզբունքներ, երեք ձևերի համար էլ որոշիչ էր համարում օրենքներ ընդունելու իրավունքով օժտված գերագույն իշխանության պատկանելության հարցը: Ընդ որում, հանրապետական կառավարման ձևին, որի մեջ գերագույն օրենսդիր իշխանությունը պատկանում է ժողովրդին, հատկանշական է առա-

<sup>8</sup> Տե՛ս, История политических и правовых учений; под ред. **Графского В. Г.** М 2005 с. 221.  
<sup>9</sup> Տե՛ս, **Локк Дж.** Сочинения в трех томах: Т. 3.— М.: Мысль, 1988. с. 338.  
<sup>10</sup> Տե՛ս, **Локк Дж.** Сочинения в трех томах: Т. 3.— М.: Мысль, 1988. с. 352.

քինության սկզբունքը<sup>11</sup>: Առաքինությունը հավասարեցնում է ազնվականությանը ժողովրդի հետ և դա կարող է հանգեցնել մեծ հանրապետության ստեղծմանը: Հանրապետության մեջ է հնարավոր ստեղծել իրերի այնպիսի վիճակ, որի պայմաններում տարբեր իշխանություններ կարող են փոխադարձաբար զսպել իրար<sup>12</sup>:

Պետության կառուցվածքի և պետական իշխանության կազմակերպման հարցերում ժողովրդի, որպես բոլոր տեսակի իշխանությունների առաջացման աղբյուրի, ժողովրդաիշխանության սկզբունքի առաջնայնության և պետականակերտության մեջ օրենսդիր իշխանության գերակայության սահմանման անհրաժեշտությունն իրենց ժամանակին շեշտել են **Ժ.Ժ. Ռուսոն, Թոմաս Փեյնը, Բենջամեն Ֆրանկլինը, Թոմաս Ջեֆերսոնը, Ուիլյամ Մեդիսոնը, Կանտը, Յեզեյը** և էլի շատ ուրիշներ, որոնց թվարկումն ու համապատասխան հիմնավորումների մատնանշումներն իսկ մեզ չափազանց հեռու կտանեին մեր ներկա հետազոտության մեջ, իսկ դա դուրս է այս ուսումնասիրության շրջանակներից: Բայց այդ, թվարկումն իսկ մի ավելորդ անգամ ևս շեշտում է մարդկության զարգացման շուրջ երկուհազարամյա ժամանակահատվածում հասարակական, տնտեսական ձևակարգերի /ֆորմացիա/ տարբերության ու կառավարման տարբեր ձևերի /միապետություն, հանրապետություն, բռնապետություն և այլն/ ֆոնի վրա հասարակության քաղաքական կազմակերպման շրջանակներում պետական իշխանության կառուցման տեսական համակարգերը արդարության, օրինականության, համահավասարության, կառավարման արդյունավետության, պետության կենսունակության բաղադրիչների առկայությունն ապահովելու համար ժողովրդաիշխանության, ժողովրդի բարձրագույն կամքի /որպես մեծամասնության շահերը բոլոր ուրիշ իշխանությունների համեմատ առավելագույնս հնարավոր մեծ չափով արտահայտողի/ սկզբունքի ամրագրումը և հետևաբար նաև բոլոր իշխանությունների

մեջ օրենսդիր գերակայության, ավագության ու առաջնայնության, ինչպես նաև գործադիրի նկատմամբ օրենսդիր իշխանության վերահսկողություն իրականացնելու մասին գաղափարների ընդունման անհրաժեշտությունը:

Պետք է ասել, որ Եվրոպայում համապետական առաջին ներկայացուցչական մարմինների **/պառլամենտն Անգլիայում, գլխավոր կորտեսները՝ Իսպանիայում/** ի հայտ գալուն պես, երբ միապետական կառավարման համապարփակությունը յուրաքանչյուր երկրում բոլոր տեսակի իշխանությունների ակունքն ու օրինաստեղծությունը **/մի քանի հանրապետություններ գործում էին միայն Իտալիայում/** պայմանավորվում էր միայն ինքնակալի ամենագոր կամքով, այդ մարմինների գլխավոր և միակ գործառույթը պետական միջոցների ծախսման նկատմամբ վերահսկողություն իրականացնելն էր /օրինաստեղծությունը շատ ավելի ուշ դարձավ պառլամենտների գլխավոր և բացառիկ լիազորությունը/: Պատմականորեն այդ գործառույթն առաջին անգամ հայտնվել է 1215 թ.-ին Անգլիայում, երբ այդ երկրի թագավոր **Յոլիան Անհողը** կարճատև պատերազմում պարտվելով իր սեփական բարոններին, ստիպված եղավ ստորագրել Ազատությունների մեծ խարտիա /Magna Carta Libertatum/ անվանումով մի փաստաթուղթ, որի ուժով թագավորն այլևս չէր կարողանում ծախսեր կատարել առանց 25 հոգանոց թագավորական խորհրդի /սա դարձավ անգլիական պառլամենտի լորդերի պալատի նախատիպը/ համաձայնության: Հետագայում արդեն 1649 թ. Անգլիական հեղափոխության կողմնակիցներն այդ փաստաթուղթը որպես իրավական հիմք ծառայեցրին պառլամենտի կողմից թագավորական /գործադիր/ իշխանության նկատմամբ իրական և գործուն վերահսկողություն սահմանելու համար:

Գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու օրենսդիր մարմնի իրավունքը որոշակի ձևակերպումներով առաջին անգամ օրենսդրորեն ամ-

<sup>11</sup> Տե՛ս, **Монтескье Шарль Луи.** Избранные произведения /общ. Ред. **М. П. Баскина.**- М; 1955 с. 26.

<sup>12</sup> Նշվ. Աշխ. էջ 112:

րագրվել է Ֆրանսիայի 1791 ընդունված Սահմանադրության մեջ, ճիշտ է առանց «վերահսկողություն» տերմինի օգտագործման, սակայն այդ ակտով նախ բոլոր իշխանությունների աղբյուր էր ճանաչվում ազգը, որն իր իշխանությունն իրականացնում էր ներկայացուցիչների Ազգային ժողովի և թագավորի միջոցով և որ ամենակարևորն էր սահմանադրությունն ամրագրում էր թագավորի մինիստրների պարտականությունը Ազգային ժողովին ներկայացնել ծախսերի նախահաշիվներն ու դրանց տարեկան ֆինանսական հաշվետվությունները և ընդհանրապես հաշվետու լինել իրենց վերապահված ոլորտներում իրականացվող գործողությունների համար<sup>13</sup>: Ըստ ընդունման ժամանակի ֆրանսիականին նախորդող ԱՄՆ-ի սահմանադրու-

թյան իրավունքի իրականացման ամրագրման առաջնությունը պատկանում է ԱՄՆ Սահմանադրությանը: Ընդհանուր առմամբ պետք է ասել, որ Եվրոպայի այսպես կոչված «հին սահմանադրությունները» չեն ամրագրել օրենսդիր մարմնի վերահսկողության իրավունքը գործադիր իշխանության նկատմամբ, դրա բովանդակությունը կազմող ձևակերպումների իրավական որոշակիության առումով, մինչդեռ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո և հատկապես Խորհրդային համակարգի փլուզուման հետևանքով ի հայտ եկած սահմանադրությունների ճնշող մեծամասնությունն այս կամ այն չափով ամրագրել է օրենսդիր իշխանության վերահսկողական լիազորությունների իրականացման իրավունքը գործադիր իշխանության գործու-

*«...Արիստոտելն համոզված էր, որ եթե պետության մեջ շատերն են գրկված քաղաքական իրավունքներից, ապա դա անխուսափելիորեն այդ պետությունը լցնում է թշնամաբար տրամադրված մարդկանցով...»*

նեության նկատմամբ: Այս առումով հատկանշական է, որ հայ իրավական միտքը ի դեմս **Յակոբ Շահամիրյանի** դեռևս ամերիկյան Սահմանադրության հռչակումից առաջ, ապագա հայկական պետության կառուցման ու

թյունն իր տեսքում ոչինչ չի պարունակում գործադիր իշխանության նկատմամբ Կոնգրեսի վերահսկողության իրավունքի մասին, բայց քանի որ դրանով կառավարման մեջ ամրագրվել էր իշխանությունների տարանջատման սկզբունքը զսպումների և հակակշիռների զուտ ամերիկյան համակարգի համալրմամբ, որը ենթադրում էր նախագահի կողմից իրականացվող գործադիր իշխանության գործունեության նկատմամբ ուսումնասիրություն, ստուգում անցկացնելու և վերջինից հաշվետվություն պահանջելու Կոնգրեսին պատկանող գործառույթների առկայություն, ապա պետք է ասել, որ հենց այդ փաստի ուժով էլ գործադիր իշխանության նկատմամբ օրենսդիր մարմնի վերահսկողու-

կառավարման ուղեհիշերը սահմանող իր կոթողային աշխատության՝ **«Որոգայթ փառացի»** մեջ բանաձևել էր ժամանակակից բոլոր ժողովրդավարական պետությունների կառուցման ու գործունեության հենքը՝ այն է. **բոլոր իշխանությունների սկիզբն ու աղբյուրը ժողովուրդն է և այդ իշխանությունները հաշվետու են նրան**: Եվ չնայած Շահամիրյանը պետության կառավարման մեխանիզմում աշխարհում առաջինը, նախատեսում էր գործադիր բարձրագույն մարմնի՝ նախարարի /նախագահ/ ինստիտուտի հիմնումը, որը երկրի ռազմական ուժերի գերագույն գլխավոր հրամանատարն էր և նշանակում էր գործադիր իշխանության թևի պաշտոնատար անձանց, սակայն երկրում պետական

<sup>13</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս Документы истории Великой французской революции. Т. 1. Отв. ред. **А.В. Адо**. М.1990. стр. 117-133 / <http://www.hist.msu.ru/ER/Etext/cnst1791.htm/>

կառավարման ձև էր սահմանվում խորհրդարանական հանրապետությունը և գործադիր բոլոր օղակների պաշտոնատար անձինք իրենց գործունեության համար խստորեն հաշվետու էին ազգաբնակչության կողմից ուղղակի և ազատ ընտրությունների միջոցով ընտրվող օրենսդիր մարմնի՝ **Հայոց տան** առջև<sup>14</sup>: Խիստ հետաքրքրական է տրամաբանությունը, որով առաջնորդվում են «սահմանադրության» համահեղինակները պետական մեխանիզմում օրենսդիր մարմնին գերակա ու վճռորոշ դեր հատկացնելու հարցում: **«Օրենք մեր եղիցին տեր և թագավոր մեր»** Շահամիրյանի հավատամքն առարկայանում է պետության ներսում օրենքի գերիշխանության սկզբունքի մեջ, որը լավագույնս կարող է դրսևորվել կառավարման միայն հանրապետական ձևում, իսկ ժողովուրդը հանրապետության միակ օրենսդիրն է և իր կամքն արտահայտում է իր շահերը ներկայացնող մարմնի՝ պառլամենտի միջոցով: Շահամիրյանը **Հայոց տունն** անվանում է բարձրագահ ու բարեվարք<sup>15</sup>, որի վրա մարդկային ցեղի և ոչ մի ծնունդ իշխելու իշխանություն չունի, իսկ **«Որոգայթ փառաց»** իՄԼԵ-ՄԼԵ հոդվածների բովանդակությունը գալիս է փաստելու, որ պետության գործունեության արդյունավետության ապահովման և մասնավորապես պառլամենտական վերահսկողության գաղափարի ամրագրումը պետության արդարացի կառավարման վերաբերյալ պատկերացումներում անժխտելի իրողություն է եղել հայ սահմանադրաիրավական մտքի երախտավորների մոտ արդեն 18-րդ դարում: Իհարկե, պետականության բացակայության պայմաններում դժվար է միանշա-

նակ ասել, թե պետական կառավարման հայեցակարգում պառլամենտական վերահսկողության ինստիտուտն ինչ ծավալներով ամրագրման իր դրսևորումները կստանար, սակայն փաստ է, որ երբ հայ ժողովուրդն իր պետականության վերականգման պատեհ առիթն ունեցավ 1918 թ-ին, ապա կենսագործվեց հենց «Որոգայթ փառացում» ամրագրված խորհրդարանական ժողովրդավարական հանրապետությունը **Հայոց խորհրդի /1919թ.** Օգոստոսի 1-ից խորհրդարանի/ ներկայացուցչականությամբ, որին կից՝ օրենքով ստեղծված պետական վերահսկողության մարմնին /պետական վերհսկիչ/ պատվիրակվել էին հարկային, ֆինանսական և այլ ոլորտներում կառավարության գործունեության նկատմամբ վերահսկողական գործառույթները<sup>16</sup>: Ի դեպ, Առաջին հանրապետության խորհրդարանի կազմում գործող 14 մշտական հանձնաժողովներից մեկը կրում էր հարցապնդումների հանձնաժողով անվանումը<sup>17</sup>, որի տնօրինման առարկաների մեջ էին մտնում կառավարության գործունեությանն առնչվող խնդիրների վերաբերյալ վերջինիս ուղղվող հարցերի ու **հարցապնդումների** նախագծերի կազմումն ու կառավարությանն անձամբ դրանք ներկայացնելու գործառույթները:

Այսպիսով, կարելի փաստել, որ պետական վերահսկողության վերաբերյալ գաղափարները մարդկային հասարակությունում սկզբնավորվել են դեռևս նախաքրիտոնեական ժամանակներից և պետական շինարարության մեջ դրսևորվելով նաև պառլամենտական վերահսկողության տեսքով իրենց վերջնական ձևավորմանն ու արմատավորմանը հասել են միայն 20-րդ դարի ընթացքում:

<sup>14</sup> Տե՛ս, **Ռաֆաել Համբարձումեան** «Որոգայթ փառաց». Ակունքները, այժմեականությունը և առանձնայատկությունները, Երևան 1999թ. էջ 32:

<sup>15</sup> Տե՛ս, **Շահամիր Շահամիրեան** Գիրք անուանեալ Որոգայթ փառաց, Թիֆլիս 1913, էջ 175-176, տես ԾԱ հոդվածը:

<sup>16</sup> Տե՛ս, **Ա. Հակոբյան** Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները 1918-20 թթ, Երևան 2005թ. էջ 58:

<sup>17</sup> Տե՛ս, **Ա. Հակոբյան** նշվ աշխ. էջ 56:



# ՆԵՐԿԱՅԱՋՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ

Նինա ԿՈՒՑԱՆՅԱՆ

Ռուս-հայկական (սլավոնական) համալսարան

*Ներկայացման իրավունքով ժառանգությունն այն դեպքն է, երբ մինչև ժառանգության բացումը մահացած ըստ օրենքի ժառանգի բաժինն անցնում է նրա երեխաներին և նրանց միջև բաշխվում է հավասարապես (ՀՀ քաղ. օր. 1221-րդ հոդվածի 1-ին մաս):*  
*Ներկայացման իրավունքով ժառանգումը համարվում է ըստ օրենքի ժառանգման հատուկ տեսակ<sup>1</sup>: Ներկայացման իրավունքով ժառանգման հարավիրվող ժառանգը (այսուհետ՝ ներկայացվող ժառանգ) ժառանգատուի հետ նույնպես գտնվում է ազգակցական-արյունակցական կապի մեջ, ժառանգելու դեպքում նույնպես հանդիսանում է ժառանգատուի ընդհանուր իրավահաջորդը, սակայն ներկայացվող ժառանգը ըստ օրենքի մյուս ժառանգներից տարբերվում է ժառանգությունը ստանալու կարգով և պայմաններով:*

Մինչև ներկայացման իրավունքով ժառանգման ինստիտուտի առանձնահատկություններին անդրադառնալը՝ կցանկանայինք հակիրճ խոսել իրավաբանական գրականության մեջ «ներկայացվող ժառանգ» արտահայտության շուրջ դրսևորված բանավեճի մասին: Առանձին հեղինակներ իրավացիորեն մշտն են, որ «**ներկայացման իրավունքով ժառանգություն**» կամ «**ներկայացվող ժառանգ**» արտահայտությունները տեղին չեն, քանի որ շփոթմունք են առաջ բերում ներկայացուցչության ինստիտուտի հետ՝ վերջինիս հետ չունենալով որևէ ուղղակի կապ կամ առնչություն: Եթե ներկայացուցչության

դեպքում ներկայացվողը հարաբերություններում հանդես է գալիս մեկ այլ անձի՝ ներկայացուցչի միջոցով, ապա ներկայացվող ժառանգը հարաբերություններին մասնակցում է անձամբ՝ առանց երրորդ անձի ներգրավման: Այստեղից էլ իրավաբանական գրականության մեջ բազմիցս հնչել են կարծիքներ, որ անհրաժեշտ է ներկայացման իրավունքով ժառանգությունը կոչել այլ կերպ, նույնիսկ առաջարկվել են կոնկրետ տերմիններ: Ռուս իրավագետ **Վ.Ի Սերեբրովսկին** առաջարկում էր կիրառել «**սերնդային իրավահաջորդություն**» տերմինը<sup>2</sup>, իսկ **Ա.Լ.Մակովսկին** առաջարկում է «**տեղապահու-**

<sup>1</sup> Ներկայացման իրավունքով ժառանգման ինստիտուտը նախատեսվում էր դեռևս հին հռոմեական իրավունքում և կոչվում էր՝ ius repraesentationis (ավելի մանրամասն տես՝ **Юлиус Барон** Система римского гражданского права: В 6 кн. СПб. Юрид.центр Пресс. 2005. էջ 968):  
<sup>2</sup> Տե՛ս, **Сербровский В.И.** Очерки советского наследственного права. М. Изд-во АН СССР. 1953. էջ 103:

թյան իրավունք» տերմինը<sup>3</sup>: Թե ինչու է օրենսդիրը, այնուամենայնիվ, շարունակում կիրառել «ներկայացման իրավունքով ժառանգություն» արտահայտությունը, բացատրվում է այդ արտահայտության երկարաժամկետ կիրառմամբ, երբ իրավունքի տեսությունը և իրավակիրառ պրակտիկան հարմարվել են այս արտահայտությանը և չեն ցանկանում տերմինաբանական նորարարության գնալ: Մեր կարծիքով, որքան էլ, որ իրավակիրառ պրակտիկան հարմարվել է ընդունված արտահայտությանը, իրավունքն, այնուամենայնիվ, անադարտության և համակարգայնության իր ուրույն խնդիրներն ունի, երբ իրավական ինստիտուտները հնարավորինս չպետք է տերմինաբանական շփոթմունք առաջ բերեն, ուստի ճիշտ կլիներ մտածել նոր տերմինաբանական արտահայտության շուրջ: Մեր

*«...Ներկայացման իրավունքով ժառանգությունն այն դեպքն է, երբ մինչև ժառանգության բացումը մահացած, ըստ օրենքի ժառանգի բաժինն անցնում է նրա երեխաներին և նրանց միջև բաշխվում է հավասարապես...»*

զնահատմամբ, քննարկման լուրջ տարբերակ կարող է հանդիսանալ «սերնդային իրավահաջորդություն» արտահայտությունը, որը բարեհունչ է, հարակից շփոթմունք առաջ չի բերում և առավել լրիվ է արտահայտում հիշյալ ինստիտուտի էությունը, որին էլ կանդրադառնանք ստորև:

Ներկայացման իրավունքով ժառանգության ինստիտուտը կիրառելի է միայն ըստ օրենքի ժառանգության դեպքում, և ոչ մի պարագայում՝ ըստ կտակի ժառանգության դեպքում: Ըստ օրենքի ժառանգման պարագայում՝ ներկայացման իրավունքով ժառանգությունը նման է ըստ կտակի ժառանգման դեպքում՝ ենթաժառանգների նշանակման ինստիտուտին: Նմանությունը կայանում է նրանում, որ եթե ըստ կտակի ժառանգման դեպքում ենթաժառանգ նշանակվում է կտակարարի կամքով, ապա ըստ օրենքի ժառանգության դեպքում **«ենթաժառանգ նշանակվում է օրենսդ-**

**րի կողմից»**, այսինքն՝ համանմանությամբ և պատկերավորությամբ՝ կարելի է ասել, որ ներկայացվող ժառանգը դա **«ըստ օրենքի ենթաժառանգն է»**:

Վերադառնալով ՀՀ քաղ. օր. 1221-րդ հոդվածի 1-ին մասում տրված ներկայացման իրավունքով ժառանգության բնորոշմանը՝ պետք է ասել, որ այս հոդվածից պարզ չէ, թե ինչպիսի շրջանակ են ենթադրում ներկայացվող ժառանգները: Այդ շրջանակը հստակ երևում է ՀՀ քաղ. օր. 1216-րդ, 1217-րդ և 1219-րդ հոդվածների բովանդակությունից: Այսպես, ներկայաց-

վող ժառանգներն են՝ ժառանգատուի թոռները (**առաջին հերթ**), ժառանգատուի եղբայրների և քույրերի երեխաները (**երկրորդ հերթ**), ժառանգատուի ծնողների եղբայրների և քույրերի երեխաները (**չորրորդ հերթ**):

Ինչպես նկատում ենք, ՀՀ օրենսդիրը ներկայացվող ժառանգների շրջանակը դիտարկում է մինչև ըստ օրենքի մահացած ժառանգի երեխան և ոչ ավելին: Օրինակ, ժառանգատուի երեխայի թոռը (ժառանգատուի ծոռը) և նրանց վայրընթաց սերունդները ներկայացվող ժառանգ չեն հանդիսանում: Ներկայացվող ժառանգ չեն համարվում եղբայրների և քույրերի, ինչպես նաև ծնողների եղբայրների և քույրերի թոռներն ու նրանց վայրընթաց սերունդները: **ՀՀ օրենսդրի նման մոտեցումը բավական կոշտ է համարվում, քանի որ սահմանափակում է ներկայացման իրավունքով ժառանգների շրջանակը:** Եթե

<sup>3</sup> Ст'ю, Комментарии к части третьей Гражданского кодекса Российской Федерации /под ред. А.Л.Маковского, Е.А.Суханова. М. 2002. էջ 160-161:

ներկայացվող ժառանգների շրջանակը կարելի է սահմանափակել կողքային ազգականների երեխաների մակարդակում և դա ողջամիտ է համարվում, ապա ողջամիտ չի համարվում ներկայացվող ժառանգների շրջանակների սահմանափակումը վայրընթաց սերունդների ուղղությամբ: Ժառանգման իրավունքի պատմության մեջ, որպես կանոն, սահմանափակվել է վերընթաց կամ կողմնային ազգականների ներկայացման իրավունքը: Վայրընթաց ազգականների ներկայացման իրավունքը որպես կանոն չի սահմանափակվում, և համարվում է, որ նման մոտե-

ժառանգմանն ընդհանրապես, այնուամենայնիվ ընդունում են, որ ժառանգատուի գույքը պետք է անցնի նրա սերունդներին՝ գոնե մինչև նրանց չափահաս դառնալը<sup>5</sup>:

Համեմատության համար նշենք, որ ԱՊՀ մի շարք երկրներ, միաժամանակ հիմք ընդունելով ԱՊՀ մոդելային քաղաքացիական օրենսգիրքը<sup>6</sup> վայրընթաց ազգականների շղթան չեն սահմանափակում: Օրինակ, ՌԴ քաղ. օր. 1142-րդ հոդվածը ներկայացման իրավունքով ժառանգման է հրավիրում ժառանգատուի թոռներին և նրանց սերունդներին<sup>7</sup>: Համանման դրույթ են նախատեսում, օրինակ, Ղազախստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1067-րդ հոդվածը<sup>8</sup>, Լատվիայի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածը<sup>9</sup>, Վրաստանի քաղաքացիական օրենսգրքի 1336-րդ հոդվածը<sup>10</sup>: Նման մոտեցումն առավել քան արդարացված է:

Հատուկ ցանկանում ենք նշել, որ առանձին պետություններ ոչ միայն չեն սահմանափակում թոռների և վայրընթաց մյուս ազգականների ժառանգումը ներկայացման իրավունքով, այլև չեն սահմանափակում կողքային ազգականների թոռների և նրանց վայրընթաց ազգականների ժառանգումը ներկայացման իրավունքով: Նման մոտեցում է ցուցաբերված Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգրքի 752-2 հոդվածում<sup>11</sup>, Գերմանիայի քաղաքացիական օրենսգրքի 1925-րդ և 1926-րդ պարագրաֆներում<sup>12</sup>:

**«...Ներկայացման իրավունքով ժառանգության ինստիտուտը կիրառելի է միայն ըստ օրենքի ժառանգության դեպքում, և ոչ մի պարագայում՝ ըստ կտակի ժառանգության դեպքում...»**

ցումը բխում է հենց բնական իրավունքից<sup>4</sup>: Ինչպես գրում է ռուս հայտնի իրավագետ **Ի.Ա.Պոկրովսկին**, վայրընթաց ազգականների ժառանգման իրավունքները չի կարելի սահմանափակել, քանի որ ծնողները պետք է հոգեպես հանգիստ լինեն, որ այն, ինչ նրանք ստեղծում-արարում են, հաջորդաբար անցնելու իրենց սերունդներին: Դա լրացուցիչ ազդակ է հաղորդում քաղաքացիներին: Նույնիսկ այն իրավագետները, որոնք դեմ են արտահայտվում ըստ օրենքի

<sup>4</sup> Stu՝ **Ростовцева Н.В.** Тенденции развития норм о наследовании в гражданских кодексах Франции и России // Законодательство. 2005. № 7. էջ 18-27; **Владимирский-Буданов М.Ф.** Обзор истории русского права. Ростов н/Д. Феникс. 1995. էջ 460-461; Гражданское и торговое право капиталистических стран /под ред. **Н.М. Генкина**/. Госиздат. Юрид. Литературы. М. 1949. էջ 517-521:  
<sup>5</sup> Stu՝ **Покровский И.А.** Основные проблемы гражданского права. СТАТУТ. М. 1998. էջ 305:  
<sup>6</sup> Stu՝ Гражданский кодекс. Часть третья. Модель. էջ 65:  
<sup>7</sup> Stu՝ Гражданский кодекс Российской Федерации. Части первая, вторая и третья. М. Проспект. 2006. էջ 375:  
<sup>8</sup> Stu՝ Гражданский кодекс Республики Казахстан. СПб. 2002. Юрид. центр Пресс. էջ 988:  
<sup>9</sup> Stu՝ Гражданский кодекс Латвийской Республики. СПб. 2001. Юрид. центр Пресс. էջ 159:  
<sup>10</sup> Stu՝ Гражданский кодекс Грузии. СПб. 2002. Юрид. центр Пресс. էջ 666:  
<sup>11</sup> Stu՝ Гражданский кодекс Франции (кодекс Наполеона). М. 2012. Инфотропик Медиа. էջ 235:  
<sup>12</sup> Stu՝ Гражданское уложение Германии. 2-е изд., доп. М. Волтерс Клувер. 2006. էջ 485-486:

Ներկայացման իրավունքով ժառանգում տեղի է ունենում **միայն այն ժամանակ**, երբ ըստ օրենքի ժառանգը մահացել է մինչև ժառանգատուի մահանալը: Իսկ եթե ժառանգատուն և ըստ օրենքի ժառանգը մահանում են միաժամանակ՝ նույն օրը, և ֆիզիկապես հնարավոր չէ որոշել, թե նրանցից հատկապես որն է ավելի շուտ մահացել (ժամերի կամ րոպեների տարբերությամբ), ինչպես է որոշվելու ներկայացման իրավունքով ժառանգելու հարցը: ՀՀ օրենսդիրն այս հարցի առնչությամբ ֆորմալ կերպով սահմանել է, որ «**եթե նույն օրը մահացել են այն անձինք, ովքեր իրավունք ունեին ժառանգել մեկը մյուսից հետո, նրանք մահացած են ճանաչվում միա-**

*«...Առանձին պետություններ ոչ միայն չեն սահմանափակում թոռների և վայրընթաց մյուս ազգականների ժառանգումը ներկայացման իրավունքով, այլև չեն սահմանափակում կողքային ազգականների ժառանգումը ներկայացման իրավունքով...»*

**ժամանակ: ժառանգությունը բացվում է նրանցից յուրաքանչյուրից հետո և ժառանգման են հրավիրվում նրանցից յուրաքանչյուրի ժառանգները»** (ՀՀ քաղ. օր. 1188-րդ հոդվածի 2-րդ մաս): Նշված դրույթից հետևում է, որ ժառանգատուի և ըստ օրենքի ժառանգի միաժամանակյա մահվան դեպքում ՀՀ օրենսդիրը բացառում է ներկայացման իրավունքով ժառանգման հնարավորությունը: Սակայն ինչպես ցույց է տալիս առանձին պետությունների օրինակը, ներկայացման իրավունքով ժառանգում կարող է տեղի ունենալ նաև այն ժամանակ, երբ ըստ օրենքի ժառանգը մահանում է ժառանգատուի հետ միաժամանակ: Նման նորմ է սահմանված Ռուսաստանի Դաշնության քաղ. օր. 1146-րդ հոդվածի 1-ին մասում, համաձայն որի՝ «Ըստ օրենքի ժառանգի բաժինը, ով մահ-

ացել է մինչև ժառանգության բացումը կամ ժառանգատուի հետ միաժամանակ, ներկայացման իրավունքով անցնում է նրա ժառանգներին և նրանց միջև բաշխվում է հավասարապես»: Ի դեպ նշենք, որ ՀՀ քաղ. օր. 1188-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթին նույնական նորմ սահմանված է նաև Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի 1114-րդ հոդվածի 2-րդ մասում, սակայն դրանով հանդերձ՝ Ռուսաստանի Դաշնության 1146-րդ հոդվածի 1-ին մասում սահմանվել այն դրույթը, որն

արդեն մեջբերել ենք վերևում: Ստացվում է ընդհանուր նորմ-հատուկ նորմ հարաբերություն, երբ առաջնությունը պետք է տրվի հատուկ նորմին՝ Lex specialis derogate generali սկզբունքով<sup>13</sup>: Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ կոմորիենտների կապակցությամբ՝ ներկայացման իրավունքով ժառանգության ինստիտուտը նախատեսվել է 2002թ-ին, ինչը ռուսական իրավունքի դոկտրինայում գնահատվում է որպես ներկայացման իրավունքով ժառանգության ինստիտուտի ներգործության ոլորտի ընդլայնում<sup>14</sup>: Ռուս իրավագետ **Ա.Լ.Մակովսկին** Ռուսաստանի Դաշնության օրենսդրության մեջ նման դրույթի նախատեսումը համարում է կոմորիենտների ավանդական ինստիտուտից լուրջ շեղում հօգուտ ներկայացման իրավունքով ժառանգության<sup>15</sup>:

<sup>13</sup> Նշված լատիներեն արտահայտությունը թարգմանաբար նշանակում է՝ «**հատուկ նորմը դուրս է մղում ընդհանուր նորմին**»:

<sup>14</sup> Տես՝ **Хаскельберг Б.Л.** Наследование по праву представления и переход права на принятие наследства. Цивилистические записки. Вып. 3. Екатеринбург. 2004. Институт частного права. էջ 226-227:

<sup>15</sup> Տես՝ Комментарин к части третьей Гражданского кодекса Российской Федерации / под ред. **А.Л.Маковского, Е.А.Суханова.** М. 2002. էջ 163-164:

Մեր գնահատմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքն առանց այն էլ խիստ սահմանափակում է ներկայացման իրավունքով ժառանգումը հատկապես առաջին հերթում, զոնե այդ պայմաններում կարելի էր ընդօրինակել ռուսական իրավական փորձը, ինչն էականորեն կբարձրացներ ժառանգման հարաբերությունների մասնավոր-իրավական կարգավորման մակարդակը և այդքանով կնվազեցներ ժառանգատուի գույքը պետությանը փոխանցելու հավանականությունը:

Ուշագրավ է նաև այն հարցի քննարկումը, թե արդյոք կարող է տեղի ունենալ ներկայացման իրավունքով ժառանգություն, երբ ըստ օրենքի ժառանգը ոչ թե մահացել է ժառանգատուի մահվանից առաջ, այլ ուղղակի ըստ օրենքի ժառանգը հրաժարվել է ընդունել ժառանգությունը: Եթե այս դեպքին նայենք ՀՀ քաղ. օր. 1221-րդ հոդվածի 1-ին մասի ձևակերպման դիրքերից, ապա միանշանակ է, որ ներկայացման իրավունքով ժառանգում տեղի չի ունենա, այդքանով որքանով ըստ օրենքի ժառանգը ողջ է: Իրավահամեմատական ճանաչողության համար մշենք, որ այս կապակցությամբ առանձին դրույթ է նախատեսում Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգիրքը՝ սահմանելով, որ «թույլատրվում է ներկայացման իրավունքով ժառանգությունը, երբ ըստ օրենքի ժառանգները հրաժարվում են ժառանգությունն ընդունելուց» (754-րդ հոդվածի 4-րդ մաս)<sup>16</sup>:

Շատ կարևոր է նաև այն հարցի քննարկումը, թե արդյոք բոլոր դեպքերում է, երբ ժառանգատուից ավելի վաղ մահացած ըստ օրենքի ժառանգների երեխաները կարող են ներկայացման իրավունքով ժառանգել: Այդ կապակցությամբ ՀՀ քաղ. օր. 1221-րդ հոդվածի 2-րդ մասում նշվում է. «Ներկայացման իրավունքով չեն կարող ժառանգել **ժառանգությունից մեկուսացված կամ ժառանգատուի կողմից ժառանգությունից զրկված ըստ օրենքի ժառանգի երեխաները**» (ընդգծ. մերն է):

Նախ ասենք, որ հիշյալ դրույթը ձևակերպված է անհաջող շարադասությամբ, որից ստացվող առաջին տպավորությունն այն է, իբրև ներկայացման իրավունքով չեն կարող ժառանգել ըստ օրենքի ժառանգների այն երեխաները, որոնք իրենք են մեկուսացվել ժառանգությունից կամ իրենք են ժառանգատուի կողմից զրկվել ժառանգությունից, ինչն անհեթեթություն է: Միայն ուշադրություն կենտրոնացնելով է հնարավոր դառնում հասկանալ, որ ըստ օրենքի ժառանգների երեխաները չեն ժառանգում ներկայացման իրավունքով, երբ այդ ըստ օրենքի ժառանգներն են մեկուսացվել ժառանգությունից կամ ժառանգատուի կողմից զրկվել ժառանգությունից: Նման թյուրըմկալումներից զերծ մնալու համար առաջարկվում է ՀՀ քաղ. օր. 1221-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթը վերաշարադրել հետևյալ կերպ. «**Ներկայացման իրավունքով չեն կարող ժառանգել ըստ օրենքի այն ժառանգի երեխաները, ով ժառանգությունից մեկուսացված է կամ ժառանգատուի կողմից զրկված է ժառանգությունից**»:

Թե ինչ հիմքերով և կարգով է ժառանգը մեկուսացվում ժառանգությունից, սահմանված է ՀՀ քաղ. օր. 1191-րդ հոդվածում: Իսկ թե ինչպես կարող է ժառանգատուն ըստ օրենքի ժառանգին զրկել ժառանգությունից, այդ հարցն էլ կարգավորված է ՀՀ քաղ. օր. 1201-րդ հոդվածում: Նշված երկու հիմքերից առաջինն ինչ-որ կերպ հասկանալի և ընկալելի է<sup>17</sup>, որ եթե ըստ օրենքի ժառանգը դիտավորյալ խոչընդոտել է ժառանգատուի վերջին կամքի իրականացմանը, դիտավորյալ կյանքից զրկել է ժառանգատուին կամ հնարավոր ժառանգներից որևէ մեկին կամ մահափորձ է կատարել նրանց կյանքի նկատմամբ, ապա կարելի է ենթադրել, որ ըստ օրենքի ժառանգը դա կարող էր անել ոչ միայն անձամբ իր, այլև իր

<sup>16</sup> Sten' Гражданский кодекс Франции (кодекс **Наполеона**). М. 2012. Инфотропик Медиа. էջ 236:

<sup>17</sup> Այս հիմքն ամենևին կարող էր չնշվել ՀՀ քաղ. օր. 1201-րդ հոդվածում, քանի որ կրկնում է ՀՀ քաղ. օր. 1191-րդ, 1216-րդ, 1217-րդ, 1219-րդ և 1221-րդ հոդվածներից պարզորոշ բխող իրավակարգավորումն այն մասին, որ ներկայացվող ժառանգները ևս ըստ օրենքի ժառանգներ են, որոնք ևս կարող են ճանաչվել անարժան և մեկուսացվել ժառանգությունից:

երեխաների շահերից ելնելով, և գուցե այդքանով արդարացված է, որ ըստ օրենքի ժառանգի երեխաներն էլ ժառանգություն չստանան տուժած ժառանգատուից: Բայց մյուս հիմքը, երբ ժառանգատուն ժառանգությունից զրկվում է ըստ օրենքի ժառանգին, և վերջինիս երեխաները չեն կարող ժառանգել ներկայացման իրավունքով, առավել քան զարմանալի է և անհասկանալի: Այսպես, համաձայն ՀՀ քաղ. օր. 1201-րդ հոդվածի 1-ին մասի՝ **«կտակարարն իրավունք ունի առանց պատճառների բացատրության ժառանգությունից զրկել ըստ օրենքի ժառանգներից մեկին, մի քանիսին կամ բոլորին»:** Ինչպես պարզորոշ երևում է նշված դրույթից, ըստ օրենքի ժառանգին ժառանգությունից զրկելը կարող է բոլորովին պայմանավորված չլինել որևէ պատճառով, և այս պայմաններում հասկանալի չէ, թե որ տրամաբանությամբ է ըստ օրենքի ժառանգի երեխան զրկվում ներկայացման իրավունքով ժառանգելու իրավունքից, երբ ըստ օրենքի ժառանգը որևէ անօրինական արարք չի կատարել ժառանգատուի նկատմամբ: Հարցին կարելի է նայել նաև այլ տեսանկյունից. եթե նույնիսկ կտակարարն անձնական պատճառ է ունեցել ըստ օրենքի ժառանգին զրկելու ժառանգությունից, դրանից չպետք է տուժի ըստ օրենքի ժառանգի երեխան, որի հանդեպ ժառանգատուն նույնիսկ անձնական համակրանք կարող էր ունենալ: Ի վերջո, ներկայացման իրավունքով ժառանգությունը ևս համարվում է ըստ օրենքի ժառանգություն՝ հիմնված ժառանգատուի և ներկայացվող ժառանգների ազգակցական-արյունակցական կապի վրա, հետևաբար ժառանգատուի և ըստ օրենքի որևէ ժառանգի անձնական հաշիվները չպետք է ավտոմատ կերպով անդրադառնան ըստ օրենքի մյուս ժառանգի՝ ներկայացվող ժառանգի իրավունքների վրա: Այս իրավական կարգավորման պայմաններում ստացվում է այնպես, որ օրենսդիրն անհարկի միջամտում է մասնավոր հարա-

բերություններին, անհիմն կերպով արգելափակում է ժառանգությունից զրկված ըստ օրենքի ժառանգի երեխաների իրավունքը՝ ներկայացման իրավունքով ստանալու ժառանգություն: Ինչպես նկատում ենք, ՀՀ օրենսդիրն այստեղ կրկին ընթացել է ներկայացման իրավունքով ժառանգության ինստիտուտի սահմանափակման ճանապարհով:

Վերոնշյալի կապակցությամբ նշենք, որ առանձին պետությունների օրենսդրությամբ (օրինակ՝ ՌԴ քաղ. օր. 1146-րդ հոդված) նույնպես նախատեսվում են այնպիսի իրավակարգավորումներ, ինչպիսին

**«...«Հ քաղաքացիական օրենսգիրքը խիստ սահմանափակում է ներկայացման իրավունքով ժառանգումը հատկապես առջին հերթում...»**

նախատեսված է ՀՀ օրենսդրությամբ, սկայն առանձին պետությունների օրենսդրությամբ էլ նման սահմանափակումներ չեն նախատեսվում (Ղազախստանի քաղ. օր. 1067-րդ հոդված):

Ամփոփելով ասվածը՝ ցանկանում ենք արձանագրել, որ ներկայացման իրավունքով ժառանգության ինստիտուտը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ենթարկվել է բավական կոշտ օրենսդրական սահմանափակումների, որոնք վկայում են ըստ օրենքի ժառանգման իրավական կարգավորման բնագավառում հանրային ներգործության մեծ գործակցի մասին: Անհրաժեշտ է ընդլայնել ներկայացման իրավունքով ժառանգության կիրառման շրջանակները՝ ժառանգման հարաբերությունների բնագավառում բարձրացնելով մասնավոր-իրավական կարգավորման գործակիցը: Սա արդի ժամանակաշրջանի հրամայականն է՝ հասարական կյանքի շարունակական լիբերալացման պայմաններում:

ԱՍՓՈՓՈՒՄ

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ներկայացման իրավունքով ժառանգության ինստիտուտն ուղեկցվում է մի շարք հիմնախնդիրներով, որոնք կրում են և իրավա-կոնցեպտուալ, և տերմինա-բանական բնույթ: Պիտական հոդվածում զուգահեռներ են անցկացվել ներկայացման իրավունքով ժառանգության և հարակից իրավական ինստիտուտների միջև, ցույց են տրվել դրանց նմանություններն ու տարբերությունները:

Ներկայացման իրավունքով ժառանգությունը ՀՀ օրենսդրությամբ ունի կիրառման ավելի նեղ շրջանակներ, քան այսպիսիք նախատեսվում են այլ պետությունների օրենսդրությամբ: Հիմնավորվել է այն մոտեցումը, որ ներկայացման իրավունքով ժառանգության կիրառման շրջանակների ընդլայնումը մեծացնում է ըստ օրենքի ժառանգների շրջանակը, որպիսի հանգամանքը մեծացնում է հավանականությունը, որ ժառանգատուի գույքը կանցի իր իսկ ազգականներին, այլ ոչ թե պետությանը: Այդ շրջանակի ընդլայնումը գնահատվում է որպես ժառանգման հարաբերությունների իրավական կարգավորման բնագավառում մասնավոր-իրավական հիմքերի ամրապնդում, որպես բնական իրավունքի նախապատվություն պրոգնոզիկ իրավունքի նկատմամբ:

Առկա հիմնախնդիրների լուծման ուղղությամբ արվել են մի շարք առաջարկություններ, որոնք կաող են զգալի ներդրում հանդիսանալ ՀՀ օրենսդրության կատարելագործման համար:

РЕЗЮМЕ

Институт наследования по представлению в законодательстве Республики Армения сопровождается некоторыми проблемами, которые носят концептуально-правовой и терминологический характер. В научной статье проанализированы институт наследования по представлению и смежные институты, были отмечены их сходства и различия.

Наследование по представлению в законодательстве РА имеет более узкие рамки, чем данный институт имеет в законодательстве многих иностранных государств. Аргументирован необходимость расширения рамок применения института наследования по представлению, который будет привести к расширению круга наследников по закону, а это в свою очередь повысит вероятность перехода наследства от наследодателя к своим кровным родственникам, а не к государству. Расширение круга наследников по закону расценивается как укрепление частно-правовых начал в области правового регулирования наследственных отношений, как доминирование естественного права над позитивным правом.

По направлению решения отмеченных проблем были сделаны некоторые предложения правового характера, которые при их принятии могут быть значительным вкладом при совершенствовании законодательства Республики Армения.

Resume

According to the Legislation of the Republic of Armenia the Institute of the right of inheritance is accompanied by a number of issues that are of legal conceptual and terminological character. In the scientific article there were held parallels between the right of inheritance and the related legal institutions, are illustrated their similarities and differences.

Due to RA legislation the right of inheritance has a narrower scope of application than such are scheduled to the legislation of other states. An approach is based that the expansion of the scope of application of the rights of inheritance increases the range of the heirs according to the law, thus increasing the probability of the fact that testator's property will pass to his relatives, rather than to the state. The expansion of this range is estimated as a securing of private-legal basis in the sphere of inheritance relations legal regulation, as a preference of natural right over positive right. There are made number of suggestions towards solving the problems which can be a significant contribution for the improvement of RA Legislation.

**Հիմնաբառեր**

ժառանգ, ժառանգման իրավունք, ժառանգատու, ժառանգությունից զրկված, ժառանգություն

Наследник, право на наследование, наследователь, лишённые наследства, наследство

Heir, heirship, legato, disinheritance, inheritance

**Հեղինակ**

Հայ-ռուսական Սլավոնական համալսարանի քաղաքացիական և քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի ասպիրանտ Նինա Տիգրանի Կուցանյան

Российско-Армянского Славянский университет, кафедра гражданского права и процессуального права, аспирант Нина Тиграновна Куцанян

PHD student in civil Rights of Russian-Armenian Slavonic university Nina Kutsanyan



# «ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ»-Ը ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅ ԻՐԱՎՈՒՆԷՒ ԱՂԲՅՈՒՐ

## Ռազմիկ ՄԱՐԻԿՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և  
իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

*Միջնադարյան Հայաստանի իրավունքի հիմնական աղբյուրներն են սովորության իրավունքը, կանոնական (եկեղեցական) իրավունքը, թագավորի հրովարտականները (թագավորության ժամանակաշրջանում), դատական որոշումները, միջազգային պայմանագրերը<sup>1</sup>: Միջնադարյան (ֆեոդալական) իրավունքի աղբյուրների շարքում իր ուրույն տեղն ունի կանոնական իրավունքը: Ինչպես նշում է հայ իրավունքի ականավոր մասնագետ, պրոֆեսոր Խ. Սամվելյանը. «Քրիստոնեական եկեղեցին իր զարգացման, մանավանդ իր կազմավորման, սկզբնական շրջանում հիերարխատական ինստիտուտն ամրացնելու և նրան հանրային նշանակություն ու ազդեցություն տալու նպատակով մշակում և հորինում էր իր սոցիալ-քաղաքական տիպաբանության դասակարգային գաղափարախոսությունը: Սահմանվում էին հատուկ պարտավորություններ, խրատներ, կարգեր, հրահանգներ, որոնք պարտադիր էին քրիստոնեական համայնքների համար և կոչվում էին կանոններ»<sup>2</sup>:*

*Հայ կանոնական (եկեղեցական) իրավունքը<sup>3</sup> ձևավորվել է դեռևս IV դարից սկսած՝ քրիստոնեությունը որպես պետական (պաշտոնական) կրոն ձանաչման շնորհիվ:*

Հասարակական, քաղաքական և սոցիալ-տնտեսական այդ խոշոր իրադարձությունը չէր կարող չազդել նաև հասարակական հարաբերությունները կարգավորող սոցիալական նորմերի վրա: Քրիստոնեության հաղթանակով, աշխարհիկ օրենսդրությանը զուգահեռ, ձևավորվեց նաև հայ եկեղեցական (կանոնական) իրավունքը: Խնդրո ժամանակաշրջանի քաղաքական պայմանները, մասնավորապես, հայոց պետականության անկումը, խանգարեցին

աշխարհիկ օրենսդրության զարգացմանը և, ընդհակառակը, խթանեցին հայ կանոնական իրավունքի ձևավորումը ու զարգացումը: Ստեղծված պայմաններում հայոց եկեղեցին միանձնյա իր ձեռքում կենտրոնացրեց իրավաստեղծ և արդարադատության գործառույթները: Հայ կանոնական իրավունքի հիմնական աղբյուրն է **Ս. Գիրքը՝ Հին և Նոր Կտակարանները:**

**«Աստվածաշունչը»** հավաք օրինաց չէ, ասկայն Հին ու Նոր Կտակարանները

<sup>1</sup> Տե՛ս **Գ. Սաֆարյան** Իրավունքի պատմություն և տեսության հիմնահարցեր: Երևան, 2010, էջ 92-93, **Սաֆարյան Գ. Խաչատրյան Հ.** Հայ իրավունքի հուշարձաններ (V-XVIIIդդ), Երևան, 1994, **Сукиасян А.Г.** Общественно-политический строй и право Армении в эпоху раннего феодализма. Ереван, 1963, с. 381-450.

<sup>2</sup> Տե՛ս **Սամվելյան Խ.** Հին իրավունքի պատմություն: Հատոր 1, Երևան, 1993, էջ 42:

<sup>3</sup> Մանրամասն տե՛ս **Ներսես վրդ. Մելիք-Թանգեան**, Հայոց եկեղեցական իրավունքը: Ս. Էջմիածին, 2011:

Հայաստանում քրիստոնեության ընդունումից հետո ունեցել են հիմնական օրենքի գորություն:

Կանոնական նորմեր ընդունում էին ընդհանրական եկեղեցու տիեզերական, տեղական և ազգային ժողովները, նրանց երևելի առաջնորդները: Եվ պատահական չէ, որ հայ կանոնական իրավունքը բաղկացած է երկու հիմնական մասերից՝ թարգմանված կամ փոխառված (ասորերենից և հունարենից), և ազգային-եկեղեցական կանոնախմբերից: Ընդհանրական եկեղեցու իրավական սահմանումներից հայ եկեղեցին ընդունել և իր համար պարտադիր է ճանաչել երեք տիեզերական ժողովների՝ **Նիկիայի (325)**, **Կոստանդնուպոլսի (381)** և **Եփեսոսի (431)**, վեց արտաքին տեղական ժողովների՝ **Անկյուրայի (314)**, **Կեսարիայի, Նեոկեսարիայի (315)**, **Անտիոքի (341)**, **Սարդիկայի (344-347)**, **Փանգրայի (349-370)** և **Լավոդիկիայի (365)** կանոնախմբերը, որոնք մտել են Հայոց կանոնագիրք և գործադրվել Հայաստանում: Հայոց եկեղեցին, հետևելով ընդհանրական եկեղեցու օրինակին, ընդունել է նաև քրիստոնեության վարդապետության երևելի և հեղինակավոր հայրերի կանոնները, որոնք գործել են մինչև **Քաղկեդոնի ժողովը (451)**:

Հարկ է նշել, որ օտար կանոնների կողքին անգնահատելի է հայ ազգային-եկեղեցական կանոնախմբերի նշանակությունը հայ իրականությունում: Դրանք բաժանվում են.

**ա) ազգային-եկեղեցական ժողովների՝ Աշտիշատի (354), Շահապիվանի (444), Դվինի չորրորդ (648), Դվինի հինգերորդ (719), Պարտավի (768), Սիսի (1243) կողմից ընդունված կանոնախմբեր.**

**բ) հայ հոգևոր առաջնորդների՝ Թադևոս և Փիլիպպոս առաքյալների, Գրիգոր Լուսավորչի, Սահակ Պարթևի, Ս. Ներսեսի, Ներսես Շնորհալու կանոնախմբեր:**

Հայտնի է, որ Հայաստանում ազգային-

եկեղեցական ժողովներին, սկսած 4-րդ դարի 50-60-ական թվականներից, մասնակցել են նաև աշխարհիկ տերերը: Ահա թե ինչու հայոց եկեղեցական ժողովներն իրենց նշանակությամբ համազգային քաղաքական հաստատություններ էին, քանզի այդ ժողովներն, ի թիվս եկեղեցական-դավանաբանական հարցերի, ընդունում էին նաև աշխարհիկ օրենքներ, նորմեր, որոնք կարգավորում էին նաև աշխարհիկ հասարակական հարաբերությունները: Այդ իմաստով, հայոց եկեղեցական ժողովները, որոշակի վերապահումներով, կարելի է դիտել որպես եվրոպական պառլամենտների նախատիպեր:

Հայ կանոնական իրավունքը համակարգվեց եկեղեցական և հասարակական նշանավոր գործիչ **Հովհաննես Իմաստասեր (Օձնեցի)** կաթողիկոսի (717-728) ջանքերով<sup>4</sup>:

Հովհաննես Օձնեցի Իմաստասեր Հայոց կաթողիկոսը հայ ժողովրդի և Հայ եկեղեցու մեծագույն նվիրյալ էր և ազգանվեր գործիչ: Լինելով բարձր հոգևորականության դասի ներկայացուցիչ նա կազմակերպեց պավլիկյան և երևութական աղանդների դեմ պայքարը, որոնք սպառնում էին հայ ժողովրդի միասնականությանը և ինքնությունը, նպաստեց Հայոց եկեղեցու ներքին կազմակերպման ուժեղացմանը, վերահաստատեց Հայ և Ասորի Հակոբիկ եկեղեցիների միասնությունը, Հավաքագրեց «Կանոնագիրք Հայոցը», բարեփոխումներ կատարեց ժամերգության մեջ և այլն:

Հովհաննես Օձնեցին նաև կարևոր քաղաքական դեր ունեցավ VII դ. Արաբական խալիֆայության հետ Հայաստանի հարաբերությունների կարգավորման գործում: **Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի** խոսքերով. «Հայոց Հայրապետը չափազանց կարող քաղաքական գործիչ էր և դիվանագիտական ունակություններով օժտված մի անձնավորություն»<sup>5</sup>:

Հայոց Կաթողիկոսը ոչ միայն հայ եկեղեցու ներկայացուցիչն էր, այլ փաս-

<sup>4</sup> Մանրամասն տե՛ս. **Պապյան Սիեր**, Հովհան Իմաստասեր Օձնեցի: Երևան, 1998:

<sup>5</sup> Տե՛ս, **Սուրբ Հովհան Օձնեցի** Հայրապետը և իր ժամանակը // 2003թ. հունիսի 3-5, Հաղպատի վանք (Գիտաժողովի նյութեր): Ս.Էջմիածին, 2004, էջ 27:

տորեն նաև քաղաքական դեմքն էր<sup>6</sup>:

Յովհաննես Օձնեցին խալիֆայի մոտից վերադարձավ ճիշտ է ժամանակավոր, սակայն կարևոր նվաճումներով, խալիֆան խոստացավ հարկերից ազատել Յայոց եկեղեցուն, դավանանքի ազատություն տալ, հրաժարվելով հավատափոխության պարտադրումից և խոստացավ չմիջամտել եկեղեցական գործերին<sup>7</sup>:

Անշուշտ, սա այն ամենը չէ, ինչ Յովհաննես Օձնեցի Յայրապետը քննարկել է խալիֆայի Յետ, սակայն Յայոց պատմիչների հաղորդած տեղեկությունները այս հանդիպման մասին շատ սահմանափակ են: Մաղաքիա Օրմանյանի կարծիքով Յովհաննես Օձնեցու շնորհիվ էր, որ խալիֆան ազատ արձակեց 705 թ. հրկիզումից հետո Դամասկոս տարված գերի նախարարներին: Նա գրում է, որ Օմարը Օձնեցուն, **«...ընկերակցութեան զինուորական գունդեր ալ տալով առաքեաց մեծաւ պատուով յաշխարհս Յայոց (ԿԻՐ. 38): Այդ պարագային յարմար է կցել Ղեւոնդի գրածն ալ թէ, էօմեր արծակեաց զբովանդակ գերեալսն յիւրաքանչուր տեղիս (ՂՆԳ. 66), ակնարկելով այն մեծ գերութեան, որ տեղի ունեցած էր յետ այրելոյն զնախարարսն աշխարհիս Նախիջևանի եւ Խրամի եկեղեցիներուն մեջ: Օձնեցին տեսնելով էօմերի բարի տրամադրութիւնը, միջնորդած է անշուշտ գերութեան մեջ գտնուողներուն համար, եւ ասով աւելի եւս փոխառութիւն ստացած է կաթողիկոսին Դամասկոս երթալը»<sup>8</sup>:**

Իրավագիտութիան տեսանկյունից Յովհան Օձնեցին հայ առաջին օրենսդիրն ու կողիֆիկատորն է:

Յովհան Իմաստասերը մեկ հավաքա-

ծուի մեջ համակարգեց հայ կանոնական իրավունքը և ստեղծեց իրավական կոթողային հուշարձան՝ **«Կանոնագիրք հայոց»**, որն առաջին *„Corpus juris canonici“*,-ին էր համաշխարհային իրավագիտության պատմության մեջ՝ հարյուր տարի կանխելով **Իսիդորոս Մերկատորի** կանոնական ժողովածուն, և Յայաստանում գործեց 12 դար շարունակ, մինչև խորհրդային կարգերի հաստատումը Յայաստանում: Յովհաննես Իմաստասերի կատարած ազգանպաստ գործի հիմնական նպատակն էր հայ ժողովրդի քաղաքական միասնության վերականգնումը, հայ ժողովրդի և հայ եկեղեցու ինքնուրույնության պահպանումն ու ամրապնդումը, ինչպես նաև հասարակության տարբեր խավերի ուժերի համախմբումը և պայքարը ընդդեմ արտաքին թշնամիների՝ բյուզանդացիների և արաբների: Յովհաննես Իմաստասերի հետնորդները շարունակեցին նրա գործը և այն հարստացրին նոր կանոնախմբերով: 10-րդ դարի վերջին «Կանոնագիրք հայոց»-ը արդեն պարունակում էր 40 կանոնախմբեր, որոնցից 1-24-ը Օձնեցու համակարգված կանոնախմբերն են, իսկ 25-40-ը՝ հետագա դարերի ընթացքում ընդունված կանոնախմբերը:

Մեզ են հասել ընդհանուր թվով 70-100 կանոնախմբեր, որոնք ընդգրկում են 1000-1500 կանոններ:

Ինչպես վերը նշեցինք, հայ կանոնական իրավունքը կարգավորում էր ոչ միայն եկեղեցուն և հոգևորականությանը վերաբերող հարցերը, այլև քաղաքացիական, ժառանգական, քրեական իրավունքի (օրինակ, սպանության, առևանգման և տարբեր տեսակի հակաբարոյական արարքների) բնագավառի որոշակի հարաբերությունները: Անհրաժեշտ է նշել, որ հայ

<sup>6</sup> Տե՛ս, **Ս. Տեր-Ղևոնդյան**, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Յայաստանում, Երևան, 1965, էջ 41:

<sup>7</sup> Տե՛ս, **Կիրակոս Գանձակեցի**, Յայոց պատմություն, էջ 60:

<sup>8</sup> Ազգապատում. Յայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, գրեց **Մաղաքիա արքիեպիսկոպոս Օրմանեան** նախկին պատրիարք, Ա. հատոր, վերահրատարակութիւնն նուիրեալ ի Յայաստան քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700 ամեակին, Մայր աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 960:

կանոնական իրավունքը գրեթե ամբողջությամբ կարգավորել է ամուսնա-ընտանեկան հարաբերությունները: Այսպես, կանոնական իրավունքը նորմավորեց նշանադրությունը, պսակադրությունը, ամուսնալուծությունը և մասամբ ամուսինների գույքային հարաբերությունները, խնամակալությունը, հոգաբարձությունը և որդեգրումը շարունակեցին կարգավորվել սովորութական իրավունքի նորմերով:

Հայ կանոնական իրավունքը սահմանեց նշանադրության և պսակադրության համար հետևյալ անհրաժեշտ պայմանները.

**ա)** մենամուսնություն, **բ)** ամուսնական չափահասություն, **գ)** ամուսնացողների փոխադարձ հաճություն, **դ)** ազգակցական և խնամիական չհասություն, **ե)** դավանակցություն կամ կրոնակցություն:

**Մենամուսնությունը** վաղուց ի վեր հաստատված կարգ էր հայ կանանց համար: Կանոնական իրավունքի նորմերը և ժամանակի պատմիչների աշխատությունները հնարավորություն են տալիս պնդելու, որ 5-րդ դարից ոչ ուշ մենամուսնությունը պարտադիր էր նաև տղամարդկանց համար, թեև իրականում այդ կարգը նրանց կողմից խախտվում էր:

**Ամուսնական չափահասության** համար հիմք էր ընդունվում արբունքի՝ «ի չափ հասակի» հասնելը, որը համարվում էր 12 տարեկան հասակը:

Հայոց կանոնագիրքը, ամուսնության համար, որպես կարևոր պայման, սահմանում էր **կողմերի փոխադարձ համաձայնությունը**, թեև դրա կիրառումը կյանքում հաճախ խախտվում էր: Ավելին. **Սահակ Պարթևի** Հե և **Ներսես կաթողիկոսի** ու **Ներշապուհ Մամիկոնեից եպիսկոպոսի** ԻԴ կանոնները խստիվ պատվիրում էին խափանել ծնողների բռնադատությամբ կայացվող ամուսնությունները և ապահովել փոխադարձ հաճությամբ պսակադրությունը:

**Մերձավոր ազգականների ամուսնությունն արգելելուն** հայոց եկեղեցու հայրերն անդրադարձել են Աշտիշատի, Շա-

հապիվանի, Դվինի 4-րդ ժողովներում և այլն: Ըստ սահմանված կարգի արգելված էր ներառյալ երրորդ աստիճանի ազգականների ամուսնությունը: Հայ կանոնական իրավունքը ամուսնության կարևոր պայման համարեց նաև ամուսնացողների **դավանակցությունը**, և խստիվ արգելվում էր ամուսնությունը հեթանոսների, հրեաների, քաղեղոնականների և զանազան աղանդավորների ու հերձվածողների հետ:

Ամուսնության համար նշված բոլոր պայմանների ոտնահարման դեպքերում սահմանվում էին ներգործության որոշակի իրավական միջոցներ, մասնավորապես, ամուսնությունը ճանաչվում էր անվավեր, նզովվում էին մեղավորները, պաշտոնազրկությամբ էին սպառնում պսակն օրինականացրած քահանային, նրան ենթարկում ապաշխարանքի, տուգանքի և այլն:

Չնայած որ քրիստոնեությունը ամուսնական միությունը հռչակեց ցմահ և Նոր Կտակարանի համաձայն միայն մահը կարող էր նրանց բաժանել, այդուհանդերձ կյանքն ուներ իր օրինաչափությունները: Այդ պատճառով հայ կանոնական իրավունքը սահմանեց որոշակի հիմքեր, որոնց առկայության դեպքում կարելի էր ամուսնալուծվել:

Դրանք էին կնոջ ամուսնական անհավատարմությունը (պոռնկությունը), անուսիններից մեկի երկարամյա անհայտ բացակայությունը, բորոտությունը, դիվահարությունը և գոնջությունը, կախարդությունը, կնոջ ամլությունը և ամուսնու անկարողությունը: Այստեղ անհրաժեշտ ենք համարում նշել, որ «Կանոնագիրք հայոց»-ի գիտաքննական բնագիրը գիտական բարեխղճությամբ պատրաստվել և հրատարակվել է **Վազգեն Հակոբյանի** աշխատասիրությամբ<sup>9</sup>:

Այդ աշխատությունից ինչ-ինչ պատճառներով դուրս են մնացել մի շարք արժեքավոր կանոնախմբեր, մասնավորապես **Դավիթ Ալավկաորդու** «Կանոնադրությունը», **Ներսես Շնորհալու** «Թուղթ ընդհանրականը», և Սիսի 1243թ. եկեղեցական ժո-

<sup>9</sup> Տե՛ս, Կանոնագիրք հայոց. աշխատասիրությամբ **Վազգեն Հակոբյանի**: Հտ. Ա., Երևան, 1964, հտ. Բ., Երևան, 1971:

ղովի կանոնական որոշումները:

Դավիթ Ալավկաորդու «Կանոնադրությունը»-ը կազմվել է մոտավորապես 1130 թվականին: Լինելով իր ժամանակի կրթված մարդկանցից, ինչպես նաև երկրի հասարակական-քաղաքական կյանքի ակտիվ մասնակիցներից մեկը, Դավիթ Ալավկաորդին խորապես մտահոգվել է հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման հիմնախնդրով, որի արգասիքն է հայ իրականության մեջ առաջին աշխարհիկ համակարգված օրենսդրությունն ստեղծելու փորձը: «Կանոնադրությունը» կամ «Կանոնական օրինադրությունները» բաղկացած է 97 կանոններից, որոնք կարգավորում են քաղաքացիական, աշխատանքի պաշտպանության, ամուսնաընտանեկան և քրեաիրավական որոշ հարաբերություններ: Կանոնների զգալի մասը վերաբերում է նաև կենցաղային մաքրակեցության, սնահավատության, սինոնականության (հոգևոր պաշտոն վաճառելը), բարոյականության հարցերին: Դավիթ Ալավկաորդու մարդասիրական հայացքները դրսևորվել են հատկապես քրեաիրավական բնույթի վարքագծի կանոններ սահմանելիս: Այսպես, նա մարդուն քրեական պատասխանատվության ենթարկելու հիմքը սահմանում և կատարած արարքում նրա մեղավորությունը: Այլ կերպ ասած՝ Դավթի կանոնները հանցագործության սուբյեկտ են ճանաչում միայն մեղսունակ ֆիզիկական անձին, որն հասել է որոշակի տարիքի: Ինչպես հայտնի է, հին և միջին դարերում բազմաթիվ են այն իրավական հուշարձանները, որոնք հանցագործության սուբյեկտ են ճանաչել նաև կենդանիների և, նույնիսկ, բնության ուժերն ու անշունչ առարկաները: Կանոնները խստիվ արգելում են ինքնադատաստանը, իսկ ինքնադատաստան կատարողները համարվում են հանցագործներ և ենթարկվում քրեական պատասխանատվության: Կանոնները որոշակիորեն շարադրել են նաև քրեական իրավունքի կարևորագույն ինստիտուտներից մեկը՝ անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտը, երբ մարդը ընդհանրապես ազատվում է քրեական պատասխանատվությունից:

Պատիժ նշանակելու հարցում ևս Դավիթ Ալավկաորդին սահմանել է մի շարք մարդասիրական կանոններ: Այսպես, օրինակ, պատիժ նշանակելիս, ըստ կանոնների, պետք է հաշվի առնել ինչպես պատաս-

խանատվությունը մեղմացնող, այնպես էլ ծանրացնող հանգամանքները: Պատիժը մեղմացնող հանգամանքներից էին անգույշ («ականա») հանցագործությունները, որոնց դեպքում նախատեսված էր անհամեմատ մեղմ պատժատեսակներ՝ դրամական տուգանք, ապաշխարանք և այլն: Պատիժը ծանրացնող հանգամանքներից են. երբ հանցագործությունը կատարվում է դաժանաբար («անխնա», «զազանաբար»), երբ հանցագործությունները շարունակվում են երկար ժամանակ («զերկարութեան ժամանակն լինել»), չվերադաստիարակվող («անբժշկելի») հանցագործների, հարբած վիճակում և դիտավորությամբ կատարած հանցագործությունները: Այդպիսի հանցագործությունների համար կանոնները սահմանում էին խիստ պատժատեսակներ մարմնական պատիժ, ազատազրկում և նույնիսկ մահապատիժ:

Դավիթ Ալավկաորդու կանոնները պարունակում են նաև ժամանակի համար բավականին առաջադիմական այնպիսի վարքագծի կանոններ, ինչպիսիք են՝ ամուսնության համար փեսացուի և հարսնացուի կամավոր համաձայնությունը, անհիմն ամուսնալուծությունների արգելումը, երեխաների անվճար ուսուցման սահմանումը, չափն անցած ավատատերերի դատապարտումը, աշխատանքի պաշտպանության հարցերը և այլն:

«Կանոնագիրք հայոց»-ի հետ մեկտեղ Դավիթ Ալավկաորդու կանոնների մի մասը մտավ հայոց ազգային դատաստանագրքերի մեջ:

Չայ կանոնական իրավունքի հուշարձանների շարքում նշանակալի երևույթ է նաև միջնադարյան հայ իրականության ամենաերևելի գործիչներից և մտածողներից մեկի՝ **Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրականը»**: Սա Ներսես Շնորհալու անդրանիկ կոնդակն է՝ ուղղված հայ ժողովրդին: «Թուղթ ընդհանրականը» բաղկացած է երկու մասից, առաջինն ուղղված է հոգևորականությանը, իսկ երկրորդը՝ աշխարհիկ դասերի ներկայացուցիչներին: Առաջին մասում Շնորհալին սահմանել է հոգևորականության ներկայացուցիչների համար նախատեսված վարքագծի կանոններ, որոնցով վերջիններիս հորդորում է չգբաղվել աշխարհական գործերով, եկամուտները բաշխել աղքատներին և կարիքավորներին, հարբեցողությամբ չտարվել, վանքից վանք չթափառել, ազահությունից,

չարախոսությունից, բամբասանքներից և ստախոսությունից զերծ մնալ, արդարության դեմ չմեղանչել, հարստացնել իրենց գիտելիքները և հոգևորականությանը ներհատուկ առաքինի վարք դրսևորել: «Թուղթ ընդհանրական»-ի երկրորդ մասում Շնորհալին խոսքն ուղղում է աշխարհիկ դասի ներկայացուցիչներին՝ իշխաններին, զինվորականներին, քաղաքացիներին, երկրագործներին և կանանց: Կաթողիկոսը իշխաններին կոչ է անում պահպանել օրինականությունը, իհարկե, ավատատիրական իրավագիտության սահմաններում, չպահել կաշառակեր և դաժան կառավարիչներ, «մարդկանց չստիպել աշխատելու որպես անլեզու անասուններ», անիրավությամբ չվարվել հպատակների հետ, պահպանել ընչազուրկների իրավունքը և այլն:

Դիմելով զինվորական դասին, Շնորհալին նրանց խրատում է, որպեսզի հավատարմությամբ և նվիրումով ծառայեն իրենց իշխանություններին, պատվով կատարեն զինվորական ծառայությունը և չհափշտակեն հասարակ ժողովրդի ունեցվածքը:

Կաթողիկոսը քաղաքաբնակներին (քաղաքացիներին, առևտրականներին և արհեստավորներին) հորդորում է ուղիղ և անարատ կենցաղավարությամբ ապրել, խաբեություն և նենգություն չգործել, իրենց ունեցվածքից ողորմություն տալ աղքատներին:

Երկրագործներին և բոլոր ծխականներին ուղղված խոսքով Շնորհալին պահանջում է, որ նրանք հեռու մնան հարբեցողությունից՝ նշելով, որ հարբեցողությունը պատճառ է ամեն տեսակ անիրավության և անբարոյականության: Հատկապես պետք է ընդգծել կաթողիկոսի կոչը երեխաներին խնամելու, դաստիարակելու և կրթություն տալու մասին: «Թուղթ ընդհանրական»-ի վերջում Շնորհալին խոսքն ուղղում է հայ կանանց, որպեսզի վերջիններս պարկեշտ և վայելուչ լինեն, չզայթակղեն երիտասարդությանը, չզբաղվեն թովչանքներով, կավատությանը, թալիսամանների և դեղորայքի միջոցով չհրապարեն տղամարդկանց: «Թուղթ ընդհանրական»-ը պարունակում է նաև ամուսնաընտանեկան իրավունքին

վերաբերող որոշակի նորմեր:

Պահպանելով կանոնական իրավունքի համապատասխան նորմերը՝ Շնորհալին արգելում է գաղտնի պսակադրությունը, ապօրինի ամուսնալուծությունները: Ամուսնանալու համար նա սահմանում է նվազագույն տարիք՝ տղաների համար 15, աղջիկների համար՝ 12 տարեկան հասակը: Բռնությամբ կամ հարկադրանքով կատարված ամուսնությունը Շնորհալին համարել է «ոչ հաստատուն» և «լուծելի»:

Դատապարտելով ապօրինի ամուսնությունը կամ անհիմն ամուսնալուծությունը և սեռական սանձարձակությունը, Շնորհալին հետամուտ էր բարի և վսեմ նպատակի. **որքան կայուն և անսասան է ընտանիքը, նույնքան առողջ և ամուր է ողջ հասարակությունը:**

Առանց որևէ չափազանցության կարելի է նշել, որ իր գրության ժամանակից (1166թ.) մինչև մեր օրերը Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրականը» պահել է իր բացառիկ նշանակությունը և արդիականությունը ոչ միայն եկեղեցական բարեկարգության, այլև ողջ հասարակության բարեկրթման և հոգևոր կյանքի ինքնամաքման համար:

Մյուս կանոնախումբը, որը տեղ չի գտել «Կանոնագիրք հայոց»-ում, 1243թ. Կիլիկյան հայկական պետության Սիս քաղաքում գումարված եկեղեցական ժողովի կողմից ընդունված **Կանոնական որոշումներն** են: Հոգևորականության դասի հետ միասին ժողովին մասնակցում էին նաև **Հեթում Առաջին** թագավորը, թագաժառանգը, իշխանավորները և «երևելի մարդիկ»: Ժողովն ընդունել է 25 կանոնական որոշումներ, որոնք, ի թիվս եկեղեցու և հոգևորականության ներքին կյանքին վերաբերող հարցերի, կարգավորում էին նաև կրթության, ամուսնա-ընտանեկան հարաբերությունների որոշակի հարցեր: Ժողովը նաև խիստ պատիժներ է սահմանել աղանդավորների և հերետիկոսների համար:

Սիսի եկեղեցական ժողովը հայ իրականության մեջ վերջինն էր, որը իրավական բնույթի կանոնական որոշումներ սահմանեց:

# ԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

## ԻՐԱՎԱԿԱՆ ԳՆՈՒՄԱՅԻՆ ԴԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ալֆրեդ ՍԱՐԴՅԱՆ

Ասպիրանտ

*Արդի դարաշրջանի իրավական ինտեգրման գործընթացում ներգրավված է նաև ազգային իրավունքը, որը կազմում է եվրոպական մայրցամաքային իրավական համակարգի բաղկացուցիչ մասը: Անդամակցելով եվրոպական կառույցներին և մտնելով եվրոպական միասնական իրավական տարածք, անհրաժեշտություն է առաջացել իմպլիմենտացիայի ենթարկել եվրոպական իրավական չափանիշները, հայեցակարգերը և արժեքները՝ ազգային իրավունքի համակարգում: Այս առումով ազգային իրավունքի զարգացման ռազմավարական ուղղությունը պետք է լինի ժողովրդավարական արժեքների, մասնավորապես իրավունքի գերակայության և մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական չափանիշների և մեխանիզմների փոխակերպումը ազգային իրավունքի համակարգում: Արդի դարաշրջանում տեղի է ունենում մարդասիրության հետևողական ներթափանցումը իրավունքի մեջ, որի շնորհիվ ապահովվում է անհատի ինքնավար կարգավիճակը, հասարակությունում հաստատվում է փոխհամաձայնության մթնոլորտ: Համաշխարհային առաջավոր փորձի և մարդու իրավունքների միջազգային չափանիշների գործնական փոխակերպումը իրավունքի համակարգում իրավական առաջընթացի նախապայմանն է: Դրանք համահունչ են պատմականորեն ձևավորված հայրենի ազգային ավանդույթներին և արդի ժամանակաշրջանում ձևավորվող հասարակական հարաբերությունների բովանդակությանն ու զարգացման տրամաբանությանը:*

Մեզանում բացակայում է ազգային իրավունքի և օրենսդրության զարգացման վերաբերյալ համապետական պաշտոնական հայեցակարգը, որի հետևանքով օրենսդրական գործունեությունը, իրավունքի համակարգը և իրավակիրառ պրակտիկան դեռևս լիովին չեն համապատասխանում ժողովրդավարական արժեքներին ու պահանջներին:

Ազգային իրավունքի ժամանակակից մոդելի և օրենսդրության զարգացման ընդհանուր հայեցակարգի մշակումն անխզելիորեն կապված է երկրում տեղի ունե-

ցող սոցիալ-տնտեսական և քաղաքական արմատական վերափոխումների և հասարակության ժողովրդավարական ուղղությամբ զարգացման համապետական միասնական համադրույթի հետ և կազմում է վերջինիս անբաժան մասը:

Ազգային իրավունքի զարգացման համար կարևորվում է այդ գործընթացի գիտական կանխատեսումը:

Ընդհանրապես, «կանխատեսման ուժը գիտական տեսության գնահատման գլխավոր չափանիշներից է»<sup>1</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Спиркин А.Г. Философия. М., 1998, с. 439.



Կանխատեսումն ունի մի շարք ասպեկտներ: Այն կարող է վերաբերել և՛ սոցիալ-տնտեսական ու քաղաքական զարգացումներին, և՛ օրենսդրության, և՛ իրավունքի համակարգերին:

Կանխատեսումը հնարավորություն է տալիս վերահսկելի և կառավարելի դարձնել հասարակական զարգացման պրոցեսները: Գիտական ճանաչողությունը հնարավորություն է ստեղծում ոչ միայն կանխատեսելու հասարակական երևույթների զարգացման միտումները, այլև գիտականորեն կառավարել զարգացման այդ միտումները:

Սոցիալական կանխատեսումը վերաբերում է ապագա հասարակական գործընթացների զարգացման հիմնահարցերին<sup>2</sup>: Սոցիալական կանխատեսմանը բնորոշ են մի շարք առանձնահատկություններ հարաբերական բարձր հակադարձ ուժի ազդեցությունը կանխատեսման և կառավարման միջև, ավելի ճիշտ կանխատեսման և դրա հետևանքի միջև: Այդ իսկ պատճառով, սոցիալական կանխատեսմանը պետք է նախորդի էմպիրիկ նյութի խորը վերլուծությունը և դրա հիման վրա մշակվեն տեսականորեն հիմնավորված առաջարկություններ և հանձնարարականներ տեսանելի ապագայում որևէ սոցիալական երևույթի հնարավոր զարգացումների մասին: Սոցիալական կանխատեսման հասցեատերը ապագան է: Սակայն ապագայի վերաբերյալ ոչ բոլոր տեղեկությունները կարող են հավակնել գիտական կանխատեսման կարգավիճակի. **«Կանխատեսումը ոչ միայն ապագայի վերաբերյալ պարզ գուշակություն է, այլև համակարգված հետազոտություն այս կամ այն երևույթի կամ գործընթացի հեռանկարային զարգացման մասին ժամանակակից գիտու-**

**թյան ընձեռած միջոցների շնորհիվ»<sup>3</sup>:**

Իրավաբանական կանխատեսումը պետաիրավական երևույթների հետզա գարգացման օրինաչափությունների և առանձնահատկությունների համակարգված հետազոտություն է: Իրավաբանական կանխատեսման օբյեկտները կարող են տարբեր լինել. պետությունը, իրավունքը, ժողովրդավարական ինստիտուտները և այլն: Կանխատեսման պրոցեսում այդ օբյեկտները ուսումնասիրվում են ապագա կացության և դրանց հնարավոր զարգացումների համատեքստում<sup>4</sup>:

Իրավաբանական կանխատեսման տեսական-ճանաչողական և գիտագործնական մշանակությունը նրանում է, որ այն հաղորդում է տեղեկություններ. **առաջին**, պետաիրավական երևույթների վրա այս կամ այն գործոնների ազդեցության և, **երկրորդ**, իրավական կարգավորմանը ենթակա հասարակական պահանջումների մասին:

Իրավունքի համակարգի զարգացման կանխատեսումը մասն է կազմում իրավաբանական կանխատեսման: Այդ կանխատեսումը գիտական հատուկ մեթոդների հետազոտության միջոցով ստացվող տեղեկությունն է իրավունքի համակարգի կատարելագործման և նրա հետագա զարգացման հիմնական ուղղությունների, ինչպես նաև օրենսդրության ապագա վիճակի մասին: Այդպիսի կանխատեսման հիմնական նպատակն է բացահայտել հասարակական հարաբերությունների այս կամ այն իրավական կարգավորման անհրաժեշտությունը, տեսականորեն կանխատեսել այդ իրավական ակտերի նպատակահարմարությունը և սոցիալական արդյունավետությունը տեսանելի ապագայում, ինչպես նաև կանխատեսել իրավական կարգա-

<sup>2</sup> Տե՛ս **Румянцев Т.М.** Интервью с будущим: Методологические проблемы социального прогнозирования. Л., 1971; Методологические проблемы социального прогнозирования общественных явлений. Киев, 1978; **Бестужев-Лада И.В.** Поисковое социальное прогнозирование. М., 1984; Он же: Нормативное социальное прогнозирование. М., 1987.

<sup>3</sup> Տե՛ս **И.В. Бестужев-Лада.** Окно в будущее. Современные проблемы социального прогнозирования. М., 1970. с.14.

<sup>4</sup> Տե՛ս **Сафаров Р.Л.** Юридическое прогнозирование. В кн.: Право и социология. М., Наука. 1973. с. 95- 130; Նույնի. Прогнозирование и юридическая наука // Советское государство и право. 1969. N 3; **Гаврилов О.А.** Стратегия правотворчества и социального прогнозирования. М., 1993.

վորման ձևերի և մեթոդների սպասվող հնարավոր փոփոխությունները և դրանց արդյունքը:

Իրավունքի համակարգի զարգացման կանխատեսումը անհրաժեշտ է դիտարկել որպես պետության իրավական քաղաքականության անհրաժեշտ բաղադրիչ մաս:

**Իրավունքի համակարգի կանխատեսման հիմնական խնդիրներն են.**

● որոշարկել հասարակության համար առաջնային նշանակություն ունեցող առավել հրատապ սոցիալական երևույթները և իրավական կարգավորման ենթակա ոլորտները,

● բացահայտել հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման առավել հեռանկարային և արդյունավետ ձևերն ու մեթոդները,

● որոշել հասարակական զարգացման առաջընթացի համար առավել կարևորություն ներկայացնող և առաջնային նորմատիվ-իրավական ակտերի ընդունման առաջնահերթությունները,

● վերլուծել և արդյունավետ օգտագործել տնտեսության, սոցիալական, քաղաքական, էկոլոգիական և հասարակական կյանքի այլ բնագավառների հեռանկարային զարգացման վերաբերյալ տեղեկատվությունները և կանխատեսումները:

Այս բոլորը հնարավորություն կտան գիտականորեն կանխատեսել իրավունքի համակարգի հեռանկարային զարգացման հիմնական միտումները և, ըստ այդմ էլ ծրագրավորեն օրենսդրական գործունեությունը:

Այդ խնդիրների իրականացման համար, մեր կարծիքով, անհրաժեշտ է մշակել «Յայաստանի Յանրապետությունում իրավական բարեփոխումների հայեցակարգը», որը կապահովի իրավունքի-համակարգի զարգացման համակարգավորությունը:

Մեր կարծիքով ազգային իրավունքի համակարգի բարեփոխումների հիմնական ուղղությունները պետք է լինեն.

**1. Պետաիրավական համակարգի բարեփոխումների հետևողական իրականացում միջազգային չափանիշներին**

համաձայն,

**2. ՀՀ Սահմանադրությունում առկա հակասությունների, անճշտությունների և դեկլարատիվ նորմերի վերացումը, ինչպես նաև հանրային իշխանության տարբեր ճյուղերի, հաստատությունների և ինստիտուտների կազմակերպման իրավական հիմքերի հստակեցում և կատարելագործում,**

**3. Ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետության ձևավորման գործընթացի օրենսդրական ապահովում, Սահմանադրական օրինականության, սահմանադրական արդարադատության իրավական հիմքերի կատարելագործում:**

Ազգային իրավունքի զարգացման հիմնական ուղղություններից մեկն ենթաօրենսդրական իրավաստեղծ գործունեության ծավալների հետևողական նվազեցումն է և դրան հակադարձ օրինաստեղծ գործունեության ընդհանուր տեսակարար կշռի բարձրացումը նորմատիվ-իրավական ակտերի համակարգում: Պետական անկախության վերջին տարիների իրավաստեղծ պրակտիկայի ենթաօրենսդրական ակտերի վերլուծությունը ցույց է տալիս, որ մասամբ անցյալի իներցիայով, մասամբ իրավական միհիլիզմի և սահմանադրական օրինականության ուղղակի ոտնահարման հետևանքով, նախ դեռևս մեծ է ենթաօրենսդրական գերատեսչական նորմատիվ (վարքագծի համապարտադիր) բնույթի ակտերի տեսակարար կշիռը ազգային իրավունքի համակարգում և, երկրորդ, դրա համապատասխան ենթաօրենսդրական մակարդակում ակտերի որակական տեսանկյունից խոտանն անհամեմատ ավելի մեծ տոկոս է կազմում, քան օրենսդրական ոլորտում: Խնդիրը նրանում է, որ ենթաօրենսդրական ակտերը պետք է ընդունվեն օրենքների կիրառման համար և, որպես կանոն, չպետք է ստեղծեն վարքագծի համապարտադիր նոր կանոններ:

Ազգային իրավունքի զարգացման հիմնական գրավականներից մեկը հասարակությունում արմատավորված իրավական միհիլիզմի հաղթահարումն է<sup>5</sup>:

<sup>5</sup> Տե՛ս. Сафонов В.Г. Понятие правового нигилизма "Государство и право", N° 12, 2004. с. 65-69.

Իրավունքի նկատմամբ նիհիլիստական մոտեցումը վերացնելու համար անհրաժեշտ է որպեսզի հասարակությունում արմատավորվի իրավունքի (օրենքի) գերակայության գաղափարը, այն դառնա պետական մարմինների և պաշտոնատար անձանց գործունեության կենսաձև, ներդրվեն իրավական կարգավորման այնպիսի մեխանիզմներ, որոնք ի վիճակի լինեն արագ արձագանքելու նման մարտահրավերներին: Այդ իսկ կապակցությամբ, սահմանադրական բարեփոխումների շրջանակներում պետք է հստակեցվի իշխանությունների տարանջատման սկզբունքի հիման վրա, նրանց լիազորությունները, հակաշփոխների և զսպումների մեխանիզմը, հստակեցվի նաև պետության գլխի պաշտոնանկության կարգը, կատարելագործվի սահմանադրական վերահսկողության ինստիտուտը, այն պասիվ դիտորդից վերաճի սահմանադրական օրինականության պահպանման հուսալի երաշխիքի, ռեալ իրավական մեխանիզմներ մշակվեն մարդու և քաղաքացու իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար, կատարելագործվի արդարադատության մարմինների ներկա համակարգը, արդարադատությունը դառնա իրապես անկախ իշխանություն, որն անկաշկանդ կարողանա իրականացնել իր առաքելությունը:

Մեր կարծիքով ազգային իրավունքի զարգացման հիմնական միտումներն արդի դարաշարքանում հանգում են հետևյալներին.

**1. Ազգային իրավունքի զարգացման հիմնական միտումներից է նրա ինտեգրացիոնալիզացիան և միջազգային իրավունքի գերապատվության ծանաչումը, որը բնորոշ է XXI դարի իրավական զարգացումներին<sup>6</sup>:** Ազգային իրա-

վունքի իետենալիզացիան ենթադրում է, մասնավորապես ներպետական օրենսդրության համապատասխանեցում միջազգային իրավական ստանդարտներին (չափանիշներին): Ստանդարտիզացիան իրավունքում ներառում է իրավական կարգավորման տարբեր ոլորտները և, հատկապես մարդու իրավունքների պաշտպանության բնագավառը: Միջազգային-իրավական ստանդարտները (չափորոշիչները) տարածվել են նաև արդարադատության, ձեռնարկատիրական գործունեության և ֆինանսական բնագավառներում<sup>7</sup>:

**2. Ազգային իրավունքի զարգացման բնութագրիչներից է իրավունքի դերի բարձրացումը հասարակական գործընթացների կատարելագործման խնդրում, որն արտահայտվում է հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման ոլորտի ընդարձակման և խորացման եղանակով:** Ժամանակակից ներպետական իրավունքն ավելի է ընդարձակել իրավական կարգավորման ոլորտները, ներառելով նյութական բարիքների արտադրությունը, սոցիալական, քաղաքական հարաբերությունները, ինֆորմատիկան, հոգևոր ոլորտը և այլն<sup>8</sup>: Այս առումով իրավունքի կարգավորիչ դերում գերապատվությունը պետք է տրվի այլընտրանքային (դիսպոզիտիվ) նորմերին՝ ապահովելով իրավահարաբերության կողմերի ազատ ընտրության առավել լայն հնարավորություններ:

**3. Իրավունքի զարգացման հիմնական միտումներից է նաև իրավունքի աղբյուրների համակարգային փոփոխությունները:** Այսպես, ավանդական իրավունքի աղբյուրների (օրենք, ենթաօրենսդրական ակտեր) համակարգում աստիճանաբար իրենց ուրույն տեղն են գրա-

<sup>6</sup> Տե՛ս. **Лукашин И.И.** Взаимодействие международного и внутригосударственного права в условиях глобализации // “Журнал российского права”, 2002, N 3. Он же. Глобализация, государство, право, XXI век. М., 2000. **Գագիկ Հարությունյան**, Իրավունքի գերակայության սահմանադրական երաշխիքները: Երևան, 2003, նույնի՝ Սահմանադրությունից՝ սահմանադրականություն: Երեան, 2004:

<sup>7</sup> Տե՛ս. **Захаров А., Кутафин О.** Концепция единого правового пространства Европы, ЕВРАЗЭС и СНГ // Право и экономика”, 2003, N 3, с. 11.

<sup>8</sup> Տե՛ս. Систематизация законодательства в Российской Федерации / Под ред. **А.С. Пшолкина.** СПб., 2003, с. 20.

վում նորմատիվ պայմանագրերը և դատական նախադեպերը: Եթե նորմատիվ պայմանագրերն ավելի ու ավելի են ներթափանցում ազգային իրավական համակարգի մեջ (պայմանավորված հատկապես շուկայական հարաբերությունների զարգացմամբ), ապա նույնը չի կարելի ասել դատական պրակտիկայի և նախադեպային իրավունքի մասին<sup>9</sup>: Վերջինս նորություն է ազգային իրավունքի համակարգի համար և նրա ձևավորման և կայացման գործընթացը կլինի երկարատև ու բարդ: Դատական նախադեպի պաշտոնական և հասարակական ճանաչման համար անհրաժեշտ է հետևյալ նվազագույն պայմանների առկայությունը. զարգացած իրավական համակարգ, անկախ դատական իշխանություն, հասարակությունում բարձր իրավագիտակցություն ու իրավական կուլտուրա:

**4. Ազգային իրավունքի զարգացման հիմնական միտումներից կարելի է նշել նաև օրենսդրության սոցիալիզացիան և էկոլոգիզացիան:**

Ազգային պետականությունը սահմանադրական մակարդակով ամրագրելով որպես սոցիալական պետություն, վերջինս ավելի գործունե ու ազդեցիկ պետք է դարձնի իր գործունեության սոցիալական բնագավառը ընդունելով բավականին նորմատիվ ակտեր սոցիալական կառավարման ոլորտում (սոցիալական ապահովության, առողջապահության, կրթության և այլն):

Արդի դարաշարքանի հիմնական մարտահրավերներից է շրջակա միջավայրի իրավական պաշտպանությունը, որը դար-

ձել է միջազգային հանրության և առանձին պետությունների հիմնախնդիրներից մեկը: Գիտատեխնիկական առաջընթացը, ազատ շուկայական հարաբերությունների ծավալումը, բնական պաշարների աննախադեպ շահագործումը էական վնաս են հասցնում շրջակա միջավայրին, հետևաբար նաև մարդու առողջությանը և բնության բնական կենսագործունեությանը: Այդ իսկ պատճառով օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջացել իրավական պաշտպանության տակ առնել էկոլոգիայի պահպանության հետ կապված հիմնախնդիրները: Գտնում ենք, որ ազգային իրավունքի զարգացման հիմնական միտումներից մեկն էլ էկոլոգիական օրենսդրության ձևավորումն ու զարգացումն է<sup>10</sup>:

**5. Ազգային իրավունքի զարգացման բնորոշ գծերից է նաև իրավական կարգավորման ապակենտրոնացման միտումը քաղաքական, վարչական, սոցիալ-տնտեսական բնագավառներում<sup>11</sup>:**

Ինչպես նշում է Գ. Հարությունյանը, «ժողովրդավարական արժեքները հիմնավորապես դառնում են սահմանադրական կարգի հենքը և մարդկանց ազատությունների երաշխիքները: Իրավական ժողովրդավարական պետություններում նկատվում է համընդհանուր միտում կենտրոնական իշխանության աստիճանական սահմանափակման, ուժի (քաղաքական, վարչական, տնտեսական) ապակենտրոնացման և ինքնակառավարման հնարավորությունների ընդլայնման ու երաշխիքների ամրապնդման հարցերում»<sup>12</sup>:

<sup>9</sup> Մանրամասն տե՛ս. **Поленики С.В.** Судебный прецедент в РФ: реальность и перспективы //Представительная власть - XX пск. 2002, N 5-6, **Спектор Е.И.** Судебный прецедент как источник права// Журнал российского права, 2003, N 5 և այլն:

<sup>10</sup> Մանրամասն տե՛ս. **Игнатева И.А.** Систематизация экологического законодательства: Современные проблемы и практические подходы.// Экология и право, с. 21-29.

<sup>11</sup> Մանրամասն տե՛ս. **Кoшанина Т.Е.** Децентрализация в правовом регулировании (структурный анализ). Автореф. дисс.... докт. юрнд. наук. М., 1992.

<sup>12</sup> **Չագիկ Հարությունյան**, Սահմանադրությունից սահմանադրականություն: Երևան, 2004, էջ 17, նույնի Սահմանադրական մշակույթ, պատմական դասերը և ժամանակի մարտահրավերները, Երևան, 2005, 220-222 էջեր:

# ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿ

Արթուր ԽԱՉԱՏՐՅԱՆ

հայցորդ

*Իրավաբանական պատասխանատվությունը տարողունակ և բազմանիստ սոցիալական երևույթ է:<sup>1</sup> Այն իրավական գրականության մեջ տարբեր ձևով է սահմանվում: Այսպես, Ի. Ն. Սիկյակինը համարում է, որ «իրավաբանական պատասխանատվությունը իրենց ներկայացնում է իրավախախտումներից առաջացած իրավական հարաբերություններ պետության՝ ի դեմս նրա հատուկ մարմինների, և օրինախախտի միջև, որի վրա է դրվում համապատասխան զրկանքներ կրելու պարտականությունը և անբարենպաստ հետևանքները կատարած իրավախախտման համար, իրավունքի նորմերում բովանդակվող պահանջները խախտելու համար»:<sup>2</sup>*

«Իրավաբանական պատասխանատվությունը,- գրում են **Վ. Վ. Լազարևը և Վ. Վ. Լիպենը**, - դա իրավական նորմերով նախատեսված իրավունքի սուբյեկտի պարտականությունն է՝ կրել իր համար անբարենպաստ իրավախախտման հետևանքները... դա կատարված իրավախախտման համար պետական հարկադրանքի միջոց է՝ կապված մեղավորի անձնական (կազմակերպական) կամ գույքային բնույթի զրկանքներ կրելու հետ»:<sup>3</sup> **Օ. Է. Լեյստի** կարծիքով «իրավաբանական պատասխա-

նատվություն է անվանվում իրավախախտում կատարած անձի նկատմամբ խախտված նորմի սանկցիայով նախատեսված պետական հարկադրանքի միջոցների կիրառումը՝ դրա համար հաստատված դատավարական կարգով»:<sup>4</sup> **Ա. Բ. Վենգերովը** գալիս է եզրակացության, որ «իրավաբանական պատասխանատվությունը իրավախախտի վրա օրենքով սահմանված, նրա համար անբարենպաստ հետևանքներ ունեցող, պետական մարմինների կողմից կիրառվող ներգործության միջոցներն են,

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս **Родионова Е.В.** Юридическая ответственность как разновидность социальной ответственности: современные проблемы. М., 2011.с

<sup>2</sup> Տե՛ս **Синякин И. Н.** Понятие, признаки и виды юридической ответственности.- Вкн.: Теория государства и права. Курслекций. Подред. **Н. И. Матузова и А. В. Малько**.- М.: «Юрист», 1997, с. 543.

<sup>3</sup> Տե՛ս **Лазарев В. В., Липень С. В.** Теория государства и права. Учебник для вузов.- М.: Издательство «Снарк», 1998, с. 353.

<sup>4</sup> Տե՛ս **Лейст О. Э.** Понятие юридической ответственности.- Вкн.: Общая теория государства и права. Учебник для вузов. Академический курс в 2-х томах. Том 2. Теория права. Под ред. проф. **М. Н. Марченко**.- М.: Издательство «Зерцало», 1998, с. 592.

նույնպես պետության կողմից հաստատված կարգով»:<sup>5</sup> Պետության և իրավունքի տեսության դասագրքում, հրատարակված պրոֆեսորներ **Վ. Մ. Կորեյսկու** և **Վ. Գ. Պերեվալովի** խմբագրությամբ, իրավաբանական պատասխանատվության տակ հասկացվում է «իրավախախտի հանդեպ իրավաբանական նորմերի սանկցիայով նախատեսված պետական հարկադրանքի միջոցների կիրառումն արտահայտվող անձնական, կազմակերպական կամ գույքային բնույթի զրկումների ձևով»:<sup>6</sup> **Վ. Ն. Դմիտրուկը** գրում է. «իրավաբանական պատասխանատվությունը իրավախախտի հատուկ իրավական սուբյեկտիվ պարտականությունն է ճաշակել օրենսդրությամբ նախատեսված նրա համար անբարենպաստ հետևանքները՝ որպես արդյունք նրա կողմից կատարված հակաօրինական մեղավոր արարքի»:<sup>7</sup>

Ինչպես տեսնում ենք, հեղինակների մեծ մասը ընդունում է իրավաբանական պատասխանատվությունը որպես պետական հարկադրանքի միջոց կամ նույնացնում է այն իրավախախտման համար պատժի հետ: Հետազոտողների մյուս խումբը իրավաբանական պատասխանատվությունը դիտարկում է գոյություն ունեցող իրավական կատեգորիաների շրջանակներում: Նրանք այն մեկնաբանում են որպես պահպանական իրավախախտում, որպես յուրահատուկ իրավաբանական պարտականություն, որպես իրավական նորմերի սանկցիաների իրացում և այլն: Վերջին շրջանում ձևավորվել է ևս մեկ ուղղություն՝ իրավաբանական պատասխանատվության՝ որպես ընդհանուր սոցիալա-

կան երևույթի վերլուծությունը: Նրա արդյունք դարձավ իրավաբանական պատասխանատվության պոզիտիվ ըմբռնումը: Առավել ցայտուն այդ ըմբռնումը նկատելի է դառնում պրոֆեսոր **Վ. Վ. Լազարևի** խմբագրությամբ հրատարակված պետության և իրավունքի տեսության վերաբերյալ դասագրքում և պետության ու իրավունքի տեսության վերաբերյալ դասագրքում, որի հեղինակն է հանդիսանում պրոֆեսոր **Վ. Մ. Սիրիխը**: Նշված դասագրքում իրավաբանական պատասխանատվությունը սահմանվում է երկակի, **առաջին**, որպես իրավունքի սուբյեկտի իրավական նորմերով նախատեսված պարտականություն՝ կրելու իր համար անբարենպաստ իրավախախտման հետևանքները: **Երկրորդ**, կատարած իրավախախտման համար որպես պետական հարկադրանքի միջոց, կապված մեղավորի անձնական (կազմակերպական) կամ գույքային բնույթի զրկանքներ կրելու հետ:<sup>8</sup>

Երկրորդ դասագրքում իրավաբանական պատասխանատվությունը ներկայացված է որպես հոգեբանական, գույքային և այլ զրկանքներ, որոնք իրավասու պետական մարմնի որոշմամբ կրում է քաղաքացին կամ այլ անձ իր կատարած իրավախախտման համար:<sup>9</sup>

Իրավախախտման կատարումը մեղավոր անձի համար է բերում իրավաբանական պատասխանատվություն: Իրավաբանական պատասխանատվությունը իրենից ներկայացնում է պետության հակազդում կատարված իրավախախտմանը մեղավոր անձի նկատմամբ պետական հարկադրանքի միջոցներ կիրառելու տեսքով՝ նախա-

<sup>5</sup> Տե՛ս **Венгеров А. Б.** Теория государства и права. Учебник для юридических вузов.- М.: “Новый юрист”, 1998, с. 558.

<sup>6</sup> Տե՛ս **Шабуров А. С.** Теория государства и права. Учебник для вузов. Подред. профессором В. М. Корельского и В. Д. Перевалова.- 2-е изд., измененное, дополненное,- М.: Издательство НОРМА (Издательская группа НОРМА-ИНФРА-М), 2010, с. 435.

<sup>7</sup> Տե՛ս **Дмитрук В. Н.** Теория государства и права. Учебное пособие. -М.: ООО “Новое значение”, 2002, с. 118.

<sup>8</sup> Տե՛ս Теория права и государства. Учебник. Подред. профессора **В. В. Лазарева**.-М.: “Право и закон”, 2012. с. 332.

<sup>9</sup> Տե՛ս **Сырых В. М.** Теория государства и права. Учебник 2-е изд., стереотипное. М., ЗАО Юридический Дом “Юстицинформ”, 2012, с. 353.

տեսված իրավական նորմի սանկցիայով: Սակայն իրավաբանական պատասխանատվությանը դրանով չի սպառվում: Այն նշանակում է նաև կատարված իրավախախտման պատճառով մեղավոր անձի զրկանքներ կրելը իր համար բացասական հետևանքներով՝ անձնական կամ գույքային բնույթի զրկումների կամ սահմանափակումների տեսքով:

Այսպիսով, իրավաբանական պատասխանատվությունը՝ իրավահարաբերություն է, որում պետությունը (ի դեմս իր մարմինների) իրավունք ունի կիրառելու որոշակի պատիժ (տույժ) իրավախախտում կատարած անձի նկատմամբ, իսկ իրավախախտը պարտավոր է կրել զրկանքներ և սահմանափակումներ՝ նախատեսված իր խախտած իրավական նորմի սանկցիայով: Իրավաբանական պատասխանատվությունը անխաբեկորեն կապված է պետության հարկադրական ուժի հետ, կրում է պետական-հարկադիր բնույթ:

Սակայն պետական հարկադրության ոչ ամեն միջոց է հանդիսանում իրավաբանական պատասխանատվություն: Այսպես, հասարակականորեն վտանգավոր արարքներ կատարած անմեղսագիտակների հարկադրական բուժումը, հարկադրական բժշկական հետազոտումը և զննումը, կարանտինը, բռնագրավումը՝ լինելով պետական հարկադրանքի միջոցներ, չեն վերաբերում իրավաբանական պատասխանատվությանը:

Իրավաբանական պատասխանատվության առանձնահատկությունն է նաև իրավախախտումների և այն կատարած անձանց դատապարտումն ու բացասական գնահատական տալը հասարակության կողմից: Այդպիսի ռեակցիայի միասնականության հանդեպ իրավախախտումները պետության և հասարակության կողմից բնութագրական է ժողովրդավարական կարգերի համար:

Քաղաքացիական հասարակության մեջ իրավաբանական պատասխանատվություն-

ըն որպես իր խնդիր ունի հասարակական հարաբերությունների, իրավակարգի, քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի, ձեռնարկությունների և հիմնարկությունների պահպանումը հասարակայնորեն վտանգավոր հակաօրինական ոտնձգություններից: Սակայն դրանով չի սպառվում իրավաբանական պատասխանատվության տոցիալական նշանակությունը: Այն ունի և մեծ դաստիարակչական դեր ինչպես իրավախախտում կատարածների, այնպես էլ այլ անկայուն անձանց նկատմամբ: Հայրենական քրեական իրավունքում կարմիր թելի պես անցնում է այն միտքը, որ պատիժը ոչ միայն խստագույն ձև է հանդիսանում կատարած հանցանքի համար, այլև ունի դատապարտյալներին աշխատանքի նկատմամբ ազնիվ վերաբերմունքի, օրենքների ճշտորեն կատարման, ժողովրդավարական համակեցության կանոնների հանդեպ հարգանքի ոգով դաստիարակելու, վերադաստիարակելու նպատակ: Իրավաբանական պատասխանատվության նպատակը կայանում է նաև ինչպես դատապարտյալներին (մասնավոր նախազգուշացում), այնպես էլ այլ անձանց (ընդհանուր նախազգուշացում)՝ նոր հանցագործությունների կատարումից նախազգուշացնելու մեջ: Դրանում է արտահայտվում քաղաքացիական հասարակության էությունը:<sup>10</sup> Այդ հասարակության մեջ իրավաբանական պատասխանատվությունը վրեժ չէ իրավախախտողին, այլ հետապնդում է ազնիվ նպատակներ՝ ուղղել և վերադաստիարակել նրան, դարձնել նրան օգտակար մարդ:

Միաժամանակ, մարդասիրությունը բուրոլովին էլ չի նշանակում և տանել չի կարողանում լիբերալիզմը վտանգավոր հանցագործների նկատմամբ: Պայքարը մարդկանց վերադաստիարակման համար քաղաքացիական հասարակության մեջ չի կարելի իրականացնել միայն օրենքների պրոպագանդայով, այն հարկավոր է կենսագործել նաև հարկադրանքով, երբ հա-

<sup>10</sup> Մանրամասն այդ մասին տե՛ս. **Коваленко А. И.** Теория государства и права. Вопросы и ответы. Учебное пособие для студентов юридических факультетов и вузов,- М.: «Новый юрист», 1977, с. 94-96; **Назаренко Г. В.** Теория государства и права. Учебное пособие.- М.: Издательство «Ось-89», 1998, с. 43-44; **Гущин В. В.** Теория государства и права. Вопросы и ответы.- М.: «Право и закон'1, 1999, с. 107-108.



մոզելու միջոցները չեն տալիս ցանկալի արդյունքներ: Չէ որ իրավական պետությունը՝ նախևառաջ պետություն է, որին, ինչպես և բոլոր պետություններին, հատուկ է հարկադիր բնույթի միջոցների կիրառումը հասարակական կյանքի այս կամ այն ոլորտում նրա կարգադրագրերը խախտող անձանց նկատմամբ:<sup>11</sup> Կոպտորեն օրենքները խախտող, պետությանը և քաղաքացիներին վնաս հասցնող հանցագործների նկատմամբ հարկադրանքի կիրառումից հրաժարվելը կլիներ կեղծ մարդասիրություն: Իսկական մարդասիրությունը ենթադրում է քաղաքացիական հասարակության և նրա անդամների շահերի ամեն տեսակ պահպանումը:<sup>12</sup>

Իրավաբանական պատասխանատվության ամբողջ սոցիալական կարևորությամբ հանդերձ, չի կարելի այն գերազնահատել հասարակական հարաբերությունները տարբեր ունեցություններից պահպանելու գործում: Իրավախախտումների դեմ պայքարում կարևոր նշանակություն ունեն իրավական պետությամբ ղեկավարվող հենց ժողովրդի հաջողությունները քաղաքացիական հասարակական կարգերի ամրագրման մեջ: Իրավաբանական պատասխանատվությունը այս սոցիալական գործընթացում խաղում է կարևոր, բայց ոչ գլխավոր, այլ օժանդակ դեր:

Իրավաբանական պատասխանատվությունը սոցիալական պատասխանատվության տեսակներից մեկն է հանդիսանում: Կախված սոցիալական գործունեության

ոլորտից ու սոցիալական նորմերի տեսակներից, որոնցով կարգավորվում է մարդկանց վարքը, այդ նորմերի պահանջները խախտելու համար, կարող է առաջանալ իրավաբանական, քաղաքական, բարոյական պատասխանատվություն կամ պատասխանատվություն հասարակական կազմակերպությունների առջև: Դեպի իրավական պետություն մեր հասարակության առաջընթացի, նրա հիմքերի ամրապնդման հետ իրավաբանական պատասխանատվության կիրառման ոլորտը ավելի է օպտիմիզացվելու: Միաժամանակ սոցիալական պատասխանատվության նշանակությունը անընդհատ աճելու է, քանի որ իրավական պետության բարձրագույն նպատակի մեջ չկա կոպիտ բռնություն մարդկանց նկատմամբ:<sup>13</sup> Պատահական չէ, որ նա ծանր հանցագործություն կատարած մարդուն կյանքից զրկելու, այսինքն՝ մահապատժի ենթարկելու հակառակորդ է:

Օրենքով նախատեսված է իրավաբանական պատասխանատվության փոխարինման հնարավորությունը հասարակականով (սոցիալականով): Դա է քաղաքացիական հասարակության հետագա ժողովրդավարացման, պետությունը կառավարելու մեջ հասարակական կազմակերպությունների ու քաղաքացիների դերի բարձրացման կոնկրետ արտահայտություններից մեկը: Այդ սկզբունքը հստակորեն ամրագրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության հոդվ. 27-ում:

<sup>11</sup> Մանրամասն այդ մասին տե՛ս **Алексеев С. С.** Государство и право. Начальный курс. Изданиетретье, переработанное и дополненное.- М.: Издательство “Юридическая литература”, 1996, сс. 8-10, 20-24.

<sup>12</sup> Տե՛ս **Венгеров А. Б.** Теория государства и права. Учебник для юридических вузов.- М.: “Новый юрист”, 1998, сс. 609-610, 616-618.

<sup>13</sup> Մանրամասն այդ մասին տե՛ս **Алексеев С. С.** Философия права,- М.: Издательство НОРМА, 1997, с. 53-63:



# ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 82 2014

## ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ՀՀ նախագահին ներկայացվել է ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագիծը.....2
- Միջազգային կապեր.....2
- ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է մահացած զինծառայողների ծնողներին.....3
- ՀՀ գլխավոր դատախազի հանդիպումը Պռոշյան գյուղում.....3
- Հարուցվել է քրեական գործ.....4
- Համատեղ սեմինար.....5
- ՀՀ դատախազության կոլեգիայի նոր կազմը.....5
- Նշանակումներ ՀՀ դատախազության համակարգում.....6
- Նոր գրքեր.....7

### ՊՐԱԿՏԻԿՈՒՄ

- Վահագն ԱՎԱԳՅԱՆ «ՀՀ քրեական դատավարություն» դասընթացի գործնական պարապմունքների մեթոդը.....8

### ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

- Մանուկ ՍՈՒՐԱԴՅԱՆ Մարդու իրավունքների սահմանափակման համաչափության հիմնախնդիրը.....14

### ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

- Նարինե ՏՈՒՆՅԱՆ Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության քրեաիրավական մեխանիզմների դերը.....22

### ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

- Լիլիթ ՂԱԶԱՆՉՅԱՆ Անձի քաղաքացիության հասկացության, սոցիալական հիմքերի և իրավաբանական բովանդակության առանձնահատկությունները.....26

### ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

- Եղիշե ԲԱԶՈՅԱՆ Պետական վերահսկողության զարգացման փուլերը.....35

### ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

- Նինա ԿՈՒՑԱՆՅԱՆ Ներկայացման իրավունքով ժառանգության իրավական կարգավորումը ՀՀ օրենսդրությամբ.....42

### ՀԱՅ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

- Ռազմիկ ՄԱՐԻՅԱՆ «Կանոնադիրը հայոց» -ը միջնադարյան հայ իրավունքի աղբյուր.....49

### ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՆԽԱՏԵՍՄԱՆ ՀԱՐՑԵՐ

- Ալֆրեդ ՍԱԴՈՅԱՆ Ազգային իրավունքի զարգացման միտումները.....55

### ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

- Արթուր ԽԱՉԱՏՐՅԱՆ Իրավաբանական պատասխանատվությունը որպես սոցիալական պատասխանատվության տեսակ.....60